ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Կրոնի դասընթաց 130

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Կրոնի դասընթաց 130

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի՝ Յուտա

Առաջարկները և ուղղումները, այդ թվում նաև տպագրական սխալների վերաբերյալ,
կարող եք ուղարկել հետևյալ հասցեով՝
CES Curriculum, 50 E. North Temple Street, Room 820, Salt Lake City, UT 84150-2720 USA:
Է-փոստ. ces-manuals@ldschurch.org

© 2005 Բոլոր իրավունքները վերապահված են
Intellectual Reserve, Inc.
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Անգլերենի հաստատումը. 8/03
Թարգմանության հաստատումը. 8/03
Թարգմանության բնագիրը. *Missionary Preparation Teacher Manual*
Armenian

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ուսուցչի ուղեցույցի համար. v

Գլուխ 1 Կանչվում եք ծառայության 1

Գլուխ 2 Անձնական արժանավորություն 11

Գլուխ 3 Սուրբ Հոգու ընկերակցությունը 18

Գլուխ 4 Հոգով ուսուցանելը 25

Գլուխ 5 Սովորում ենք ուսուցանել «Ուսումնասիրելով և նաև հավատքով» մաս Ա 34

Գլուխ 6 Սովորում ենք ուսուցանել «Ուսումնասիրելով և նաև հավատքով» մաս Բ 42

Գլուխ 7 Երկնային Հոր ծրագիրը 47

Գլուխ 8 Մարգարեները և ուրացությունը 53

Գլուխ 9 Վերականգնումը և նոր սուրբ գրությունների երևան գալը 60

Գլուխ 10 Հավատքը և դարձի գալը 68

Գլուխ 11 Ֆիզիկական և էմոցիոնալ նախապատրաստություն 74

Գլուխ 12 Ժամանակի իմաստուն օգտագործումը՝ մարդկանց Քրիստոսի մոտ բերելիս 80

Գլուխ 13 Հետաքրքրվողներին մկրտության և հաստատման պատրաստելը 87

Գլուխ 14 Քրիստոսանման հատկանիշները 92

ՆԱԽԱԲԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հայտարարել է. «Միսիոներական աշխատանքը Եկեղեցու արյունատար անոթն է: Դա Եկեղեցու աճի հիմնական միջոցն է....

Այս աշխատանքն Ինքը՝ Փրկիչն է հանձնարարել, երբ Իր վերջնական համբարձումից առաջ հրահանգեց Առաքյալներին. «Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նրանց մկրտելով Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթեոս 28.19)» («Missionary Service», *First Worldwide Leadership Training Meeting*, Jan. 2003, 17):

Որպես ապագա լիաժամկետ միսիոներների ուսուցիչներ՝ դուք հրաշալի հնարավորություն ունեք ազդելու նրանց վրա՝ լավ իմաստով: Այս դասընթացի ժամանակ քննարկված սկզբունքները կարող են ազդել այն բանի վրա, թե ինչպես կապրեն և կուսուցանեն միսիոներները: Ձեր դասարանում քննարկած և սովորած շատ բաներ կդառնան նրանց միսիայի փորձառության մասը: Միսիոներական ծառայության համար ձեր ուսանողներին արդյունավետ ձևով պատրաստելու ջանքերը դրական ազդեցություն կունենան Եկեղեցու աճի և ամրապնդման գործում:

ԹՏՍ տեսագրած ներկայացումները

1 Այս ուղեցույցի հետ ներառված է ԹՏՍ (գրացուցակային թիվ 54139): Առաջին շարժանկարը նախաբան է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի կողմից (5.31): Ի լրումն՝ կան 22 այլ ներկայացումներ, որոնք մատչելի են որոշակի դասերի ընթացքում օգտագործելու համար: Դասերի մեջ դրանք նշվում են հետևյալ պատկերով 1 և ուսուցման առաջարկության ծանոթագրությամբ: Նախքան ուսուցանելը, առաջարկվում է, որ դուք դիտեք 1-ին շարժանկարը, որը Երեց Սքոթի անձնական ուղերձն է այս դասընթացի ուսուցիչներին:

ԹՏՍ բովանդակությունը

Շարժանկար 1 (5.31): Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, նախաբան:

Շարժանկար 2 (0.42): Երեց Ռասսել Մ. Նելսոն, in Conference Report, ապրիլ 1995: Գլուխ 1. Կանչվում եք ծառայության:

Շարժանկար 3 (5.41): Երեց Ջեյկոբ դե Ջեյգեր, in Conference Report, հոկ. 1976: Գլուխ 1. Կանչվում եք ծառայության:

Շարժանկար 4 (3.38), հատվածներ 1–4. Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 2000, cited in «Missionary Work and the Atonement», *Ensign*, մարտ 2001, 10–11: Գլուխ 1. Կանչվում եք ծառայության:

Շարժանկար 5 (0.54): Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 2002: Գլուխ 2. Անձնական արժանավորություն:

Շարժանկար 6 (0.38): Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, in Conference Report, հոկ. 2000: Գլուխ 2. Անձնական արժանավորություն:

Շարժանկար 7 (0.42): Երեց Բոյդ Ք. Փաքեր, in Conference Report, ապրիլ 1989: Գլուխ 2. Անձնական արժանավորություն:

Շարժանկար 8 (0.32): Երեց Նիլ Ա. Մաքսվել, in Conference Report, մարտ–ապրիլ 2001: Գլուխ 3. Սուրբ Հոգու ընկերակցությունը:

Շարժանկար 9 (6.00): Նախագահ Բրիգամ Յանգ, «A Man without Eloquence»: Գլուխ 4. Հոգով ուսուցանելը:

Շարժանկար 10 (0.53): Երեց Լ. Թոմ Փերի, in Conference Report, հոկ. 2001: Գլուխ 5. Սովորում ենք ուսուցանել «Ուսումնասիրելով և նաև հավատքով» մաս Ա:

Շարժանկար 11 (4.30): «Plan of Salvation»: Գլուխ 7. Երկնային Հոր ծրագիրը:

Շարժանկար 12 (0.33): Երեց Ռասսել Մ. Նելսոն, in Conference Report, հոկ. 1996: Գլուխ 7. Երկնային Հոր ծրագիրը:

Շարժանկար 13 (0.46): Երեց Մերիլ Ջ. Բեյթմեն, in Conference Report, հոկ. 2003: Գլուխ 8. Մարգարեները և ուրացությունը:

Շարժանկար 14 (2.22): Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, in Conference Report, հոկ. 1999: Գլուխ 8. Մարգարեները և ուրացությունը:

Շարժանկար 15 (1.27): Երեց Ռասսել Մ. Նելսոն, սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 2000: Գլուխ 9. Վերականգնումը և նոր սուրբ գրությունների երևան գալը:

Շարժանկար 16 (1.18): Երեց Լ. Թոմ Փերի, in Conference Report, հոկ. 1994: Գլուխ 9. Վերականգնումը և նոր սուրբ գրությունների երևան գալը:

Շարժանկար 17 (1.44): Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, in Conference Report, ապրիլ 2002: Գլուխ 10. Հավատքը և դարձի գալը:

Շարժանկար 18 (0.45): Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 2003: Գլուխ 10. Հավատքը և դարձի գալը:

Շարժանկար 19 (0.42): Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 2003: Գլուխ 10. Հավատքը և դարձի գալը:

Շարժանկար 20 (1.50), հատվածներ 1–2. Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, *First Worldwide Leadership Training Meeting,* Jan. 2003: Գլուխ 11. Ֆիզիկական և էմոցիոնալ նախապատրաստություն:

Շարժանկար 21 (0.50): Ռիչարդ Գ. Սքոթ, in Conference Report, հոկ. 2003: Գլուխ 11. Ֆիզիկական և էմոցիոնալ նախապատրաստություն:

Շարժանկար 22 (1.27): Նախագահ Գորդոն Բ. Հինքլին, portion from video *Gordon B. Hinckley, Man of Integrity, 15th President of the Church* (1995): Գլուխ 11. Ֆիզիկական և էմոցիոնալ նախապատրաստություն:

Շարժանկար 23 (2.14): Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 2000, cited in *Ensign,* մարտ 2001: Գլուխ 14. Քրիստոսանման հատկանիշները

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԲԵՐԵՆ ԴԱՍԱՐԱՆ

Քաջալերեք ուսանողներին յուրաքանչյուր դասին բերել իրենց սուրբ գրությունները և ուսանողի ձեռնարկը: Դուք պետք է քաջալերեք նրանց ձեռք բերել «Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» (2004. գրացուցակային թիվ 36863) գրքույկի մի օրինակ: Այդ գրքույկը պարունակում է այբենական կարգով տրված ավետարանական թեմաներ և աղբյուր կլինի այս դասընթացի համար, ինչպեսև օգնություն կլինի ուսանողների համար իրենց միսիայի ընթացքում և դրանից հետո:

11-րդ գլուխը՝ «Ֆիզիկական և էմոցիոնալ նախապատրաստություն» ուսուցանելիս կարող եք *Missionary Health Guide* (2004, գրացուցակային թիվ 37012) գրքույկի անձնական մի օրինակ նվիրել ձեր ուսանողներին, որպեսզի նրանք որպես աղբյուր, ծանոթանան դրան նախքան իրենց միսիան: Չնայած որ, 11-րդ գլուխն ուսուցանելու համար գրքույկի առկայությունը պարտադիր չէ:

Ուսումնասիրման օրագիր

Առաջարկվում է, որ ուսանողներն սկսեն ուսումնասիրման մի օրագիր վարել: Այս օրագրում նրանք գրի կառնեն այն ներըմբռնումները, որոնք սովորում են ավետարանն ուսանելիս: Շատ միսիաներում միսիոներներին հրահանգում են նման օրագիր վարել, այնպես որ սա ուսանողների համար կարող է դառնալ միսիոներական առաջին գործիքներից մեկը: Կարող են իրենց ուսումնասիրման ձեռնարկը բերել դասարան:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Այս դասընթացի գլխավոր նպատակը պետք է լինի վերականգնված ավետարանն ուսուցանելու հատկանիշներ և հմտություններ զարգացնելը: Դասընթացի ընթացքում ուսանողները կսովորեն ինչպես կազմակերպել և կիսվել ավետարանի սկզբունքներով: Նրանց կքաջալերվի ավելի զգայուն լինել Սուրբ Հոգու ներգործումներին: Ուսանողները բազմաթիվ հնարավորություններ կունենան վարժվել ուսուցանելու ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները դասարանի մյուս անդամներին:

Երբեմն ուսուցիչները մտածում են, որ շատ բան ունեն ուսուցանելու, և չենք ցանկանում դասի ժամանակը տրամադրել ուսանողների մասնակցությանը: Չնայած դրան, մեր միսիոներները պետք է սովորեն ինչպես պարզորեն և արդյունավետ ձևով ուսուցանեն արքայության վարդապետությունը: Որքան շատ նրանք վարժվեն վերականգնված ավետարանի վարդապետություններն ու սկզբունքներն ուսուցանելու գործում, երբ սկսեն իրենց միսիոներական ծառայությունը այնքան նրանք ունակ կդառնան այդ ճշմարտությունները հետաքրքրվողներին սովորեցնելիս: Դասարանում ուսուցանելու փորձառությունը, ինչպեսև «Առաջարկվող հանձնարարություններ ուսանողների համար» բաժնի հանձնարարությունները ձեր ուսանողներին կքաջալերեն ձեռք բերել ուսուցանելու հմտություններ, վստահություն և զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դասի ընթացքում, ժամանակ առ ժամանակ, ուսանելու և ուսուցանելու գործնական վարժությունների համար, կարող եք ուսանողներին զույգերի բաժանել: Զույգերին փոփոխելը հնարավորություն կտա աշխատել տարբեր անհատականությունների հետ:

Կարող եք հոգևոր մտքով դասը սկսելու անհատական կամ խմբակային հանձնարարություն տալ:

ԻՆՉՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՉԷ ԱՅՍ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Առաջարկվում է, որ միսիոներական նախապատրաստության դասերը չանցկացվեն որևէ միսիայի գոտու համաժողովների ձևով:

Միսիոներների նախապատրաստության այս դասընթացն օգնում է ուսանողներին նախապատրաստվել լիաժամկետ միսիոներական ծառայության: Նրա բովանդակությունը գրվել է մանրակրկիտ, որպեսզի նախապատրաստի ապագա միսիոներին հասկանալ այն վարդապետություններն ու սկզբունքները, որոնց վրա կենտրոնացած է միսիոներական ծրագիրը և «Քարոզիր իմ ավետարանը» (2004, գրացուցակային թիվ 36617) գիրքը: «Քարոզիր իմ ավետարանը» գիրքը միսիոներական ծառայության ձեռնարկ է, որը գրվել է որպես միսիոներական ուսուցման հիմնական աղբյուր: Կարող եք ձեռք բերել այդ կարևոր ձեռնարկի մի օրինակը, որպեսզի ծանոթանաք այն նյութին, որը միսիոներներն օգտագործում են իրենց միսիոներական ուսուցման և ծառայության ժամանակ:

Միսիոներական նախապատրաստության ձեռնարկը գրվել է այնպես, որպեսզի համահունչ լինի «Քարոզիր իմ ավետարանը» ձեռնարկի հետ: Այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ միսիա-

յի ծառայության կոչման էությունը հասկանալը, ավետարանն ուսանելու և ուսուցանելու հմտությունները սովորելը, Ուրացությունն ու Վերականգնումը, Սուրբ Հոգու դրսևորումները ճանաչելը և Հոգով ուսուցանելը կիրառելը, վերջին օրերի սուրբ գրությունների կարևորությունը, Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելը և ժամանակն արդյունավետ օգտագործելը ընդգրկված են և՛ այս ձեռնարկում, և՛ «Քարոզիր իմ ավետարանում»: Թեմաները, որոնք պարունակում է «Քարոզիր իմ ավետարանը», որոնք ընդգրկված չեն այս դասընթացում, ներառում են միսիայի լեզուն ուսումնասիրելը, ուխտեր կապելիս և պահելիս մարդկանց օգնելը, մկրտության համար մարդկանց պատրաստելը և անդամների հետ աշխատելը: Ճաշ պատրաստելու և տնային տնտեսության հմտությունները, միսիայի մանրամասն կազմակերությունը և բյուջեով ապրելու սկզբունքները ևս ընդգրկված չեն ուսանողի այս ձեռնարկում: Ուսուցման որոշ ոլորտներ թողնված են, որպեսզի լավագույնս ուսուցանվեն տանը և ընտանիքում, միսիոներական ուսուցման կենտրոններում և միսիայի ժամանակ միսիայի նախագահի կողմից:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ

Մանրամասն ընթերցեք այս դասընթացի բովանդակության էջը դասերի վերնագրերով ու նյութերով: Դա կօգնի ձեզ խուսափել շատ ծավալվելուց այն թեմաների շուրջ, որոնց անդրադառնալու եք դասընթացի հետագա ծրագրում:

ԳԼՈՒԽՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յուրաքանչյուր գլուխ նախատեսված է շաբաթվա ընթացքում երկու կանոնավոր դասաժամի կամ մեկ երեկո համապատասխան դասաժամի համար: Եթե բաժանեք երկու դասի, ինքներդ որոշեք, թե որը հարմար բաժանման կետ կլինի յուրաքանչյուր գլխի համար:

Յուրաքանչյուր գլուխ ունի ներածություն, որը բացահայտում է դասի հիմնական թեման, որին հետևում է հետևյալ կառուցվածքը.

Վարդապետություններ և սկզբունքներ, որոնք պետք է հասկանալ

Այս բաժինը տալիս է ընտրված վարդապետությունների և սկզբունքների տեսություն և առաջարկում է, թե ուսանողները ինչ պետք է հասկանան, ընդունեն և կիրառեն իրենց կյանքում:

Ուսուցանելու առաջարկներ

«Ուսուցանելու առաջարկներ» բաժինը առանձնակի թվարկում է «Վարդապետություններ և սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է հասկանալ» և առաջարկում է մեկ կամ ավելի առաջարկներ, որոնք հնարավոր է դիտել որպես ուսուցանելու հնարավոր մոտեցումներ: Հետևյալ պատկերը նշում է ուսուցման յուրաքանչյուր առաջարկի սկիզբը:

Դուք կարող եք օգտագործել ուսուցանելու առաջարկն այնպես, ինչպես տրված է, կարող եք ձևափոխել այն, կամ կարող եք փոխարինել այլ մեթոդներով: Ուսուցչի ընտրությանն է թողնված նաև այն, թե ուսանողի ձեռնարկի, որ հայտարարությունները կցանկանաք օգտագործել դասի ընթացքում: Ուսուցանելու մեթոդներն ընտրելիս հաշվի առեք այնպիսի գործոններ, ինչպիսիք են Սուրբ Հոգու ազդեցությունը, ձեր անհատականությունն ու ուսուցանելու ոճը, դասարանի անձնավորությունները, դասաժամի տևողությունը, մշակույթային համատեքստը և ուսանողների կարիքները: Ենթադրվում է, որ դուք կանձնավորեք դասը՝ ըստ ձեր փորձառության, վկայության և ներըմբռնումների: Առաջարկվում է, սակայն, որ ուսանողների հետ դուք անդրադառնաք բոլոր ընտրված սկզբունքներին, չնայած որ դասաժամի տևողությունը հնարավոր է բավական չլինի բոլոր գործնական վարժությունների համար: Աղոթքով կազմակերպեք ժամանակի ձեր օգտագործումը:

Առաջարկվող հանձնարարություններ ուսանողների համար

Առաջարկվող հանձնարարությունները նախատեսված են ուսանողներին օգնելու դասի ժամանակ ուսուցանվող վարդապետությունները, սկզբունքները և մեթոդները գործածելու և կիրառելու համար: Այս հանձնարարությունները տպված են նաև ուսանողի ձեռնարկում «Առաջարկվող հանձնարարություններ» վերնագրի ներքո:

ԱՎԵԼԻ ԼԱՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԿԱՐԻՔ

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը պահանջել է միսիոներների ավելի լավ նախապատրաստություն. «Միսիոներների մեջ տարբերություն կա: Ոմանք Տիրոջը ծառայելու իրենց միսիայի առաջին ամսին ավելի լավ են նախապատրաստված, քան մի քանիսը քսանչորս ամիս ծառայելուց հետո:

Միսիայի ծառայության համար մենք ցանկանում ենք այնպիսի երիտասարդներ, որոնք «պատրաստ» են գործի անցնելու, որոնք արդար և մաքուր ապրելակերպից սերված հավատք ունեն, այնպես որ կարող են փառահեղ և արդյունավետ միսիա ծառայել» (in Conference Report, ապրիլ 1986, 59; կամ *Ensign*, մայիս 1986, 45):

Այս դասընթացն ուսուցանելու միջոցով դուք մեծ հնարավորություն կունենաք օգնելու, որպեսզի այս հանձնարարությունն ի կատար ածվի:

Գլուխ 1

ԿԱՆՉՎՈՒՄ ԵՔ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Մեր Երկնային Հոր փրկության ծրագիրն Իր բոլոր զավակներին հնարավորություն է տալիս լսել և ընդունել ավետարանը: Ձեր ուսանողները նախապատրաստվում են օգնել վերականգնված ավետարանի ուղերձը տանել ողջ աշխարհին: Դուք հնարավորություն ունեք օժանդակել նրանց նախապատրաստությանը՝ նրանց մեջ ներարկելով ավելի մեծ հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս և խանդավառություն աշխատանքի հանդեպ, և նրանց հնարավորություններ տալով սովորել ավետարանի սկզբունքները և վարժվել՝ ուսուցանելով դրանք մեկմեկու: Այս գլուխը կենտրոնանում է Տիրոջ ճշմարիտ Եկեղեցում որպես միսիոներ կանչվելու կոչման վրա: Ձեր ուսանողներին քաջալերեք ընդունել Տիրոջ կոչումը և ծառայել Նրան ողջ «սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՈՒ 4.2):

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Եկեղեցու անդամները պարտականություն և արտոնություն ունեն՝ կիսվելու վերականգնված ավետարանով:
- Տերն ասել է. «Արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» (ՎԱՈ 4.4):
- Միսիոներներն օգնում են Իսրայելի հավաքման գործում:
- Միսիոներական աշխատանքի կիզակետը մարդկանց Քրիստոսի մոտ հրավիրելն է:
- Լիաժամկետ միսիոների կոչումը գալիս է Տիրոջ կողմից՝ Նրա լիազորված ծառաների միջոցով:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Դիտողություն. Առաջին դասի ժամանակ ուսանողներին ժամանակ տվեք ներկայացնելու իրենց: Քաջալերեք նրանց՝ ասելու իրենց անունը, բացատրելու, թե ինչն է իրենց խթանել, որ անցնեն այս դասընթացը, և նշել, թե արդյոք ընտանիքի անդամներից որևէ մեկը ներկայումս ծառայում է միսիայում և թե որտեղ է ծառայում: Եթե ձեր դասարանը թվով փոքր է, դուք կարող եք խնդրել ուսանողներին անվանել մեկ օրհնություն, որը գալիս է միսիոներական ծառայությունից (փորձեք օգնել, որ պատասխանները չկրկնվեն):

Կարող եք կա՛մ սկսել, կա՛մ էլ վերջացնել յուրաքանչյուր դասը՝ ուսանողների հետ երգելով միսիոներական օրհներգեր, ինչպիսիք են՝ «Called to Serve» (*Hymns,* no. 249), "Behold! A Royal Army» (*Hymns,* no. 251), «Hark, All Ye Nations!» (*Hymns,* no. 264), «Կգնամ ուր կուզես դու, Տեր» («Հիմներ և մանկական երգեր» էջ 46), և «Ye Elders of Israel» (*Hymns,* no. 319): Սա նրանց կօգնի ծանոթանալ միսիոներական օրհներգերին:

Եկեղեցու անդամները պարտականություն և արտոնություն ունեն՝ կիսվելու վերականգնված ավետարանով:

Հրավիրեք ուսանողներին անվանել սուրբ գրությունների և վերջին օրերի մի քանի մեծ միսիոներների անուններ: Գրեք անունները գրատախտակին: Թող յուրաքանչյուր ուսանող համառոտ բացատրի, թե ինչու է իր մոտ տպավորվել իր անվանած հենց այդ միսիոների անունը:

Անունների թվում ավելացրեք կամ ընդգծեք Պողոս, Ալմա, Մոսիայի որդիներ և Ահարոն անունները: Զույգերի բաժանեք ուսանողներին և թող յուրաքանչյուր զույգ վերցնի հետևյալ սուրբ գրություններից մեկը կամ մի քանիսը և վերլուծի, թե ինչն է, որ մեծ է դարձրել այդ միսիոներին կամ միսիոներներին: (Եթե զգում եք, որ ուսանողները տեղյակ են տվյալ սուրբ գրությունների բովանդակությանը, կարող եք ավելի քիչ հատվածներ կարդալ):

Պողոս. Կարդացեք Բ Կորնթացիս 11.23–28:

Ալմա. Կարդացեք Ալմա 8.8–21:

Ամուղեկ. Կարդացեք Ալմա 8.18–32:

Մոսիայի որդիներ. Կարդացեք Ալմա 17.1–12:

Ահարոն. Կարդացեք Ալմա 22.1–23:

Դրանից հետո բաժանեք դասարանը չորս խմբի: Թող յուրաքանչյուր խումբ կարդա հետևյալ միսիոներներից որևէ մեկի մասին (տես ուսանողների ձեռնարկ՝ «Միսիոներական պատմություններ», 6–10 էջեր). Սամուել Հ. Սմիթ, Հեբեր Չ. Քիմբալ, Վիլֆորդ Վուդրուֆ և Դեն Ջոնս: Այնուհետև հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել, թե ինչ տպավորիչ բան կար այդ պատմության մեջ և թե ինչպես այն կարող է օգնել իրենց միսիայի ծառայության ընդացքում:

Հրավիրեք ուսանողներին պատասխանել հետևյալ հարցերին.

- Ի՞նչ կապ կա Ղուկաս 18.29–30 հատվածներում Փրկչի ուսմունքների և այն միսիոներների որոշ հատկանիշների մեջ, ում մասին մենք քննարկեցինք:
- Ինչո՞ւ են միսիոներներն այդքան զոհաբերությունների գնում այն մարդկանց համար, ում իրենք գրեթե չեն ճանաչում:

Թող ուսանողները կարդան Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հայտարարությունը ուսանողների ձեռնարկում (էջ 2):

- Նախագահ Հինքլին ավետարանի վերականգնման ո՞ր տարրերն է մեզ հորդորում ուսուցանել:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է այդ տարրերից յուրաքանչյուրը կարևոր, որ մարդիկ հասկանան:

Գրատախտակի վրա անկանոն ցրված գրեք հետևյալ բառերը՝ *մկրտություն, ցերեկույթներ, Սուրբ Հոգու պարգև, սպորտային միջոցառումներ, դատաստան, պարեր, ապաշխարություն, Քավություն, սրբագործում, ուտելիքի մառան, Երկնային Հոր կամքը կատարել, հավատք առ Հիսուս Քրիստոս, համբերել մինչև վերջ, հարություն*: Գրատախտակի մեջտեղում թավ տառերով գրեք *ավետարան* բառը:

Թող ուսանողները կարդան և՛ 3 Նեփի 27.13–22, և՛ Վարդապետություն և Ուխտեր 39.6, և որոշեն, թե գրատախտակի վրա գրված բառերից որոնք են համապատասխանում նրան,

թե ինչպես է Փրկիչը նկարագրում ավետարանը: Թող ուսանողները շրջանի մեջ վերցնեն այդ բառերը կամ ջնջեն մյուսները, որոնք նշված չեն սուրբ գրություններում: Առաջարկեք, որ մինչ մնացած բառերը նույնպես կարևոր են, այնուամենայնիվ, Փրկչի կողմից ուսուցանված ավետարանի տարրերը միսիոներական ուղերձի հիմքն են: Հրավիրեք ուսանողներին դասարանի համար կարդալ *ավետարան* բառի ուսանողների ձեռնարկում տրված բացատրությունը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 2): Խնդրեք ուսանողներին լսել, թե ինչ բառեր կամ արտահայտություններ պետք է ավելացնել գրատախտակի բառերին:

Թող ուսանողները բաժանվեն զույգերի և վարժվեն, թե ինչպես կարող են համառոտ միմյանց բացատրել, ինչպես ոչ անդամներին կբացատրեին, թե ինչ է նշանակում ավետարան բառը:

Դասարանով քննարկեք.

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր, որ միսիոները հասկանա *ավետարան* բառի իմաստը:
- Ինչո՞վ է *ավետարան* բառը տարբերվում *եկեղեցի* բառից:

Թող ուսանողները կարդան Աբրահամ 2.9–11 հատվածները: Դասարանով քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ են Եկեղեցու անդամներից շատերը համարվում Աբրահամի հետնորդներ:
- Ինչպե՞ս ենք իմանում, որ մենք Աբրահամի սերունդ ենք (Եթե անհրաժեշտ լինի, կարող եք հուշել, որ մեր հայրապետական օրհնության մեջ դա նշվում է: Վարդապետություն և Ուխտեր 86.8–10 հատվածներում նույնպես նշվում է քահանայության և ազգատոհմի միջև եղած կապը): Կարող եք կիսվել Աբրահամի ուխտի մասին Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությամբ.

  «Ինչպես մեր հայրապետները հնում, մենք ստացել ենք քահանայությունը և հավիտենական ավետարանը: Աբրահամը, Իսահակը և Հակոբը մեր նախնիներն են: Մենք Իսրայելի մասն ենք: Մենք իրավունք ունենք ստանալու ավետարանը, քահանայության օրհնությունները և հավերժական կյանք: Երկրի ազգերը օրհնվելու են մեր ջանքերով և մեր հետնորդների ծառայությամբ: Աբրահամի անմիջական սերունդը և որդեգրությամբ նրա ընտանիքում հավաքվող բոլոր մարդիկ ստանում են այդ խոստացված օրհնությունները, որոնց նախապայմանն է ընդունել Տիրոջը և հնազանդվել նրա պատվիրաններին» (in «Conference Report», ապրիլ 1995, 42–43 կամ «Ensign», մայիս 1995, 33):
- Ինչ եք կարծում, ո՞րն է Աբրահամ 2.9–11 հատվածների առանցքային ուղերձը մեզ համար:
- Լինելով այդ ազգատոհմից, ո՞րն է ձեր պատասխանատվությունը (Օրհնել մարդկանց, որպեսզի վայելեն վերականգնված ավետարանի օրհնությունները):

2 Ուսանողների հետ կարդացեք Աբրահամի ուխտի վերաբերյալ Երեց Ռասսել Մ. Նելսոնի հայտարարությունները ուսանողների ձեռնարկում (էջ 2) կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ շարժանկար 2 (0.42) տեսանյութը:

3 Նախքան դասը կարդացեք և ծանոթացեք հետևյալ պատմությանը կամ ընտրեք ցուցադրել ԹՏՍ շարժանկար 3 (5.41): Նախապատրաստեք ձեր խոսքերով ուսանողներին ներկայացնել այս պատմության հակիրճ տարբերակը: Պատմությունը եզրափակեք շեշտելով, որ *յուրաքանչյուր* մարդ մեր եղբայրը կամ քույրն է, և որ մենք պետք է ուրիշներին դիտենք որպես Աստծո զավակներ, որպեսզի բավականաչափ սիրենք նրանց, որպեսզի նրանց հետ կիսվենք վերականգնված ավետարանի ուղերձով:

Յոթանասունի նախկին անդամ՝ Երեց Ջեյկոբ դե Ջեյգերը, որը նորադարձ էր Եկեղեցում, հետևյալ պատմությունն է օգտագործել՝ որպես առակ, բոլոր միսիոներների համար, ովքեր կանչվել են զահաբերություն անելու Երկնային Հոր զավակների փրկության համար.

«Ես բազմաթիվ ուշագրավ պատմություններ եմ լսել հրաշալի տղամարդկանց ու կանանց մասին, ովքեր բերվել են Եկեղեցի, որ ցանկություն ունեմ ասելու. «Երբեք չգիտեք, թե ում կարող է դուք փրկեք:

Բացատրելու համար, թե ինչ նկատի ունեմ, ես կցանկանայի վերադառնալ իմ հայրենի Հոլանդիա, որտեղ վեց սերունդ շարունակ ապրել են իմ նախնիները՝ ծովափնյա Շեվենինգեն կոչվող գյուղում: Նրանք ձկնորս էին կամ ունեին ձկնորսության հետ առնչվող այլ մասնագիտություններ՝ ձկնորսական նավեր կառուցողներ, առագաստներ պատրաստողներ կամ ուռկաններ վերանորոգողներ: Նրանցից շատերը մասնակցում էին նաև փրկարարական կամավորական, բայց վտանգավոր գործին: Նրանք քաջասիրտ, փորձառու տղամարդիկ էին, որոնք միշտ պատրաստ էին թիավարել փրկարարական նավակները՝ որպես փրկարար առաքելության կամավորներ: Արևմուտքից փչող յուրաքանչյուր փոթորիկի հետ ձկնորսական նավակները դժվարությունների էին հանդիպում և բազմաթիվ անգամ նավաստիները ստիպված էին կառչել իրենց նավակոծված նավի բեկորներից, անելանելի պայքար մղելով, որ չսուզվեն ծովում, որն անխուսափելի էր: Տարի առ տարի ծովը զոհեր էր պահանջում:

Մի անգամ սաստիկ փոթորիկի ժամանակ նավը վտանգի էր ենթարկվել և փրկարար մի նավակ դուրս գնաց, որ փրկի ձկնորսական նավի նավակազմին: Ալիքները հսկայական էին և յուրաքանչյուր թիավար իր ողջ ուժն ու կարողությունը պետք է ներդներ, որպեսզի գիշերային մռայլ մթության և հորդառատ անձրևի մեջ հասնեին դժբախտ ծովագնացներին:

Ուղևորությունը դեպի խորտակված նավը հաջող էր, սակայն փրկարար նավակը փոքր էր ողջ նավակազմին մեկ առաքելությամբ փրկելու համար: Տղամարդկանցից մեկը ստիպված էր մնալ նավեզրին, պարզապես, որովհետև նրա համար տեղ չկար. մեծ վտանգ կար, որ փրկարար նավակը ևս կխորտակվեր: Երբ փրկարարները վերադարձան հարյուրավոր մարդիկ ջահերով սպասում էին նրանց, մռայլ գիշերով լույս տալով նրանց: Սակայն նույն նավակազմը չէր կարող գնալ երկրորդ առաքելության, որովհետև նրանք ուժասպառ էին եղել փոթորիկի, ալիքների և տեղատարափ անձրևի դեմ պայքարելուց:

Տեղի ծովափնյա ժամապահը կամավորներ խնդրեց, որ գնան երկրորդ առաքելության: Առանց երկմտելու ընթառաջ եկած տղամարդկանց թվում էր Հանս անունով տասնինը տարեկան մի երիտասարդ: Իր մոր հետ միասին նա եկել էր ծովափ՝ իր մոմլաթե շորերով, որպեսզի հետևի փրկարար գործողությանը:

Երբ Հանսն առաջ գնաց, նրա մայրը խուճապահար ասաց. «Հանս, խնդրո՜ւմ եմ մի՛ գնա: Քո հայրը մահացել է ծովում, երբ դու չորս տարեկան էիր, իսկ Պիտը՝ ավագ եղբայրդ, երեք ամիս է ծովում անհետ կորած է: Դու միակ որդին ես, որ մնացել ես ինձ»:

Սակայն Հանսն ասաց. «Մայրի՛կ, ես զգում եմ, որ պետք է գնամ: Սա իմ պարտքն է»: Եվ մայրը սկսեց հեկեկալ և ծովափով հետ ու առաջ քայլել, մինչ Հանսը նստեց նավակը, վերցրեց թիակները և անհետացավ մթության մեջ:

Հսկա ալիքներով ծովի հետ մեկ ժամից ավել տևած պայքարից հետո (Հանսի մայրիկի համար դա հավերժություն էր), փրկարար նավակը կրկին հայտնվեց տեսադաշտում: Երբ նավակը բավականաչափ մոտեցել էր, որ ծովափնյա ժամապահների հրամանատարը կարող էր բղավելով ձայն տալ նրանց, նա ձեռքի ափերը դրեց բերանի շուրջ և բարձր ձայնով գոչեց փոթորկի միջով. «Դուք փրկեցի՞ք նրան»:

Ապա ջահերով լուսավորող ժողովուրդը տեսավ, ինչպես Հանսը բարձրացավ նավակի նստարանին և իր ողջ ձայնով գոչեց. «Այո՜: Եվ ասեք մայրիկին, որ դա իմ եղբայր Պիտն է»:

Դուք երբեք չգիտեք, թե ում կփրկեք: Դա կարող է լինել մեկը, որը կյանքի կոհակների վրա տարուբերվում է փոթորկից կամ կարող է լինել նույնիսկ մեկը, որը երկար ժամանակ կորած է կյանքի ծովում: Եվ երբ ինչ-որ մեկը փրկվում է ձեր փրկարար առաքելության շնորհիվ, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ Հոր արքայությունում» (in Conference Report, հոկ. 1976, 80–81; or *Ensign*, Նոյ. 1976, 56–57):

Թող ուսանողները կարդան Վարդապետություն և Ուխտեր 123.12–17 հատվածները և այս հատվածներից սկզբունքներ առաջարկեն, որոնք վերաբերում են միսիոներական աշխատանքին: Ողջունեք յուրաքանչյուրի պատասխանը և քաջալերեք լրացուցիչ մտքեր ավելացնել:

Տերն ասել է. «Արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» (ՎԱՈ 4.4):

Թող ուսանողները կարդան Վարդապետություն և Ուխտեր 11.3:

- Ի՞նչ է նշանակում «արտը սպիտակել է» արտահայտությունը (տես այս բաժնի նախաբանը ուսանողների ձեռնարկում, էջ 3):

Թող ուսանողներից մեկը կարդա Վարդապետություն և Ուխտեր 33.7–9: Բացատրեք, որ *որաները* հացահատիկի ցողունների կապն է: Հնում մշակները հացահատիկը հնձում էին ցողունից, կապում էին որաներով և տեղափոխում էին ամբար կամ պահեստ: «Որաները» անպայման չէ, որ նշանակեն միսիայի ընթացքում ունեցած մկրտությունների թիվը: Այն կարող է նաև վերաբերել Տիրոջ աշխատանքի ընթացքում միսիոների ստացած օրհնություններին:

- Ի՞նչ են այս հատվածները նկարագրում, ինչպե՞ս պետք է աշխատեն միսիոներները:
- Ձեր կարծիքով ի՞նչ պետք է դուք անեք, որպեսզի արժանի լինեք այս խոստմանը. «Բացեք ձեր բերանը և այն պիտի լցվի» (ՎԱՈՒ 33.8, տես նաև ՎԱՈՒ 84.85):
- Ինչպե՞ս է այս պատվիրանին հնազանդվելը ցույց տալիս միսիոների հավատքը:
- Ինչպե՞ս կարող է ձգտումը դառնալ «ճիշտ ինչպես Նեփիին՝ հնում» ազդել նրա վրա, թե ինչպես եք վերաբերվում միսիոներական աշխատանքին:
- Ի՞նչ կարող եք փոխել *ներկայումս՝* միսիայից առաջ, որպեսզի ավելի շատ նմանվեք Նեփիին:

Միսիոներներն օգնում են Իսրայելի հավաքման գործում:

Գրատախտակին գծեք հետևել տոհմաբանական աղյուսակը.

Աբրահամ

▼

Իսահակ

▼

Հակոբ (Իսրայել)

▼

| | | | | | | | | | | | |

(Իսրայելի տասներկու ցեղերը)

- Համաձայն 1 Նեփի 22.3–4 հատվածների՝ որտե՞ղ են Աբրահամի, Իսահակի և Հակոբի (Իսրայելի) հետնորդներն այսօր:
- Կիրթլենդի տաճարի նվիրագործման աղոթքում (ՎԼՈՒ 109) Մարգարե Ջոզեֆ Սմիթն աղոթել է, որ Վերականգնման միջոցով «Իսրայելի ողջ ցրված մնացորդը» սկսի հավաքվել: Ի՞նչ է ասում Վարդապետություն և Ուխտեր 109.67 հատվածը, դեպի ի՞նչը պետք է նրանք վերակագնվեն (դեպի ճշմարտության իմացությունը և Մեսիայի հանդեպ հավատքը):
- Ի՞նչ դեր են կատարում միսիոներները Իսրայելի հավաքման գործում (տես ՎԼՈՒ 29.7):

Ուսանողների հետ կարդացեք Նախագահ Սթիվեն Վ. Քիմբալի հայտարարությունն ուսանողների ձեռնարկում (էջ 4) և թող ուսանողները փնտրեն և քննարկեն, թե ինչն է հետաքրքրվողին արժանի դարձնում համարվելու Իսրայելի հավաքման մասը: Ընդգծեք, որ միսիոներների նպատակն է հրավիրել մարդկանց գալու Քրիստոսի մոտ՝ ունենալով հավատք, ապաշխարելով, մկրտվելով, Տիրոջ ճշմարիտ Եկեղեցու անդամ հաստատվելով և մինչև վերջ համբերելով:

Միսիոներական աշխատանքի կիզակետը մարդկանց Քրիստոսի մոտ հրավիրելն է:

Ուշադրություն հրավիրեք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ՝ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հայտարարության հետևյալ նախադասության վրա (տես ուսանողի ձեռնարկ, էջ 5).

> «Իմ խոսքերից և ուսմունքներից բացի, իմ կյանքը պետք է լինի Հիսուսի վկայության մասը» (տես «Conference Report», հոկ. 1994, 39–40 կամ «Ensign», նոյ. 1994, 31):

- Որպես ապագա միսիոներ՝ ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար Երեց Հոլլանդի հայտարարությունը.

Թող դասարանի անդամները բաժանվեն զույգերի և յուրաքանչյուրը հերթով հարցնի և պատասխանի հետևյալ հարցերին: (Չնայած այս հարցերը կարող են շատ հասարակ թվալ, դրանք ուսանողներին հնարավորություն են տալիս արտահայտել իրենց հավատքը և վկայությունն այն մակարդակով, որի փորձառությունը պետք կլինի միսիայի ժամանակ):

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ լինելը ձեզ մոտեցրել Հիսուս Քրիստոսին:
- Ինչպե՞ս է Քրիստոսին մոտենալն ազդել կամ փոխել ձեր կյանքը:

4 Ձեր ընտրությամբ՝ կարդացեք Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ փոքրաառությունը կամ ցույց տվեք ԹՏՍ շարժանկար 4, հատված 1 (0.18):

«Գոտու համաժողովների ժամանակ, որոնք մեզ՝ Բարձրագույն Իշխանություններիս համար երիտասարդ երեցներին և քույրերին ուսուցանելու ամենահիանալի հնարավորություններն են, ես հարցրել եմ միսիոներներին, թե ինչ են նրանք ցանկանում, որ իրենց հետաքրքրվողներն անեն իրենց զրույցների արդյունքում»:

- Ինչպե՞ս դուք կպատասխանեիք Երեց Հոլլանդի հարցին:

4 Ձեր ընտրությամբ՝ շարունակեք կարդալ Երեց Հոլլանդի պատմությունը, կամ ցույց տվեք ԹՏՍ շարժանկար 4, հատված 2 (1.06):

– «Մկրտվել»,– գրեթե միաձայն գոչում են միսիոներները:

– Այո,– ասում եմ ես,– մենք ցանկանում ենք, որ նրանք մկրտվեն, բայց ի՞նչ պետք է նախորդի դրան:

Այժմ նրանք մի փոքր զգուշանում են: –Ահա՛,– մտածում են նրանք: *Սա ստուգարք է: Սա ստուգարք է....* – Կարդալ Մորմոնի Գիրքը,– գոչում է ինչ-որ մեկը:– Աղոթել– մի երեց բղավում է ետևից:– Եկեղեցի հաճախել,– պնդում է մի քույր առաջին շարքից:– Անցնել բոլոր զրույցները,– առաջարկում է մեկ ուրիշը:

....– ասում եմ ես,– բայց ուրիշ ի՞նչ եք ուզում, որ ձեր հետաքրքրվողներն անեն:

– Մկրտվել,– երկրորդ անգամ են նրանք կրկնում միաձայն:

– Երեցներ,– աղերսում եմ ես,– դուք արդեն ինձ ասել եք մկրտության մասին, իսկ ես դեռ հարցնում եմ:

Այժմ արդեն նրանք շփոթված են....– Պահել Իմաստության խոսքը,– ասում է ինչ-որ մեկը:– Տասանորդ վճարել,– բարձրաձայնում է մեկ ուրիշը: Եվ այդպես շարունակ:

- Ձեր կարծիքով ի՞նչ են բաց թողել միսիոներները:

4 Ձեր ընտրությամբ՝ շարունակեք կարդալ կամ ցույց տվեք ԹՏՍ շարժանկար 4, հատված 3 (0.50):

«Պետք է ասեմ, որ գրեթե երբեք միսիոներները չեն կռահում երկու հիմնարար բաները, որ ցանկանում ենք հետաքրքրվողներն անեն նախքան իրենց մկրտությունը՝ հավատք ունենալ առ Տեր Հիսուս Քրիստոս և իրենց մեղքերից ապաշխարել: Այդուհանդերձ, «մենք հավատում ենք, որ ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողություններն են. առաջին՝ Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս, երկրորդ՝ Ապաշխարություն. [դրանից հետո] երրորդ՝ ընկղմամբ մկրտություն *մեղքերի թողության համար.* չորրորդ՝ Ձեռնադրում Սուրբ Հոգու պարգևի համար» [Հավատո Հանգանակ 1.4, շեշտադրումն ավելացված է]»:

- Ինչո՞ւ է հավատքն առ Հիսուս Քրիստոս և ապաշխարությունը կենսական նորադարձի համար:

4 Ավարտեք Երեց Հոլլանդի պատմությունը կարդալը կամ, հնարավոր է, ընտրեք ցուցադրել այն՝ ԹՏՍ շարժանկար 4, հատված 4 (1.20):

> «Նորադարձ անդամի նոր կյանքը պետք է կառուցվի առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի և Նրա քավիչ զոհաբերության հիմքի վրա՝ համազվածության, որ Նա իրապես Աստծո Որդին է, որ նա ապրում է այս պահին, որ Նա իսկապես ոչխարների գավիթի դուռն է, որ միայն Նա է կրում մեր փրկության և վեհացման բանալիները: Այդ հավատքին պետք է հետևի ճշմարիտ ապաշխարությունը՝ ապաշխարություն, որը ցույց է տալիս, մաքուր, նորոգված և անխաթար լինելու մեր ցանկությունը, ապաշխարություն, որը մեզ թույլ է տալիս հայց ներկայացնել Քավության բոլոր օրհնությունների համար:
>
> *Դրանից հետո գալիս է մկրտությունը՝ մեղքերի թողության համար: Այո, մկրտությունը նաև Եկեղեցու անդամության համար է, սակայն դա այն չէ, ինչի վրա շեշտ էր դնում Մարգարե Ջոզեֆ Սմիթը հավատոր հանգանակում: Նա շեշտել է, որ այն մեղքերի թողության համար է՝ ինձ, ձեզ և միսիոներներին կենտրոնացնելով կրկին Քավության վրա, փրկության վրա՝ Քրիստոսի մեզ շնորհած պարգևի վրա: Սա նորադարձին շրջում է դեպի «բարի լուրի» օրհնությունները» («Missionary Work and the Atonement»,* Ensign, *մարտ 2001, 10–11):*

- Համաձայն 2 Նեփի 2.6–9 հատվածների, ինչպիսի՞ լուր պետք է հասցնել բոլոր մարդկանց:
- Այս սուրբ գրությունը հասկանալուց հետո՝ որպես միսիոներ, ինչը պիտի լինի ձեր նպատակակետը:

Լիաժամկետ միսիոների կոչումը գալիս է Տիրոջ կողմից՝ Նրա լիազորված ծառաների միջոցով:

Ուսանողներին ցույց տվեք հետևյալ վկայականը: Եթե հնարավոր է, կարող եք ավելի մեծ մի պատճե պատրաստել, որ ուսանողներին հեշտ լինի տեսնել, կամ տպեք թափանցիկ թղթի վրա, լուսարձակի միջոցով պատկերը պատի վրա ցույց տալու համար:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋՅՈՒ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Սույն վկայականը երաշխավորում է, որ կրողը՝ երց

,

Սույր Այ Միրի, Յուտա

Նմուշ

- Որո՞նք են պաշտոնական քայլերը, որի միջով մարդ պետք է անցնի, նախքան նա կդառնա լիաժամկետ միսիոներ: (Երաշխավորագիրը լրացնել, քահանայության մի քանի հարցազրույց անցնել, միսիայի կոչումը ստանալ, սպասադրվել ծառայության):
- Ձեր համար ի՞նչ է նշանակում ի սպաս դրվել որպես Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչ:

Թող ուսանողներից մեկը կարդա Վարդապետություն և Ուխտեր 64.29 հատվածը:

- Տիրոջ հանձնարարության տակ լինելու գիտելիքն ինչպե՞ս է փոխում ձեր վարքը, ձեր ապրելակերպը և ձեր գործերը:
- Համաձայն Վարդապետություն և Ուխտեր 64.29 հատվածի, ո՞րն է Տիրոջ գործակալը լինելու հաջողության բանալին:

Կիսվեք հետևյալ հավանական վարկածով կամ ինքներդ նման մի օրինակ մտածեք, որը կարող է ցույց տալ Տիրոջ ձեռքը յուրաքանչյուր միսիոների կոչման մեջ.

Մեծ խանդավառությամբ Ռոբերտոն նստեց, որ բացի միսիայի կոչման ծրարը: Վերջին մի քանի տարին նա տրամադրել էր, որպեսզի օտար լեզու սովորի: Նա համոզված էր, որ կոչում կստանա ծառայելու այնտեղ, որտեղ կկարողանա օգտագործել այդ պահանջվող հմտությունը, որպեսզի ուսուցանի վերականգնված ավետարանը: Երբ նա կարդաց նամակը և տեսավ իր նշանակված միսիան, նրա սիրտը ընկճվեց: Նա ոչ միայն կանչվել էր ծառայելու իր երկրում, այլ նաև մի միսիայում, որտեղ օգտագործելու էր մայրենի լեզուն: «Ինչպե՞ս է հնարավոր, որ այս կոչումը Տիրոջից լինի», մտածեց նա: «Անկասկած, Տերը գիտի, որ ես օտար լեզվով խոսել գիտեմ»:

- Եթե այս տղան գար ձեզ մոտ խորհրդակցելու, արտահայտելով իր կասկածներն այն մասին, որ նա կանչվել է ոգեշնչմամբ, ի՞նչ կասեիք դուք:
- Իրենց կոչման հետ կապված ուրիշ ի՞նչ տիպի փորձություններ կարող են ունենալ միսիոներները, որը կարող է նրանց համար մտահոգություն դառնալ:

Հնարավոր է, դուք ցանկանաք կիսվել Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ հայտարարությամբ, որը Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահն է:

> «Առաջին մեծ փորձառությունը, որ պետք է սովորեք, այն է, որ սա *ձեր* միսիան չէ. սա Տիրոջ միսիան է: Գիտեմ, որ ասում ենք. «Ես գնում եմ իմ միսիան ծառայելու», սակայն պետք է ասել ոչ թե *իմ* միսիան, այլ *Նրա* միսիան.... Աղոթքի միջոցով, փորձությունների միջոցով, աշխատանքի միջոցով, ուսումնասիրման միջոցով և դժվարությունների ու հիասթափությունների միջոցով դուք գիտակցում եք, որ դա Տիրոջ միսիան է: Դուք կգաք այդ գիտակցությանը» («Some Things Every Missionary Should Know» [սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 26, 2002], 2):

Հարցրեք, թե արդյոք ուսանողներից որևէ մեկը կարո՞ղ է անգիր ասել հավատո հինգերորդ հանգանակը (եթե ոչ, թող ուսանողը կարդա այն):

- Ինչպե՞ս է այս հավատո հանգանակը կապված միսիոներական կոչման հետ:
- Ի՞նչ ձևերով կարող է ձեր ծառայության վրա ազդել այն գիտելիքը, որ ձեր կոչումը բառացիորեն գալիս է Տիրոջ կողմից:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Սկսեք ուսումնասիրման օրագիր վարել: Սա մի տետր է, որում կգրանցեք այն ներըմբռնումները, որոնք սովորում եք ավետարանն ուսանելիս: Շատ միսիաներում միսիոներներին հրահանգում են նման օրագիր վարել, այնպես որ սա ձեզ համար կլինի միսիոներական առաջին գործիքներից մեկը:
- Մտապահեք Վարդապետություն և Ուխտեր 4 բաժինը և պատրաստ եղեք այն անգիր ասել հաջորդ դասի հոգևոր մտքի ժամանակ (կամ հնարավոր է դուք այն անգիր ասեք դասարանի հետ միասին):
- Մտապահեք (կամ վերհիշեք) Հավատո Հանգանակն ամբողջությամբ:
- Խոսեք վերջերս վերադարձած մի միսիոների հետ միսիայի արժեքավորության մասին, և թե արդյոք այդ ծառայությունը նրա համար զոհաբերություն է եղել, թե ոչ:
- Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 31.3–13 հատվածները և վերլուծեք միսիոներներին տված Տիրոջ հանձնարարությունները ու խոստումները:
- Բերեք սուրբ գրությունները և ուսանողի այս ձեռնարկը դասարան ամեն շաբաթ:

© Steve Tregeagle. Պատճենահանել չի թույլատրվում

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Անձնական արժանավորությունը կենսական է յուրաքանչյուր անձի համար, ով նախապատրաստվում է մտնել տաճար և նախապատրաստվում է ծառայել լիաժամկետ միսիայում: Եպիսկոպոսներն ու ցցի նախագահներն են որոշում արժանավորությունը: Որպես հրահանգիչ՝ դուք չպետք է պահանջվող արժանավորության ճշգրիտ աստիճան սահմանեք, այլ, փոխարենը, արժանավորության հարցերին ծանոթացնելով՝ ուսանողներին ուղարկեք իրենց քահանայության ղեկավարների մոտ:

Այս դասի ընթացքում դուք ուսանողներին կքաջալերեք հնազանդ լինել Տիրոջ պատվիրաններին, Նրա մարգարեների և առաքյալների ուսմունքներին և միսիայի կանոններին: Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ նախքան միսիոներական ծառայությունը սկսելը նրանք պետք է իրենց քահանայության ղեկավարի հետ քննարկեն նախկինում տեղի ունեցած բոլոր լուրջ օրինազանցությունները, որոնք դեռևս լուծված չեն: Երբ միսիոներներն արժանի են և հնազանդ, նրանք կարող են «խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկչի անունով» (ՎԱՈՒ 1.20):

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Անձնական արժանավորությունը անհրաժեշտություն է միսիոներական աշխատանք կատարելու համար:
- Անձնական արժանավորությունն ապագա միսիոներներին հնարավորություն է տալիս ձեռք բերել տաճարային օրհնությունները:
- Ապաշխարությունը մաքրագործման գործընթաց է, որը մեզ հնարավորություն է տալիս վերականգնել մեր արժանավորությունը:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Անձնական արժանավորությունը անհրաժեշտություն է միսիոներական աշխատանք կատարելու համար:

Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի և թող խմբերը կարդան Երեց Չարլզ Դիդիեի, Երեց Ռիչարդ Գ. Սքոթի և Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հայտարարությունները ուսանողների

ձեռնարկում (տես 13–14 էջերը): Թող ուսանողներն իրենց խմբերում քննարկեն հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է նշանակում արժանի լինել միսիայում ծառայելու:
- Ինչո՞ւ է արժանավոր լինելն այդքան կարևոր միսիոներական աշխատանքի համար:
- Միսիայի նախապատրաստվող երիտասարդի համար ի՞նչ է նշանակում «Ավելի լավ է կանխենք, քան փրկագնենք» արտահայտությունը:
- Ըստ Երեց Դիդիեի սովորեցրածի՝ ո՞րը պետք է լինի մեղք չգործելու մեր դրդապատճառը:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ կարող է «Տիրոջ և նրա պատվիրանների հանդեպ սիրո ոգի ունենալը» օգնել, որ դուք արժանի լինեք միսիայում ծառայելու:
- Ինչպե՞ս է ապաշխարությունը հետաձգելը վնասում միսիոներական ջանքերին:
- Ինչպե՞ս կարող է Տիրոջ միսիոներական աշխատանքը «կատարվել սովորական մարդկանց միջոցով, որոնք աշխատում են արտասովոր ձևով»: Ինչո՞ւ պետք է նրանք արժանի լինեն, որ կարողանան իրագործել դա:

Հարցրեք ուսանողներին.

- Ըստ Նախագահ Հինքլիի՝ ինչպիսի՞ համաձարագից պետք է մենք խուսափենք:

Ուսանողների հետ կարդացեք ուսանողների ձեռնարկի Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հայտարարությունը պոռնոգրաֆիայի մասին (տես էջ 14):

- Ուրիշ ի՞նչ համաձարակներ կարող եք ավելացնել այս ցանկին:
- Ի՞նչ ձևերով են պոռնոգրաֆիան, անմաքուր պատմություններով կիսվելը և Իմաստության Խոսքը խախտելը նման ծուղակին:

Թող ուսանողները թվարկեն այլ համաձարակներ կամ ծուղակներ և բացատրեն դրանց վտանգավոր ազդեցությունը մարդու հոգևորության վրա:

- Ի՞նչ է նշանակում մարդու համար անբիծ մնալ աշխարհից (տես Հակոբոս 1.27):
- Որո՞նք են օրհնությունները, որ գալիս են, երբ թույլ ենք տալիս, որ առաքինությունը զարդարի մեր մտքերը (տես ՎԼՈՒ 121.45):

5 Ինչպե՞ս կարող ենք հեռացնել մեր մտքում առաջացող վատ պատկերները: Կարդացեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ սահմանումը կամ ցուցադրեք ԹՏՍ շարժանկար 5 (0.54):

«Համակարգչի յուրաքանչյուր ստեղնաշարի վրա, բոլոր լեզուներում, կա մի ստեղ, որ կոչում է *«ջնջել»*: Ձեր մտքում ունեցեք «ջնջող ստեղ»: Զարգացրեք ջնջել ստեղի ձեր օգտագործումը: Եթե այդ անարժան մտքերից մեկը փորձում է ներս խցկվել ձեր միտքը, ջնջե՛ք այն:

Արդ, ինչը կարող է լինել այդ ստեղը: Ինչ-որ մի ժեստ, որը ոչ ոք չի նկատի: Ձգիտեմ ձեզ որը հարմար կլինի: Դա պետք է լինի ձերը: Ձեր անձնականը: Օրինակ, եթե դուք ակնոցներ եք դնում, դա կարող է լինել ձեր ակնոցներին դիպչելը: Ինչ-որ միտք է թափանցում ձեր ուղեղը և դուք ձեռք եք տալիս ձեր ակնոցներին, որպեսզի ջնջեք այն: Ոչ ոք, բացի ձեզանից, չի իմանա այդ: Կամ դա կարող է լինել ինչ-որ մի ժեստ, որը անձնական է ձեզ համար, ինչպես օրինակ բթամատով ձեռքդ տրորելը: Սովորեք օգտագործել ձեր ջնջելու ստեղը, երբ այդ մտքերը՝ այդ գայթակղությունները գալիս են: Դուք կարող եք սովորել ջնջել դրանք:

Դուք կարող եք սովորել կառավարել ձեր մտքերը: Երբ անեք դա և հետևեք հնազանդության կանոնին, ձեզ հետ ամեն բան լավ կլինի: Դուք առաջնորդություն կունենաք»: («Some Things Every Missionary Should Know» [սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 26, 2002], 16–17):

Անձնական արժանավորությունն ապագա միսիոներներին հնարավորություն է տալիս ձեռք բերել տաճարային օրհնությունները:

Թող ուսանողները կարդան Վարդապետություն և Ուխտեր 109.22–23 հատվածները և գրատախտակին գրեն Մարգարե Ջոզեֆ Սմիթի Կիրթլենդի տաճարի նվիրագործման ժամանակ խնդրած չորս օրհնությունները: Քննարկեք այդ օրհնություններից յուրաքանչյուրը: Կարող եք օգտագործել դրանց առնչվող հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում որպես միսիոներ «Աստծո անունով գործել»:
- Ինչպե՞ս կարող է մահկանացու աշխարհում Աստծո փառքը մեզ շրջապատել (տես ՎԱՈՒ 88.28–29, 93.36):
- Ի՞նչ ձևերով է հնարավոր հրեշտակները հանձնարարություն ունենան մեզ համար (տես 2 Նեփի 32.3–4; ՎԱՈՒ 13):

Թող ուսանողներից մեկը ուսանողների ձեռնարկից կարդա տաճարային օրհնությունների վերաբերյալ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինի հայտարարությունը (տես էջ 15): Գրատախտակի վրա թվարկեք լրացուցիչ օրհնություններ:

Հաջողակ միսիոներ լինելու համար մարդ Սուրբ Հոգու պարգևի կարիք ունի, ինչպեսև այնպիսի օրհնությունների կամ «պարգևների», որոնք մատչելի են միայն տաճարում: Ուսանողների հետ կարդացեք Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի, Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի և Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հայտարարությունները ուսանողի ձեռնարկում (տես 16 էջերը):

- Համաձայն այս եղբայրների՝ ինչպե՞ս կարող է տաճարային օժտումն օգնել միսիոներին՝ քարոզել վերականգնված ավետարանը:
- Ուսանողների հետ կիսվեք հետևությամբ, որ երբեմն Եկեղեցու անդամների մոտ միսիայի կոչում ստանալն ավելի մեծ շեշտադրում է ստանում, քան տաճարային արարողությունները ստանալը: Ինչ եք կարծում, ինչպե՞ս կարող է միսիայի կոչում ստանալն ավելի մեծ շեշտադրում ստանալ, քան տաճարային օրհնություններ ստանալը:

Կիսվեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի՝ Եկեղեցու տասնչորսերորդ նախագահի քաջալերանքը ուսանողի ձեռնարկից (էջ 16):

- Ըստ Վարդապետություն և Ուխտեր 95.8, 105.11–12 հատվածների՝ ի՞նչ է նախատեսել Տերը տալու Սրբերին Իր սուրբ տաճարներում:
- Ըստ Երեց Դեյվիդ Բ. Հեյթի և Երեց Ջեկ Հ. Գոսլինդ կրտսերի ուսանողների ձեռնարկում տրված հայտարարությունների (էջ 16), որոնք են այն մի քանի եղանակները, որով մենք տաճարում օժտվում ենք «ի վերուստ»: (Կարող եք ուսանողների առաջարկները գրել գրատախտակի վրա և քննարկեք դրանք՝ ըստ անհրաժեշտության: (Զգուշացրեք ուսանողներին չօգտագործել տաճարային բառապաշարը, ոչ էլ մանրակրկիտ լինել այս քննարկման ժամանակ):
- Ինչո՞ւ են այդ օժտումները կամ պարգևները կարևոր միսիոներների համար:

Միսիոներների մեծ մասը հնարավորություն ունեն ստանալ իրենց տաճարային օժտումները նախքան իրենց միսիան: Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է.

> «Անձնական արժանավորությունը կարևոր պահանջ է տաճարային օրհնություններ-ը վայելելու համար» (in Conference Report, ապրիլ 1999, 31; կամ *Ensign*, մայիս 1999, 25):

Հրավիրեք ուսանողներին խոսել տաճարում կրվող հագուստի գույնի մասին և թե որն է սպիտակ գույնի կարևորությունը: Ձեր ուսանողներից ոմանք, հնարավոր է, եղած չլինեն տաճարում: Այդ ուսանողների համար դուք կարող եք կարդալ տաճարային հագուստի մասին հետևյալ բացատրությունն ու ներըմբռնումը և քննարկեք հետող հարցերը.

> «Տաճարային արարողությունների աշխատանք կատարելիս մենք կրում ենք սպիտակ հագուստներ: Այդ հագուստն անմեղության, արժանավորության և մաքրության խորհրդանիշ է:
>
> Տաճար մտնելիս մենք փոխում ենք մեր առօրյա հագուստը տաճարային սպիտակ հագուստով.... Թողնելով ձեր հագուստները պահարանում, դուք այնտեղ եք թողնում նաև ձեր հոգսերը, մտահոգությունները և այն ամենը, ինչ որ կարող է շեղել ձեր միտքը: Դուրս գալով ձեր փոքրիկ հանդերձարանից սպիտակ հագնված, դուք ապրում եք միասնության և հավասարության զգացում, քանի որ ձեր շուրջը բոլորը նույն ձևով են հագնված» (*Preparing to Enter the Holy Temple* [2002], 16–18):

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է առօրյա ձեր հագուստը հանելը և տաճարային սպիտակ հագուստ հագնելը ձեզ օգնում նախապատրաստվել տաճարային սրբազան փորձառությանը:
- Ինչպե՞ս կարող է տաճարային երկրպագությանը արժանի լինելու համար նախապատրաստվելը ձեզ օգնել նաև Տիրոջ միսիայի ծառայությանը նախապատրաստվել:
- Հիշողությունը, որ դուք եղել եք տաճարում և կապել եք սրբազան ուխտեր, ինչպե՞ս կարող է օրհնել ձեր կյանքը որպես միսիոներ:

Ուսանողներին հրավիրեք կարդալ ուսանողների ձեռնարկում տրված Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հայտարարությունը (էջ 16) և մտածել, թե ինչու մարդ պետք է լիովին ազնիվ լինի՝ ինչպես տաճարային երաշխավորագրի հարցազրույցի ժամանակ, այնպես էլ միսիայում ծառայելու արժանավորության համար քահանայության ղեկավարների հետ անցկացվող հարցազրույցի ժամանակ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ տաճարային երաշխավորագրի առանձնազրույցը «կարևոր քայլ է, որպեսզի հաստատեք, որ դուք բավականաչափ հասուն և հոգևոր եք» Տիրոջ տան արարողությունները ստանալու և ուխտերը պահելու համար:

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է անձնական արժանավորությունը կենսական պահանջ, որպեսզի վայելենք տաճարային օրհնությունները, ինչպես նաև լիաժամկետ միսիայի ծառայությունը:

Ապաշխարությունը մաքրագործման գործընթաց է, որը մեզ հնարավորություն է տալիս վերականգնել մեր արժանավորությունը:

Բացատրեք, որ ապաշխարությունը Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի դրական հատկանիշներից է, և որ եթե ուսանողները ներկայումս արժանի չեն, նրանք կարող են արժանի դառնալ ապաշխարության միջոցով: Ալման պատմում էր իր որդուն թե «ինչպիսի՜ ուրախություն, ինչպիսի՜ զարմանալի լույս» էր նա զգացել ապաշխարության մաքրագործող ազդեցությունից հետո (Ալմա 36.20):

Թող ուսանողները բաժանվեն զույգերի և կարճ դաս պատրաստեն ապաշխարության մասին, որը կարող են ուսուցանել հետաքրքրվողին: Թող նրանք կենտրոնանան հատկապես նրա վրա, թե ինչպես է Քրիստոսի հանդեպ հավատքի սկզբունքը մարդուն առաջնորդում ապաշխարելու իր մեղքերից: Օգտակար կլինի կարդալ Երեց Հոլլանդի հայտարարությունը ուսանողների ձեռնարկում (տես էջ 17), հետևյալ սուրբ գրությունները և այլ հատվածներ, որոնք կարող են օգտակար լինեն. Հելաման 14.13, 15.7–8, 3 Նեփի 12.19–20, Վարդապետություն և Ուխտեր 53.3: Այդ փոքրիկ դասը պատրաստելուց հետո, թող մի զույգն ուսուցանի ուսանողների մյուս զույգին: Ապա փոխեք դերերը: Մի քանի րոպե անց թող բոլոր չորս ուսանողները կիսվեն դիտողություններով ուսուցման վերաբերյալ: Ի՞նչը նրանք լավ արեցին և ինչը կարող էին ավելի լավ անել:

Միսիոներական ծառայության նախապատրաստվելիս բոլորն ապաշխարելու կարիք ունեն, և ոչ միայն նրանք, ովքեր լուրջ օրինազանցություններ են գործել: Թող ուսանողները բարցրածայն կարդան Վարդապետություն և Ուխտեր 133.16 հատվածը և խնդրեք, որ ուսանողները բացատրեն դրա նշանակությունը նրանց համար որպես ապագա միսիոներներ:

Կիսվեք հետևյալ մտահայեցողական իրադրության ուսումնասիրմամբ.

Քրեգի կյանքը փոխվել էր: Տարիներ շարունակ նա մեծացվել էր Եկեղեցում և հետևել էր նրա ուսմունքներին: Պատանեկան տարիքում, սակայն, նա սկսել էր պատվիրաններից շեղվել: Նրա քայլերի պատճառով նա անհարմար էր զգում գնալ եկեղեցի: Մի առիթով նա լսեց ցցի ղեկավարներից մեկին, որը խոսում էր ապաշխարության ուրախության և մեղքի բեռից ազատված միսիայում ծառայելու մասին: Դա դիպչեց նրա սրտին և նա գիտեր, որ պետք է մաքրի իր կյանքը: Նա պայմանավորվեց, որ հանդիպի իր եպիսկոպոսին:

- Ինչպիսի՞ հարցեր կարող է լինեն Քրեգի մտքում մինչ նա սպասում էր հանդիպելու եպիսկոպոսին:
- Ինչպիսի՞ պատասխաններ կտայիք Քրեգի հարցերին:

Ուսանողների հետ կարդացեք «Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» [2004], գրքույկի «Ապաշխարություն» թեմայի *Խոստովանություն* ենթավերնագիրը (էջ 27) և քննարկեք, թե ինչ արժեքավոր դեր ունի քահանայության ղեկավարը ապաշխարելիս մարդուն օգնելու համար:

Կարդացեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ հայտարարությունները.

> «Փառք լինի Աստծոն Տեր Հիսուս Քրիստոսի գործած Քավության մաքրագործող, սրբագործող, ներում շնորհող զորության համար, որի մասին ես վկայում եմ» (in Conference Report, հոկ. 2000, 96 կամ *Ensign*, Նոյ. 2000, 74):

«Ապաշխարությունը, օճառի պես, պետք է հաճախ օգտագործվի» (in Conference Report, ապրիլ 1997, 9, կամ *Ensign*, մայիս 1997, 9):

Ցույց տվեք օճառի մի սալիկ:

- Ինչպե՞ս է ապաշխարությունը նման օճառին:

Շեշտեք, որ երբ ապաշխարությունն անկեղծ է, մարդ ոչ միայն մեղքից է մաքրվում, այլ նաև փոխվում է ապաշխարած մեղքի հանդեպ՝ սրտով ու էությամբ:

- Ինչպե՞ս եք զգում, երբ Քավության զորությունը ձեզ դարձնում է հոգևորապես մաքուր:
- Ինչո՞ւ է մեղքը թողնելը կենսական ապաշխարության համար (տես ՎԼՈՒ 58.43):

Ձեր ապաշխարությունը ձեզ անձնական վկայություն կբերի Քավության մաքրվելու զորության վերաբերյալ:

- Համաձայն հավատո հանգանակի չորրորդ կետի՝ ինչին կառաջնորդի հետաքրքրվողի անկեղծ ապաշխարությունը:

Թող ձեր ուսանողները մտածեն այնպիսի միսիոներների կյանքի և զորավոր վկայությունների մասին, ինչպիսիք են՝ Պողոս Առաքյալը, Ալմա կրտսերը և Մոսիայի որդիները:

- Ինչո՞ւ էին նրանք այդքան հաստատակամ ապաշխարության ավետարանն ուսուցանելիս, անգամ անձնական կյանքը մեծապես վտանգելով:
- Ինչո՞ւ այնպիսի արդար մարդիկ, ինչպիսիք Նեփին, Աբինադին և Մորոնին էին, նաև Փրկչի Քավության մեծ ուսուցիչներ էին:

Ուսանողների համար կարդացեք Երեց Գլեն Լ. Փեյսի հետևյալ հայտարարությունը.

«Միսիան մեղավորների համար չէ, որ ապաշխարեն, այլ արդարների համար, որ մեղավորներին ապաշխարության կանչեն: Միսիոներները չեն ուղարկվում միսիա, որպեսզի վկայություն ստանան, այլ որ վկայություն տան» (“Why?” [devotional address at Ricks College, Sept. 24, 1991], 3):

Խնդրեք որևէ ուսանողի արտահայտել Երեց Փեյսի հայտարարությունն իր իսկ խոսքերով:

Ուսանողների հետ կարդացեք և քննարկեք Երեց Փեյսի հայտարարության մնացած մասը ուսանողների ձեռնարկում (էջ 17):

- Ըստ Երեց Փեյսի՝ ի՞նչ «ընդհանուր մտայնություն կա երիտասարդների մոտ» միսիայից առաջ խոստովանելու վերաբերյալ:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք ապագա միսիոներին, որը վախենում է բացարձակ խոսել քահանայության ղեկավարի հետ իր մեղքերի վերաբերյալ:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Փրկչի Քավությունը հույս է տալիս նրանց, ովքեր չեն զգում, որ կարող են ներում ստանալ: Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 58.42 հատվածը:

- Եթե Տերը այլևս չի հիշում մեր մեղքերը, ինչո՞ւ են որոշ մարդիկ դժվարանում իրենք իրենց ներել:

Կարդացեք Ալմա 36.19 հատվածը: Ձեր ուսանողներին բացատրեք, որ երբ մենք իրապես ապաշխարում ենք, մեր մեղքերը հիշելու ցավը կարող է հեռացվել: Կարիք չկա, որ մենք ցավը զգանք հավերժ:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ իրական խաղաղություն կարող է գալ Տիրոջ ներումից: Յոթանասունի անդամ՝ Երեց Ֆ. Բարտոն Հովարդը, բացատրել է.

> «Երբ որ լիարժեք ապաշխարում ես, դու ներքին խաղաղություն ես զգում: Ինչ-որ ձևով դու իմանում ես, որ ներված ես, որովհետև երկար ժամանակ կրած բեռը, հանկարծակի, անհետանում է: Այն *հեռանում* է և դու *զգում* ես, որ այն հեռանում է» (in Conference Report, ապրիլ 1983, 79; կամ *Ensign*, մայիս 1983, 59):

6 7 Երբեմն մարդիկ, ովքեր մեղանչել են, մտածում են, թե այլևս երբեք չեն կարող կրկին մաքրվել՝ որ նրանք ավելի փոքր են, քան կարող են: Թող դասարանը կարդա Երեց Ռիչարդ Գ. Սքոթի և Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հայտարարություններն ուսանողների ձեռնարկում (էջ 17–18), կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 6 (0:38) և 7 (0:42) շարժանկարները:

Զգուշացում. Հիշեք, որ շատ չմանրանաք մեղքերը քննարկելիս կամ ուսանողի ձեռնարկի Երեց Սքոթի ու Նախագահ Փաքերի հայտարարությունները մեկնաբանելիս: Դուք պետք է ուսանողներին քաջալերեք, որ ապաշխարությանը վերաբերող մանրամասն հարցերն իրենք քննարկեն եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ:

Բացատրեք, որ չնայած ապաշխարությունը ներում է բերում, որոշ մեղքեր կարող են մարդուն որակազրկել միսիոներական ծառայության արտոնությունից: Օրինակ՝ Եղբայրները հայտարարել են, որ եթե ապագ միսիոները մեղավոր է եղել պոռնկության, սեռական փաղաքշանքի կամ այլ բարոյական այլասերման հարցում, թմրադեղերի օգտագործման, քաղաքացիական օրենքի լուրջ խախտումների կամ այլ օրինազանցությունների մեջ, պետք է ապաշխարեն և առնավազն մեկ տարի ազատված լինեն այս մեղքերից: Ավելին, եթե մեկը սեռական հարաբերություններ է ունեցել ավելի քան մեկ հոգու հետ, կամ անօրինական հարաբերվել է մեկ հոգու հետ երկար ժամանակահատվածի ընթացքում՝ լինի տարասեռ, թե համասեռ հարաբերություններ, ապա նա չի կարող ծառայել որպես լիաժամկետ միսիոներ: Քաջալերեք ուսանողներին լրացուցիչ հարցերի դեպքում զրուցել եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Մտապահեք Վարդապետություն և Ուխտեր 58.42–43 և 121.45–46 հատվածները:
- Քննեք միսիայում ծառայելու ձեր անձնական արժանավորությունը: Եթե կան դժվար լուծելի խնդիրներ, որոշեք, թե ինչ պետք է արվի, և ապա կատարեք այն:
- Ուսումնասիրման ձեր օրագրում գրեք, թե ինչու նրանք, ովքեր անկեղծ հավատք ունեն Հիսուս Քրիստոսի հանդեպ, պատրաստ կլինեն ապաշխարել իրենց մեղքերից, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներները հասկանան այդ հարաբերությունն իրենց անձնական կյանքում: Ինչո՞ւ պետք է նրանք ի վիճակի լինեն պարզորոշ ուսուցանել այդ ճշմարտությունը:

Գլուխ 3

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ծանոթություն. 4-րդ գլուխն ուսուցանելու առաջարկ ունի, որի համար անհրաժեշտ է նախապես պատրաստվել (տես «Միսիոներները պետք է կիրառեն ուսուցման վեհացնող մեթոդներ» ենթավերնագիրը էջ 33): Երկու ուսանողների խնդրեք կարճ դաս նախապատրաստել: Ընտրեք այնպիսի ուսանողներ, որոնք անհարմար չեն զգա ուսուցանել, պատրաստ լինելով, որ իրենց դասն այնուհետև կգնահատվի: Խնդրեք նրանց պատրաստել վերականգնված ավետարանի մի սկզբունք ուսուցանող միսիոներների չորս-հինգ րոպեանոց բեմականացում: Օգնենք նրանց ընտրել ուսուցանելու սկզբունքը կամ իրադարձությունը (ինչպես օրինակ՝ հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս կամ Առաջին Տեսիլքը): Օգնեք նրանց որոշել օգտագործվող սուրբ գրությունները: Եթե պատշաճ է, առաջարկեք որևէ դիտակտիկ նյութ, «հետաքրքրվողին» տրվող հարցեր կամ որևէ այլ առաջարկ, որը նրանց կօգնի նախապատրաստվել: Բացատրեք նրանց, որ դասարանին սկզբունքն ուսուցանելուց հետո նրանց ուսուցումը դասարանի կողմից կգնահատվի:

ՆԱԽԱԲԱՆ

Ապագա միսիոներները պետք է սովորեն, թե ինչպես է Հոգին ներգործում իրենց վրա, մինչ նրանք պատրաստվում են միսիայի ծառայության: Քանի որ նրանք պետք է անեն Տիրոջ աշխատանքը, Տիրոջ հուշումներին՝ Նրա Հոգու միջոցով, զանազանելու և հետևելու կարողություն զարգացնելն էական դեր ունի: Նրանք պետք է միսիայի ծառայությունն սկսեն թոթռուն վկայությամբ: Իրենց փորձով նրանք պետք է իմանան, որ աղոթքներին պատասխան է գալիս: Նրանք պետք է զգայնություն զարգացնեն Սուրբ Հոգու հանդեպ, որպեսզի որակավորված լինեն իրենց գործում Տիրոջ կամքն առաջ տանելու:

Ծանոթություն. Այս գլուխը կենտրոնանում է նրա վրա, որ միսիոների համար կարևոր է ստանալ և հասկանալ Հոգու ներգործությունը: 4-րդ գլուխը կենտրոնանում է Հոգով ուսուցանելու թեմայի վրա:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Քրիստոսի լույսը բարու զորություն է բոլոր մարդկանց կյանքում:
- Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամներից մեկն է:
- Սուրբ Հոգին բազում ձևերով ազդում է մեր կյանքի վրա՝ բարիքի համար:
- Միսիոների ներուժի մեծագույն պաշարներից մեկը Հոգին զգալը և հնազանդվելն է:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ծանոթություն. Հետևյալ երկու սկզբունքները միացվել են և քննարկվում են ուսուցանելու մեկ առաջարկի շրջանակում:

Քրիստոսի լույսը բարու զորություն է բոլոր մարդկանց կյանքում:

Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամներից մեկն է:

Գրատախտակին գրեք հետևյալ երեք վերնագրերը և աղբյուրները.

- *Սուրբ Հոգի:* Վարդապետություն և Ուխտեր 130.22–23
- *Սուրբ Հոգու պարգև:* Սուրբ գրությունների ուղեցույց, «Սուրբ Հոգու պարգև» էջ 202, «Սուրբ Հոգի», էջ 201
- *Քրիստոսի լույսը:* Վարդապետություն և Ուխտեր 84.46, 88.13, «Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» (2004) գրքույկի մեջբերումը ուսանողների ձեռնարկում (էջ 24):

Դասարանը բաժանեք երեք խմբի և յուրաքանչյուր խմբին նշանակեք հետևյալ թեմաներից մեկը: Թող նրանք փնտրեն աղբյուրները, որպեսզի ամփոփեն փաստերն իրենց թեմայի վերաբերյալ: Ապա, թող նրանք գրեն իրենց եզրակացությունները գրատախտակին՝ համապատասխան թեմայի դիմաց:

Թող յուրաքանչյուր խումբ բացի ուսանողի ձեռնարկը և լռությամբ կարդա իրենց հանձնարարությանը համապատասխանող հայտարարությունը.

- *Սուրբ Հոգի:* Երեց Ռոբերտ Դ. Հելյս (էջ 24)
- *Սուրբ Հոգու պարգև:* Դալլին Հ. Օուքս (էջ 22) և Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի (էջ 22)
- *Քրիստոսի լույսը:* Նախագահ Բոյդ Ք. Փաքեր (էջ 24) և Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին (էջ24)

Հրավիրեք համապատասխան թեմաներն ուսումնասիրողներին քննարկել հետևյալ հարցերի պատասխանները.

- Սուրբ Հոգու դերերից որոնք են առանձնապես կարևոր միսիոներների և նրանց հետաքրքրվողների համար: Ինչո՞ւ
- Երեց Մակքոնկիի նմանեցման օրինակն ի՞նչ ձևերով կարող է միսիոներն օգտակար համարել հետաքրքրվողին ուսուցանելիս:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ կարևոր կլինի ուսուցման ժամանակ գիտակցել, որ յուրաքանչյուրին տրված է Քրիստոսի Լույսը: (Քննարկեք այն սկզբունքը, որ Քրիստոսի Լույսը հոգևոր օգնություն կլինի հետաքրքրվողներին մոտեցնելու Քրիստոսին, հուշելով նրանց ընդունել ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողությունները, մինչ նրանք առաջադիմում են Տիրոջ ճշմարիտ եկեղեցու անդամները դառնալու ճանապարհին):

Թող ուսանողները զույգեր կազմեն և հերթով բացատրեն Քրիստոսի լույսի և Սուրբ Հոգու պարգևի տարբերությունը: Երկրորդ ուսանողը պետք է ձգտի ոչ թե նմանակել առաջինի ուսուցանածը, այլ փորձի գտնել մեկ այլ բացատրություն:

Սուրբ Հոգին բազում ձևերով ազդում է մեր կյանքի վրա՝ բարիքի համար:

Ուսանողներին տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ձևերով կարող է Սուրբ Հոգին ներգործել մեր վրա (ուսանողների պատասխանները գրի առեք գրատախտակին):
- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոները հասկանա, թե ինչպես է Սուրբ Հոգին հաղորդակցվում:
- Ի՞նչ է տեղի ունենում, երբ մենք Հոգուց հուշումներ ենք ստանում, բայց չենք հետևում դրանց:

Թող ուսանողները կարդան Վարդապետություն և Ուխտեր 8.2–3 հատվածները և Երեց Լ. Լիոնել Կենդրիկի հայտարարությունը ուսանողների ձեռնարկում (էջ 25):

Բացատրեք, որ կան ժամանակներ, երբ մարդիկ զգում են Սուրբ Հոգու ազդեցությունը, սակայն այն չեն ընդունում որպես այդպիսին: Թող ուսանողները կարդան, թե ըստ 3 Նեփի 9.20 հատվածի՝ ինչ էր տեղի ունեցել Լամանացիների հետ:

- Ինչո՞ւ որոշ մարդիկ, հնարավոր է Հոգին իրենց հետ ունենան, բայց չգիտակցեն դա:

Միասին կարդացեք Գաղատացիս 5.22–23 հատվածները և քննարկեք, թե ինչ է լինում մարդկանց կյանքում, ովքեր հոգևոր հաղորդակցություն են ստանում:

Համոզվեք, որ մարդիկ հասկանում են, որ մենք պետք է արժանի լինենք Սուրբ Հոգու ազդեցությունն ունենալու համար: Սա ավելի մանրամասն կքննարկվի 4-րդ գլխում: Շեշտեք հետևյալը.

- Տիրոջ Հոգին երբեք մարդուն չի հուշի վերականգնված ավետարանի չափանիշներին կամ Եկեղեցու արդար իշխանություններին հակառակ գործել:
- Դժվար բան է, գրեթե անհնարին, ստանալ Հոգու հուշումները թմրանյութերի, ալկոհոլի կամ նմանատիպ այլ նյութերի ազդեցության տակ: «Ձեր մարմինը, իրապես, ձեր մտքի գործիքն *է* և ձեր բնավորության հիմնաքարը» (Boyd K. Packer, in Conference Report, հոկ. 2000, 93; կամ *Ensign,* Նոյ. 2000, 72): Դուք պետք է պատշաճ ձևով հոգաք նրա մասին:

Հոգին բազմաթիվ ձևերով հաղորդակցվում է մեզ հետ: Ուսանողների հետ քննարկեք հետևյալ գաղափարները. հոգևոր տպավորությունները. խաղաղության զգացումը. մեղմ, բարակ ձայնը. մտահղացումները և հոգևոր հաղորդակցությունների սրբազան բնույթը:

Մենք կարող ենք հոգևոր տպավորություններ ստանալ: Թող ուսանողները կարդան 1 Նեփի 17.45 հատվածը և գտնեն պատճառները, թե ինչու չէին Լամանն ու Լեմուիլը ճանաչում հոգևոր տպավորությունները: Կիսվեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահի հետևյալ նկարագրությամբ.

> «Հոգևոր հաղորդակցությունը հազվադեպ է գալիս նշմարելի ձայնով: Մեծամասամբ, այն գալիս է ձեր *զգացումների* միջոցով» («The Gift of the Holy Ghost: What Every Missionary Should Know–and Every Member as Well» [սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 24, 2003], 4. տես նաև ՎևՈՒ 8.2–3; 9.8):

Երբեմն այդ զգացումները նկարագրելիս ասում են կուրծքդ կայրվի (տես ՎևՈՒ 9.8–9): Տես կուրծքն այրվելու սահմանումը ուսանողների ձեռնարկում, որը մեջբերում է «Հավատքին Հավատարիմ» գրքույկից (էջ 24): Կարդա նաև հետևյալ մեջբերումը Նախագահ Բոյդ Ք. Փաքերի խոսքերից.

Կրքծում այրվելը պարզապես ֆիզիկական զգացողություն չէ: Ավելի շուտ դա նման է նրան, թե ինչպես է ձեր ներսում մի լույս փայլում» (in Conference Report, հոկ. 1994, 77; կամ *Ensign*, Նոյ. 1994, 60):

Ձեր մտքում վերհիշեք ինչ-որ իրավիճակ, երբ դուք հոգևոր տպավորություններ եք զգացել:

- Ինչո՞ւ է կարևոր, որ ճանաչենք հոգևոր տպավորությունները:

Մենք կարող ենք խաղաղության զգացում ստանալ: Թող ուսանողները բարցրածայն կարդան Վարդապետություն և Ուխտեր 6.22–23 հատվածները: Խաղաղությունը Հոգու ազդեցությունը մեր վրա զգալու ձևերից մեկն է: Նախագահ Բրիգամ Յանգը պատմել է մի երազի կամ տեսիլքի մասին, որը նա տեսել է 1847 թվականին՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի նահատակությունից հետո, որի ժամանակ Մարգարեն բացատրել է.

«Նրանք կարող են Տիրոջ Հոգին տարբերել բոլոր մյուս հոգիներից. այն խաղաղություն և ուրախություն կշշնջա նրանց հոգուն» (*Manuscript History of Brigham Young, 1846–1847*, ed. Elden J. Watson [1971], 529):

Մենք կարող ենք ստանալ մեղմ, բարակ ձայնը: Կիսվեք Անգլիայի իր առաքելության ժամանակ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի ունեցած հետևյալ փորձառությամբ.

«Ես Ստենլի քաղաքում էի, և հավաք էի անցկացնում քաղաքապետարանի դահլիճում: Այդ քաղաքում ես պայմանավորվածություններ ունեի մեկ շաբաթվա համար: Նախքան ոտքի կանգնելը, որ խոսեմ այդ մարդկանց հետ, Տիրոջ ոգին հուշեց ինձ. «Այս ժողովից հետո դու այս մարդկանց հետ չես հանդիպի երկար ժամանակ»: Ոտքի կանգնելով՝ ես ժողովին հայտնեցի, թե Տիրոջ Հոգին ինչ է հուշել ինձ: Նրանք նույնքան զարմացած էին, որքան ես: Ես չգիտեի, թե ինչ էր ուզում Տերը, սակայն հետագայում Տիրոջ նպատակները հայտնի դարձան»:

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ այս ուղերձն անակնկալի բերեց Նախագահ Վուդրուֆին:

Հրավիրեք ուսանողներին կիսվել նրանով, թե ինչու էր Հոգին Նախագահ Վուդրուֆին Ստենլի քաղաքից, որտեղ նա բազմաթիվ հանդիպումներ ուներ, առաջնորդել դուրս գնալ քարոզելու մեկ այլ վայրում՝ Անգլիայում: Կարդացեք Նախագահ Վուդրուֆի պատմության մնացած մասը.

Տիրոջ Հոգին ինձ ասաց. «Գնա՛ հարավ»: Ես գնացի ութսուն մղոն դեպի Անգլիայի հարավ: Տեղ հասնելուն պես ես հանդիպեցի Ջոն Բենբոուին: Ինձ պարզորոշ հասկանալի դարձավ, թե ինչու էի ես կանչվել այստեղ: Ես թողել էի բերրի մի արտ, որտեղ շաբաթվա ամեն երեկո մի մարդ էի մկրտում: Երբ եկա այստեղ, ես մի ժողովուրդ գտա՝ մոտ 600 հոգի, որոնք կտրվել էին Ուեսլիական մեթոդականներից և իրենց վրա էին վերցրել «Միացյալ եղբայրություն» անունը: Ես իմացա, որ նրանք աղոթում էին

> լույսի և ճշմարտության համար և առաջադիմել էին այնքան, որքան կարող էին: Ես հասկացա, որ Տերն ինձ ուղարկել է նրանց մոտ: Ես սկսեցի աշխատել նրանց հետ և մկրտեցի նրանց վերակացուին, քառասուն քարոզիչների և մոտ 600 անդամների. ի վերջո, ես մկրտեցի այդ հարանվանության բոլոր անդամներին, բացի մեկից: Ընդհանուր առմամբ այդ արտի հնձի արդյունքում մկրտվեցին մոտ 1800 մարդ» (*The Discourses of Wilford Woodruff* [1969], 60):

- Այս պատմությունից մեղմ, բարակ ձայնին հնազանդվելու վերաբերյալ ի՞նչ դաս կարող է քաղել ժամանակակից միսիոները:
- Ինչպե՞ս կարող էր Նախագահ Վուդրուֆի միսիան տարբերվեր, եթե նա անտեսեր Հոգու հուշումները: Ինչպե՞ս կարող է նրա կյանքն ուրիշ լիներ:

Թող ուսանողները կարդան Գ Թագավորաց 19.9–13 հատվածները, որտեղ Եղիան սովորեց տարբերել մեղմ, բարակ ձայնը: Քննարկեք մյուս երևույթները, որոնց Եղիան ականատես եղավ և այս սուրբ գրության արժեքը Հոգու «ձայնը» նկարագրելիս:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից՝ Դալլին Հ. Օուքսի հետևյալ հայտարարությամբ.

> «Որոշ մարդիկ բացառորեն փնտրում են սուրբ գրություններում արձանագրված մեծ դրսևորումները և չեն նկատում իրենց հուշող մեղմ, բարակ ձայնը: Սա նման է մեր միտքը տրամադրելուն, որ մենք կսովորենք միայն այն ուսուցչից, որը բարձր ձայն ունի, և որ մենք կհրաժարվենք լսել նույնիսկ ամենահիմաստուն ուսուցումը, որը կտրվի շշուկի ձևով:
>
> Մենք պետք է իմանանք, որ Տերը հազվադեպ է բարցրաձայն խոսում: Նրա ուղերձը գրեթե մշտապես գալիս է շշուկի ձևով» (“Teaching and Learning by the Spirit,” *Ensign*, մարտ 1997, 11–12):

Մենք կարող ենք նոր մտքեր ստանալ: Թող ուսանողները կարդան Մարգարե Ջոզեֆ Սմիթի հայտարարությունը ուսանողների ձեռնարկում (30 էջեր): Խնդրեք նրանց գտնել, թե ինչպես է Մարգարեն նկարագրում «հայտնության ոգին»:

Մենք պետք է հիշենք, որ Հոգու հայտնությունները սրբազան են: Որոշ մարդիկ ստանում են շատ առանձնահատուկ հայտնություններ, որոնք չափից առավել սրբազան են, որպեսզի հրապարակավ քննարկվեն (տես Նախագահ Փաքերի զգուշացումները ուսանողների ձեռնարկում՝ էջ 26): Տեսիլքներ լինում են և ձայներ գալիս են վարագույրի մյուս կողմից: Երբ որ մարդիկ նման փորձառություններ են ունենում, նրանք պետք է դա սրբազան պահեն: Միասին կարդացեք Ալմա 12.9, Վարդապետություն և Ուխտեր 63.64, 84.73 հատվածները:

- Ինչո՞ւ պատշաճ չէ հետաքրքրասեր լինել կամ ինչ-որ մեկին հարցուփորձ անել անձնական հոգևոր փորձառությունների մասին:

Տերը մեզ հայտնություն է տալիս Իր ուրույն ժամանակին: Թող ուսանողներից մեկը կարդա Հակոբ 4.10 հատվածը:

- Ինչո՞ւ ենք մենք երբեմն անհամբեր աղոթքի պատասխաններին սպասելիս:
- Ինչպե՞ս է, հնարավոր, որ այս կարևոր սկզբունքը միսիոները հասկանա: Իսկ ո՞րն է կարևորությունը հետաքրքրվողի համար:

8 Կարող եք կարդալ Երեցներ՝ Դալլին Հ. Օուքսի և Նիլ Ա. Մաքսվելի հայտարարություններն ուսանողների ձեռնարկում (էջ 25) կամ հնարավոր է դուք նախընտրեք ցուցադրել Երեց Մաքսվելի հայտարարության՝ ԹՏՍ 8 (0:32) շարժանկարը:

Մենք չպետք է սպասենք հայտնության բոլոր բաներում: Բացատրեք, որ Տերն ինքն է սահմանում պայմանները և ժամանակացույցը, թե ինչպես խոսի մեզ հետ: Հնարավոր է, դուք կարդաք Դալլին Հ. Օուքսի երկու զգուշացումները ուսանողների ձեռնարկում (25–26 էջեր):

Միսիոների ներուժի մեծագույն պաշարներից մեկը Հոգին զգալը և հնազանդվելն է:

Սուրբ Հոգին ստանալուց հետո Եկեղեցու անդամները պատրաստվում են հասկանալ Հոգու ներգործումները և փնտրել Նրա առաջնորդությունը: Կարդացեք Դալլին Հ. Օուքսի հետևյալ հայտարարությունը.

> «Կարևոր է հիշել, որ Սուրբ Հոգու պարգևի արդյունքում անձին եկող պայծառությունը և հայտնությունը չի գալիս հանկարծակի կամ առանց փնտրելու: Նախագահ Սփենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է, որ Սուրբ Հոգին «տրվում է քիչ-քիչ՝ ամեն անգամ, երբ դուք արժանի եք դրան: Եվ քանի դեռ ձեր կյանքը ներդաշնակ է, դուք աստիճանաբար, ստանում եք Սուրբ Հոգին մեծ չափերով» (*The Teachings of Spencer W. Kimball*, ed. Edward L. Kimball [1982], 114):
>
> Սուրբ Հոգու պարգևին արժանի օրհնությունները հիմնված են արժանավորության վրա.... Նա ետ կքաշվի, եթե վատ խոսքերով, անմաքրությամբ, անհնազանդությամբ, ապստամբությամբ կամ այլ լուրջ մեղքերով մենք վիրավորենք Նրան» (in Conference Report, հոկ. 1996, 80–81; կամ *Ensign*, Նոյ. 1996, 61):

Ուսանողներին բացատրեք, որ կարևոր է, որ նրանք սովորեն այժմ արժանի լինել Սուրբ Հոգու առաջնորդությանը և քաջություն ունենան հետևելու այդ առաջնորդությանը: Սուրբ Հոգու զորությունն ու ազդեցությունը չի գալիս ինքնաբերաբար, երբ մարդ սկսում է կրել միսիոներական անվանաքարտը:

Թող ուսանողները կարդան Վարդապետություն և Ուխտեր 76.114–116:

- Հիմք ընդունելով 114 հատվածը՝ ինչի՞ն են վերաբերում «դրանք» և «որը» բառերը 116 հատվածում («Տիրոջ գործերին» և «նրա արքայության խորհուրդներին»):
- Հոգին մեզ հետ ունենալու համար ի՞նչ նախապայմաններ են նշված 116 հատվածում:
- Ի՞նչ կապ գոյություն ունի հնազանդության և միսիոներական աշխատանքում Հոգու առաջնորդությունն ունենալու մեջ:
- Ինչո՞ւ ձեզ համար կենսական կլինի պահել միսիայի կանոնները միսիայում ծառայելու ընթացքում:

Թող ուսանողներն առաջարկեն Հոգու անհրաժեշտության պատճառներ և իրավիճակներ, երբ ոգեշնչումն անհրաժեշտ է միսիայի ծառայության ժամանակ:

Կարդացեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ հայտարարությունը.

«Հավանաբար, ամենամեծ բանը, որ կարող է պատահել ձեզ հետ միսիայի ժամանակ, Սուրբ Հոգու պարգևի փորձառություններ ունենալն է....

Մեծագույն օրհնությունը, որ դուք կստանաք, մեղմ, բարակ ձայնի հետ ծանոթանալն է և սովորելը, որ այդ ձայնը կասի ձեզ բոլոր բաները, որ պետք է անեք.... Այդ հուշումները կարող են գալ բազմաթիվ անգամներ, բազում փորձառությունների միջոցով: Դա Տիրոջ ձայնն է խոսում....

Դուք, հնարավոր է, խոսեք հրեշտակների լեզվով, որը պարզապես նշանակում է, որ դուք կարող եք խոսել Սուրբ Հոգու զորությամբ: Այն խաղաղ ձայն կլինի: Այն անտեսանելի կլինի: Դուք աղավնի չեք տեսնի: Կրակի բոցեղեն բաժանված լեզուներ չեն հայտնվի: Սակայն զորությունը կզգացվի» (“The Gift of the Holy Ghost: What Every Missionary Should Know,” 3, 6):

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչպես կարող է ձեր ստացած տպավորությունների հիման վրա գործելն ազդել Սուրբ Հոգու հետագա հաղորդակցությունների վրա:

Կիսվեք Նախագահ Փաքերի ունեցած փորձառությամբ, երբ ծառայում էր որպես միսիայի նախագահ (տես ուսանողի ձեռնարկ, էջ 33): Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե այս պատմությունն ինչ ուսուցանեց նրանց, և որքանով այն օգտակար կլինի թե՛ միսիոներական և թե՛ իրենց հետագա կյանքում:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Որոշիր., թե ինչ փոփոխություններ կարող ես դու անել քո կյանքում, որպեսզի ավելի զգայուն լինես Հոգու հանդեպ:
- Ընտրիր մի ժամանակ և մի վայր, որտեղ կարող ես միայնակ լինել: Կարող ես ծոմ պահել: Սկսիր աղոթքով և հարցրու Երկնային Հորը, թե ինչ կցանկանար, որ դու անեիր, մինչ դու փորձում ես դառնալ Նրա միսիոներներից մեկը: Աղոթելուց հետո, որոշ ժամանակ հատկացրու, որ խորհես այն մտքերի և զգացումների շուրջ, որոնք գալիս են քեզ: Գրանցիր այդ տպավորությունները քո օրագրում: Սա կարող է քո միսիոներական օրագրի համար լավ սկիզբ լինել:
- Ուսումնասիրման քո օրագրում գրիր տպավորություններն ու ներըմբռնումները քո ուսումնասիրած սուրբ գրությունների վերաբերյալ:
- Աղոթքով վերընթերցիր քո հայրապետական օրհնությունը, նկատելով խորհուրդները և տպավորությունները, որոնք հնարավոր է վերաբերեն քո միսիային: (Եթե հայրապետական օրհնություն դեռ չես ստացել, մտածիր այն ստանալու մասին):
- Պատրաստեք մի ելույթ, թե «Ինչո՞ւ է Հոգով առաջնորդվելը կարևոր յուրաքանչյուր միսիոների համար»: Քո ելույթով կիսվիր ընտանիքի անդամներից մեկի կամ վստահելի ընկերներից որևէ մեկի հետ:
- Լրացրու ուսանողների ձեռնարկի սուրբ գրությունների աղյուսակը և սուրբ գրությունների շղթա կազմիր սուրբ գրքերի քո օրինակում (տես ուսանողի ձեռնարկ, էջ 34):

Սարի վրայի քարոզը՝ ըստ Հենրի Անդերսոնի

ՀՈԳՈՎ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԸ

Միսիոներական ջանքերի նպատակն այն է, որ վերականգնված ավետարանի ուղերձն ուսուցանվի այնպես, որ Սուրբ Հոգին առաջնորդի թե՛ միսիոներներին, թե՛ ուսուցանվողին: Այս գլուխը կօգնի ապագա միսիոներներին նախապատրաստվել Հոգով ուսուցանելուն, սովորեցնելով, թե ինչպես կարելի է *հրավիրել Հոգին* ուսուցման ընթացքում, ինչպեսև օգնել նրանց սովորել և կիրառել *ուսուցանելու* հիմնական *հմտությունները:* Ուսանողներին ուսուցանելու և ոգևորելու ,ձեր արդյունավետ ջանքերը՝ որպեսզի դառնան վերականգնված ավետարանի գերազանց ուսուցիչներ, նրանց էլ ավելի հաջողակ գործիք կդարձնի Տիրոջ ձեռքերում:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ պետք է ՀԱՍԿԱՆԱԼ

- Հոգով ուսուցանելու համար անհրաժեշտ է անձնական պատրաստվածություն և արժանավորություն:
- Միսիոներները կարող են Սուրբ Հոգուն հրավիրել մասնակցելու իրենց ուսուցմանը:
- Միսիոներները պետք է վարժվեն կիրառել ուսուցանելու վեհացնող մեթոդներ:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հոգով ուսուցանելու համար անհրաժեշտ է անձնական պատրաստվածություն և արժանավորություն:

Ցուցադրեք մի ռադիոընդունիչ կամ երաժշտական լարային մի գործիք, օրինակ՝ ջութակ կամ կիթառ (կամ գրատախտակին գրեք «ջութակ» կամ «կիթառ» կամ ցուցադրեք մի նկար): Խնդրեք ուսանողներին կարդալ Երեց Դեյվիդ Բ. Հեյթի հայտարարությունն ուսանողների ձեռնարկում (էջ 31) և գտեք, թե ցուցադրված առարկաներն ինչ ընդհանուր բան ունեն Հոգու հետ ներդաշնակ լինելու հարցում:

- Եթե ռադիոընդունիչի ալիքը կարգավորված չէ, կամ երաժշտական գործիքը լարված չէ, ինչպես է դա ազդում նրանց ձայնի վրա:
- Համաձայն Ալմա 17.2–3 և Ալմա 8.10 հատվածների՝ ի՞նչ կարող են անել միսիոներները, որպեսզի ուսուցանելիս լինեն Սուրբ Հոգու «ալիքի» վրա:
- Ըստ Վարդապետություն և Ուխտեր 1.33 հատվածի՝ ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներներն արժանի լինեն, որպեսզի կարողանան Հոգով ուսուցանել:
- Ինչո՞ւ է կենսական, որ միսիոներները հասկանան, թե ինչպես կարող են հրավիրել Սուրբ Հոգին և ճանաչել Հոգու ձայնը (տես 2 Նեփի 33.1):

Գրատախտակին գծեք հետևյալ աղյուսակը (և թողեք մնա ողջ դասի ընթացքում).

Ի՞նչն է հրավիրում Հոգուն, որ մեզ հետ լինի:	**Ի՞նչն է խանգարում Հոգուն, որ մեզ հետ լինի:**	

Հրավիրեք ուսանողներին առաջարկել պատասխաններ վերոհիշյալ յուրաքանչյուր հարցին և գրեք նրանց պատասխանները գրատախտակի վրա:

Կարող եք ուսանողներին հարցնել, որ հիշեն, թե վերջերս երբ են զգացել Սուրբ Հոգու ներկայությունը.

- Որտե՞ղ էիք դուք և ինչ էր տեղի ունենում, երբ դուք զգացիք Հոգին:
- Ինչ եք կարծում, ի՞նչը հրավիրեց Սուրբ Հոգին այդ պահին:

Ուսանողներին առաջարկեք համեմատել կարևոր քննության նախապատրաստվելը միսիայի գնալուն նախապատրաստվելու հետ:

- Ինչպիսի՞ ընդհանուր տարրեր կան երկուսի նախապատրաստության մեջ:
- Հոգևոր ինչպիսի՞ նախապատրաստություններ են անհրաժեշտ միսիոների համար, որպեսզի հրավիրի Հոգին իր հետ լինելու: (Անհրաժեշտության դեպքում, ուսանողները կարող են կարդալ Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի, Դալլին Հ. Օուքսի և Երեց Հենրի Բ. Այրինգի հայտարարությունները ուսանողների ձեռնարկում, 31 էջեր):
- Արդյոք Սուրբ Հոգու հետ ներդաշնակ լինելը երաշխիք է, որ մենք միշտ կառաջնորդվենք ուսուցանելու մեր յուրաքանչյուր քայլում: Ինչո՞ւ այո կամ ինչու ոչ: (Կարող եք վկայակոչել Դալլին Հ. Օուքսի խորհուրդը. տես ուսանողի ձեռնարկ, էջ 31):

Միսիոներները կարող են Սուրբ Հոգուն հրավիրել մասնակցելու իրենց ուսուցմանը:

9 Ցուցադրեք «Մարդ, որը զուրկ էր պերճախոսությունից» ԹՏՍ 9 (6.00) շարժանկարը: Այն պատկերում է Նախագահ Բրիգամ Յանգի պատմությունն իր դարձի գալու մասին, շեշտելով, որ Սուրբ Հոգին է, որ համոզում է մարդուն: Կամ դուք կարող եք կարդալ Բրիգամ Յանգի մեջբերումը ուսանողների ձեռնարկում (էջ 30):

Ավելացրեք հետևյալ վերնագիրը գրատախտակի աղյուսակին՝ որպես երրորդ սյունակ.

Ի՞նչն է հրավիրում Հոգուն մեր ուսուցման մեջ:

Թող ուսանողներն առաջարկեն, թե ինչ կարող են անել, որպեսզի հրավիրեն Հոգուն իրենց ուսուցման մեջ:

- Ինչո՞ւ է Հոգին կարևոր վերականգնված ավետարանն ուսուցանելիս:

Թող ուսանողները կարդան Նախագահ Հինքլիի խորհուրդը, թե ինչպես կարող ենք Հոգով ուսուցանել (տես ուսանողի ձեռնարկ, էջ 32):

- Ըստ ձեր զգացումների՝ ի՞նչ է նշանակում, որ միսիոներները պետք է խոսեն իրենց սրտից, ոչ թե կարդան իրենց գրքերից:

Խնդրեք որևէ կամավորի, ով կցանկանա երկու երեք րոպե «սրտից» ուսուցանել դասարանին, թե ինչ կարևորություն ունի Տիրոջ Եկեղեցին իր կյանքում:

Կիսվեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ խորհրդով և թող ուսանողները նշեն, թե ինչու է նա Սուրբ Հոգին համարում որպես ամենակարևոր բաղադրամաս վերականգնված ավետարանն ուսուցանելիս.

> «Եղեք ճշմարիտ պատգամի կրողներ և ապա Հոգով ուսուցանեք: Հոգին ամենակարևոր եզակի բաղադրամասն է այս աշխատանքում: Հոգու միջոցով ձեր ուսուցանած անհատներն ու ընտանիքները կիմանան ձեր սիրո և նրանց հանդեպ ձեր հոգատարության մասին, ինչպեսև կիմանան ձեր ուղերձի ճշմարտացիության մասին և ցանկություն կունենան հետևելու դրան» (in Conference Report, ապրիլ 1987, 62 կամ *Ensign*, մայիս 1987, 51):

Կարդացեք հետևյալ մեջբերումը.

> «Վկայությունը Սուրբ Հոգու կողմից տրված հոգևոր հաստատումն է» («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» [2004], էջ 182):

Միսիոներները հաճախ են վկայություն տալիս: Երբ միսիոները վկայություն է տալիս հետաքրքրվողին, Սուրբ Հոգին կարող է հաստատել վերականգնված ավետարանի ճշմարտությունը:

- Ինչպե՞ս կարող է վկայություն տալը Հոգուն հրավիրել ձեր ուսուցման մեջ:

Թող ուսանողները կարդան Նախագահ Բոյդ Ք. Փաքերի պատմությունը և «Հավատքին հավատարիմ» գրքույկի մեջբերումը ուսանողների ձեռնարկում (էջ 33):

- Ըստ Նախագահ Փաքերի և «Հավատքին հավատարիմ» գրքույկի՝ որո՞նք են վկայության էական տարրերը:
- Ուրիշ ի՞նչ պատշաճ բաներ կան, որ կարելի է նշել վկայության մեջ:

Բացատրեք, որ չնայած շատ հետաքրքրվողներ Եկեղեցով հրապուրվում են ընկերների շնորհիվ կամ Եկեղեցական ծրագրերի շնորհիվ (օրինակ՝ ընտանեկան երեկոները) կամ վարդապետության շնորհիվ (օրինակ՝ փոքր երեխաների փրկությունը), այնուամենայնիվ, հաճախ անդամի կամ միսիոների վկայության միջոցով Սուրբ Հոգու զորությունն է, որ մարդկանց համոզում է այս ուղերձի ճշմարտացիության մասին: Միշտ հիշեք, որ Սուրբ Հոգին է վերջնական

դարձի բերողը: Հոգին վկայություն է բերում, երբ անկեղծ, հավատարիմ միսիոները ազնիվ վկայություն է տալիս:

Ուսանողների հետ կարդացեք և քննարկեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի վերջին երկու հայտարարությունները ուսանողների ձեռնարկում (էջ 34):

- Ըստ Նախագահ Հինքլիի՝ ի՞նչ զորություն կա վկայություն տալու մեջ:
- Վկայության շրջադարձային լինելն ո՞ւր կարող է մղել մարդկանց: (Գալ Քրիստոսի մոտ՝ ընդունելով ավետարանի առաջնային սկզբունքներն ու վարդապետությունները):

Խնդրեք ուսանողներին բաժանվել զույգերի: Թող նրանցից յուրաքանչյուրն ընտրի հետևյալ թեմաներից մեկը, խորհի դրա շուրջ և ապա, երկու-երեք րոպե տրամադրի՝ միմյանց հետ կիսվելու իրենց ընտրած թեմայի շուրջ: Հիշեցրեք նրանց, որ անկեղծ վկայությունը Հոգով ուսուցանելու կարևոր մասն է:

- Ապրող մարգարեները և առաքյալները
- Տիրոջ ճշմարիտ Եկեղեցին
- Սուրբ Հոգու պարգևը
- Մարգարե Ջոզեֆ Սմիթը
- Մորմոնի Գիրքը
- Փրկիչ Հիսուս Քրիստոսը

Ամփոփեք դասի այս մասը հարցնելով, թե ինչ-որ մեկը կցանկանա՞ կիսվել իր վկայությամբ դասարանի հետ, կամ ինքներդ կիսվեք ձեր վկայությամբ:

Միսիոներները պետք է կիրառեն ուսուցման վեհացնող մեթոդներ:

Ուսուցանելու հետևյալ առաջարկները ներկայացնում են ձևեր, որոնք ուսուցանելու մի քանի մեթոդներ կներկայացնեն ուսանողներին և հնարավորություն կտան հակիրճ փորձարկել այդ հմտությունները: Եթե միսիոներները պետք է ուսուցանեն Սուրբ Հոգով, պարտադիր է, որ նրանք սովորեն ուսուցանել խանդավառությամբ, վստահությամբ և պարզությամբ:

Ծանոթություն. Ուսուցանելու այս առաջարկի մասին ծանոթություն կար 3-րդ գլխի սկզբում: Հրավիրեք նախորդ դասին հանձնարարություն ստացած ուսանողներին կանգնել դասարանի առաջ:

Դասարանին ասեք, որ դուք խնդրել եք երկու ուսանողի ցուցադրել, թե ինչպես կարող են միսիոներները որոշակի սկզբունք ուսուցանել: Հրավիրեք ուսանողներից մեկին կամ երկուսին գործել որպես հետաքրքրվողներ: Խնդրեք դասարանին դիտել և նախապատրաստվել քննարկելու միսիոներների ընդհանուր ուսուցանելու մոտեցումը: Առաջարկեք, որ նրանք նշումներ անեն, որպեսզի քննարկեն միսիոներների օգտագործած արդյունավետ մեթոդները, ինչպես նաև այն, թե ինչպես կարող են նրանք բարելավել ուսուցումը: Թույլ տվեք, որ նրանք սկսեն ուսուցանել, որից հետո դասարանով գնահատեք և դիտողություններ արեք: Համոզվեք, որ «հետաքրքրվողները» նույնպես կիսվում են դիտողություններով: Անհրաժեշտության դեպքում կարող եք օգտագործել հետևյալ հարցերը և առաջարկները, որպեսզի օգնեք ուսուցման գնահատմանը.

- Ինչպիսի՞ արձագանք կտաք նրանց ուսուցման մոտեցմանը:
- Գրատախտակին գրեք օգտագործած մեթոդները կամ հմտությունները, որոնք օգտակար էին նրանց ուսուցման ժամանակ: Օգնեք ուսանողներին տեսնել, որ այնպիսի ռազմավարությունը, ինչպիսիք են՝ լավ հարցերը, գործընկերոջ խոսելու ժամանակ ուշադիր լսելը և հետաքրքրվողի հարցերին ու դիտողություններին ուշադրություն դարձնելը,– բոլորը դիտարկելու և քննարկելու մեթոդներ են:

- Ուսուցանելու ժամանակ ինչպիսի՞ սովորություններ ու պահվածք կարող է հետաքրքրվողին շեղել Հոգուց և ուղերձի կարևորությունից:
- Ի՞նչ ձևերով են ուսուցման լավ ձևերը հրավիրում Հոգին:

Շարունակեք գրատախտակի «Ի՞նչն է հրավիրում Հոգուն մեր ուսուցման մեջ» սյունակի տակ ավելացնել առաջարկներ:

Գրատախտակին ավելացրեք հետևյալ աղյուսակը, բաց թողնելով փակագծերում թվարկած հմտությունները:

Փրկիչն օգտագործում էր ուսուցման վեհացնող մեթոդներ, որոնց կարող ենք նմանակել:	
Սուրբ գրություն	**Ուսուցման հմտություն կամ մեթոդ**
ՎԵՈՒ 45.3–5	(Աղոթեք ուրիշների համար):
Մատթեոս 16.15–17, Ղուկաս 10.26–27	(Տվեք հարցեր և լսեք պատասխանները):
Մատթեոս 17.20, Ղուկաս 5.4–10	(Օգտագործեք նկարներ և առարկաներ):
Մատթեոս 26.30	(Օգտագործեք երաժշտություն):
Ղուկաս 10.25–37, 15.11–32	(Կիսվեք պատմություններով և օրինակներով):
Ղուկաս 24.27	(Օգտագործեք սուրբ գրությունները):
Հովհաննես 10.17–18, 27	(Վկայություն տվեք. ուսուցանեք Քավությունը):

Ուսանողներին հրավիրեք հերթով բարցրաձայն կարդալ սուրբ գրություններից մեկը: Ապա հրավիրեք դասարանին առաջարկել, թե ինչ մեթոդ էր կիրառում Փրկիչը, երբ ուսուցանում էր, որը նրանք ևս կարող էին օգտագործել: Նրանց պատասխանը գրեք գրատախտակին: Հրավիրեք նրանց ավելացնել այլ հոգևոր օրինակներ Փրկչի կյանքից, որոնք նրանք կարող են մտածել:

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ կարող է Փրկչին հետևելու օրինակը օգնել ձեզ սովորել Հոգով ուսուցանել:

Արդյունավետ ուսուցիչներ լինելու համար միսիոներները չպետք է օգտագործեն բառեր և արտահայտություններ, որոնք անծանոթ են հետաքրքրվողներին: Երբ ուսուցիչները անծանոթ բառեր են օգտագործում առանց դրանց իմաստը բացատրելու, հետաքրքրվողի հասկանալու և վեհանալու հավանականությունը քչանում է: Դասարանի համար կարդացեք հետևյալ մտահայեցողական իրադրության ուսումնասիրությունը.

Վերջերս միսիոներներին հանդիպելուց հետո, Միլլերների ընտանիքն ընդունում է Կիրակի օրը Եկեղեցի հաճախելու հրավերը: Հաղորդություն ժողովի ժամանակ Միլլերները հայտարարություն են լսում ցցի քահանայության ժողովի, ծխի Սփոփող Միության զարգացման միջոցառման և Երիտասարդների միացյալ միջոցառման մասին: Տեր և տիկին Միլլերները միսիոներների հետ հաճախում են Կիրակնօրյա դպրոցի դասարան: Ուսուցիչն օգտագործում է այնպիսի բառեր, ինչպիսիք են *տնտեսություն, մահկանացու փորձնական ժամանակ, հոգիների աշխարհ* և *թելեստիալ* արտահայտությունները:

Ուսանողներին հարցրեք. Ինչպե՞ս կարող էին միսիոներները նախապատրաստել Միլլերներին եկեղեցական ժողովի այդ առաջին փորձառությանը:

Բացատրեք, որ Եկեղեցու անդամները հաճախ շատ բառեր են օգտագործում, որոնց իմաստը ծանոթ չէ հետաքրքրվողներին: Օրինակ, ծխական շենք հասկացողությունը, որը Վերջին օրերի Սրբերի համար նշանակում է եկեղեցական շինություն, այլ հավատքի մարդկանց համար կարող է հնչել որպես համայնքային նշանակության կառույց: Երբեմն, անգամ միևնույն բառը երկու տարբեր կրոններում կարող է շատ տարբեր իմաստներ ունենալ: Շատ տերմիններ, հասկանալու խնդիր են առաջացնում նրանց համար, ովքեր ծանոթ չեն մեր հավատքին: Օրպես օրինակ՝ գրատախտակին գրեք հետևյալ բառերը.

Ուրացություն
Առաքյալ
Փրկության արարողություններ
Քահանայություն
Ցից
Ցցի կենտրոն
Վկայություն
Ծուխ կամ ճյուղ

Հրավիրեք ուսանողներին հասարակ սահմանումներ առաջարկել վերոհիշյալ յուրաքանչյուր բառի համար և գրեք այն գրատախտակին: Հետևյալ բացատրությունները կարող են օրինակ լինել սահմանումների համար.

Ուրացություն: Երբ մարդիկ երես են թեքում Աստծուց և Նրա ուսմունքներից. ճշմարտությունից հեռանալը:

Փրկության արարողություններ: Սրբազան ծեսեր կամ ծիսակատարություններ, որոնք հոգևոր իմաստ ունեն:

Քահանայություն: Աստծո անունով գործելու իշխանություն. Աստծո իշխանություն, որը Նա կիսում է Իր Եկեղեցու հավատարիմ տղամարդկանց հետ:

Ծուխ կամ ճյուղ: Որոշակի տարածքում ապրող և միասին երկրպագող եկեղեցու անդամների խումբ:

Քննարկեք, թե ինչու միսիոների համար կարևոր կլինի նմանատիպ բառերը բացատրել հետաքրքրվողներին: Խնդրեք ուսանողներին այդ ցուցակին ավելացնել մի քանի այլ բառեր, որոնք հետաքրքրվողները հնարավոր է չիմանան, բայց կարող է լսեն միսիոներական դասերի ընթացքում: Թող դասարանի անդամները հասարակ սահմանում առաջարկեն իրենց ավելացրած յուրաքանչյուր բառի համար: Եթե նրանք չառաջարկեն հետևյալ բառերը, հնարավոր է, դուք ցանկանաք նրանց ցուցակին ավելացնել հետևյալ բառերը. Աստվածաշունչ, եպիսկոպոս, համբերել մինչև վերջ, Սուրբ Հոգու պարգև, Երեխաների միություն, Սփոփող Միություն, վերականգնում, հաղորդություն, ցից, գայթակղություն, վկայություն:

Միսիոներները պետք է հետաքրքրվողներին բացատրեն բառերն ու արտահայտությունները, որոնք օգտագործվում են ուսուցման ժամանակ և Եկեղեցու այցելություններին նախապատրաստելիս: Դասերից առաջ միսիոներները դասարանի հրահանգիչներին կարող են տեղեկացնել, որ դասարանում հետաքրքրվողներ կան, որպեսզի ուսուցիչները զգայուն լինեն օգտագործված բառերի համար: Շատ ծխերում և ճյուղերում առաջարկվում են Ավետարանի Սկզբունքների դասեր, որոնք պատշաճ են քիչ ակտիվ անդամների կամ ոչ անդամների համար:

Մի մեծ հարցական նշան գրեք գրատախտակին: Հրավիրեք, որ ուսանողները քննարկեն, թե լավ ուսուցման համար հարցեր տալն ինչու կենսական նշանակություն ունի: Եթե ուսանողը չի քննարկում հետևյալ միտքը, ապա, դուք փորձեք կարդալ այն դասարանի համար.

Հիսուս Քրիստոսը՝ Վարպետ Ուսուցիչը, հաճախ էր հարցեր տալիս, որպեսզի օգներ մարդկանց խորհել և կիրառել Իր ուսուցանած սկզբունքները.... Նրա հարցերը մտածելու, անձը քննելու և պարտավորություն վերցնելու հնարավորություն էին տալիս» (*Teaching, No Greater Call* [1999], 68):

Շեշտեք, որ ոչ բոլոր հարցերն են միևնույն նպատակին ծառայում: Քննարկեք միսիոներների կողմից օգտագործվող տարբեր հարցերը և օգնեք ուսանողներին գիտակցել դրանց նպատակը և հարցեր տալու կարևոր ուղեցույցները: Հարցերի վերաբերյալ հետևյալ մտքերը կարող են ձեր դասարանային քննարկմանը:

«*Այո*» և «*ոչ*» հարցեր: Հարցերը, որոնց պատասխանները կարող է լինել *այո* կամ *ոչ*, կարող են օգտագործվել պարտավորություններ ստանձնելու կամ որոշելու համար՝ արդյոք լսողը ձեզ հասկանում է կամ համաձայն է, թե համաձայն չէ ձեր ուսուցանածի հետ: Ուսանողներին հրավիրեք հիշել պարտավորության հրավերի որևէ հարց, որ միսիոները կարող է օգտագործել:

Տվեք հարցեր, որոնք դրդում են մտածել և հրավիրում են պատասխանել: Գրեք *ինչ, ինչպես* և *ինչու* բառերը գրատախտակին: Ուսանողներին հարցրեք, թե ինչով են այս կարգի հարցերը տարբերվում *այո/ոչ* հարցերից: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ *ինչ, ինչպես* և *ինչու* բառերով սկսվող հարցերը սովորողներին քաջալերում են ավելի խորը մտածել ավետարանի սկզբունքների և սուրբ գրությունների հատվածների շուրջ: Դրանք ավելին են պահանջում, քան *այո* կամ *ոչ* պատասխանները: Սովորաբար, դրանք ունեն ավելի քան մեկ ճիշտ պատասխան): Հրավիրեք դասարանի անդամներին առաջարկել մեկ կամ երկու հարց, օգտագործելով *ինչ, ինչպես* և *ինչու* բառերը, որոնք միսիոներները կարող են օգտագործել վերականգնված ավետարանն ուսուցանելիս: Ահա մի քանի օրինակներ.

- *Ի՞նչ* սովորեցիք դուք Առաջին Տեսիլքի պատմությունից:
- *Ինչպե՞ս* կնկարագրեիք հավատք բառը:
- *Ինչ եք կարծում, ինչո՞ւ է* Երկնային Հայրն այնպես արել, որ մենք մոռանանք, թե ինչպիսին էր նախքան երկիր գալը Նրա հետ ապրած կյանքը:

Գրեք նրանց առաջարկած հարցերը գրատախտակին: Հարցեք, թե ինչո՞ւ նմանատիպ հարցերը շատ արժեքավոր կլինեին, որ միսիոները հարցներ հետաքրքրվողին: Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ նմանատիպ հարցերը շատ արժեքավոր են, երբ նրանք օգնում են հետաքրքրվողներին կիրառել ավետարանի սկզբունքներն իրենց կյանքում:

Մտածելու ժամանակ տվեք, նախքան պատասխանի սպասելը: Ուսանողներին երեք կամ չորս հարց տվեք, պայմանով, որ երկու երեք վայրկյանից չպատասխանելուց հետո *դուք* ինքներդ կպատասխանեք հարցին: Այնուհետև հարցրեք, թե ի՞նչը դժվարացրեց ձեր հարցերին պատասխանելը:

- Ինչո՞ւ է հետաքրքրվողներին մտածելու ժամանակ հարկավոր՝ հարցերի մեծ մասին պատասխանելուց առաջ:
- Ուսուցման իրավիճակում, ձեր կարծիքով, ինչո՞ւ է հնարավոր, որ որոշ միսիոներներ բավականաչափ համբերատար չլինեն, որպեսզի թույլ տան նրանց, ում ուսուցանում են, մտածեն հարցի շուրջ՝ նախքան պատասխանելը:
- Եթե պատասխանելու համար տալիս եք բավականաչափ ժամանակ և ձեր ուսուցանած մարդիկ դեռևս չեն պատասխանում հարցին, ինչո՞ւմ կարող է լինել խնդիրը (Եթե պատասխան չի տրվում, ապա, հնարավոր է, հարցը պարզ չի եղել և կարիք կա, որ միսիոները փոխի հարցի ձևակերպումը):

Լսեք հետաքրքրվողների հարցերը: Ուսանողներին հարցրեք, արդյոք եղել է դեպք, երբ իրենց ուղղված հարցին տրված պատասխանն անտեսվել է:

- Ինչպե՞ս է ձեր պատասխանն անտեսելը կամ չգնահատելն ազդել մյուս հարցերին պատասխանելու ձեր ցանկության վրա:

Միսիոներները կարող են հավաստիանալ, որ պատասխանը հասկանալի է, տալով լրացուցիչ հարցեր, օրինակ՝ «Կարո՞ղ եք մի օրինակ ասել, թե ինչ նկատի ունեք դուք» կամ «Ի՞նչ նկատի ունեք՝ ասելով դա»: Հարցերը կարելի է վերահասցեագրել նաև միսիոներական դասի մյուս մասնակիցներին, հարցի վերաբերյալ նրանց զգացումներն իմանալու համար:

Վարժություն. Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որպեսզի այդ հմտությունները վարժեցնեն: Թող նրանք պատկերացնեն, որ որպես միսիոներ նրանք հենց նոր ուսուցանեցին տասանորդի օրենքը: Թող ուսանողներից երկուսը կամ երեքը ավետարանի հասարակ հարցեր գրեն, օգտագործելով *ինչ, ինչու* կամ *ինչպես* բառերը: Հավաստիացեք, որ այդ հարցերից առնավազն մեկը սովորողին քաջալերում է կիրառել ավետարանի սկզբունքը: Ապա թող ուսանողները երկու կամ երեք հոգով խմբեր կազմեն և միմյանց հետ կիսվեն իրենց հարցերով: Քաջարերեք նրանց ժամանակ տրամադրել մտածելու հարցի մասին, նախքան պատասխան սպասելը, և քննարկել հնարավոր լրացուցիչ հարցերը, որ նրանք կարող են տալ:

Խնդրեք, որ յուրաքանչյուր խումբ գնահատի հարցերը: Թող նրանք նշեն, թե հարցերից որոնք կարող են հետաքրքրվողներին դրդել ավելի շատ մտածել, և որ հարցերն ավելի շատ արձագանքներ կպահանջեն: Ո՞ր հարցերը կարելի է բարելավել, և ինչպես կարելի է դրանք ձևափոխել, որ ավելի լավ հարցեր դառնան:

Ի լրումն հարցեր տալու, ուրիշ ի՞նչ ձևեր կան, որ կարող եք օգտագործել, որպեսզի իմանաք, որ ինչ-որ մեկն, ում դուք ուսուցանում եք, հասկանում է ձեզ: Թող ուսանողները կարդան Նախագահ Բոյդ Ք. Փաքերի խորհուրդն ուսանողների ձեռնարկում (էջ 36) լսողների աչքերին հետևելու մասին: Ապա քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կարող է մեկի աչքերը, դեմքի արտահայտությունը կամ մարմնի շարժումները ձեզ հուշել, թե ինչպես են նրանք ընդունում ձեր ուսուցանածը:
- Ինչո՞ւ է նույնքան կարևոր ուշադրություն դարձնել ձեր ուսուցումը լսողի ոչ բանավոր փոխազդեցությանը, որքան նրա արտահայտած բառերին:

Կիսվեք ուսուցանելու հետևյալ իրավիճակով, և հրավիրեք ուսանողներին՝ (1) հայտնաբերել հավանական խնդիրը, (2) քննարկեք, թե միսիոներն ինչպես փորձեց լուծել այն և (3) որոշեք, թե ուրիշ ինչ լուծումներ կարելի է օգտագործել: (Հավանական խնդիրներն ու լուծումները տրված են փակագծերում): Ձեր դասարանի քանակից կախված, կարող եք քննարկել այս հարցերը խմբերում.

- Քաղաքային այգում հանդիպելով պրն. Լոպեսին և ցույց տալով նրան Մորմոնի Գիրքը՝ միսիոներները տալիս են նրան մի օրինակ և բացատրում, որ Մորմոնի Գրքում յուրահատուկ մի խոստում կա: «Խնդրում ենք կարդացեք, թե ինչ է ասվում Մորոնիի 10.3–5 հատվածում», խնդրեց Երեց Արոյոն: Նրա գործընկերն ավելացրեց. «Մորոնին մի մարգարե է եղել հնագույն Ամերիկայում: Նրա խոսքերը գտնվում են Մորմոնի Գրքի այս օրինակի 529 էջում»: (Պրն. Լոպեսը հնարավոր է չիմանա, թե ով է Մորոնին, ոչ էլ այն, թե որտեղ գտնի սուրբ գրության այդ հատվածը: Միսիոներները կարող են օգնել իրենց ուսանողներին, տալով համառոտ, հասարակ նախապատմություն, առաջարկելով կարդալու էջերը: Պրն. Լոպեսը կարող է նաև կարդալու դժվարություն ունենալ: Երեցները կարող են նրան հարցնել, թե արդյոք նրան հարմար է բարձրաձայն կարդալ: Հնարավոր է, նրանք առաջարկեն իրենք կարդան, իսկ նա հետևի իր օրինակին):
- Քույր միսիոներները տիկին Յանգին ուսուցանում են ինչպես աղոթել: Նրանք հրավիրում են նրան աղոթք ասել, սակայն նա քաղաքավարի հրաժարվում է, բացատրելով, որ ինքը

հարմար չի զգում այս նոր ձևով աղոթել: Նախկինում նա անգիր արած աղոթքներ էր ասում, և նրան ժամանակ է պետք, որ հարմարվի սրտից բխող աղոթքներ ասելու համար: Երբ քույր Ռամոսն առաջարկում է, որ ինքն աղոթի միսիոներական դասի ավարտին, նա աղոթում է մի քանի րոպե, արտահայտելով անձնական շատ մտքեր ու զգացումներ, օգտագործելով բազմաթիվ արտահայտություններ, որոնք հայտնի են Եկեղեցու անդամներին: (Երբ մարդուն սովորեցնում ենք աղոթել, մենք պետք է կարճ աղոթքներ ասենք և հետևենք հետաքրքրվողին ուսուցանած աղոթքի օրինակին):

- Քաթլերների ընտանիքը մի քանի փոքր երեխաներ ունի: Միսիոներները ցանկանում են ավետարանի մի քանի սկզբունքներ ուսուցանել, որոնք քննարկելու համար գրեթե մեկ ժամ ժամանակ է հարկավոր: Նրանք որոշում են դասը մի քանի մասի բաժանել, նախընտրելով մեկ անգամի փոխարեն դրանք ուսուցանել մի քանի այցելության ընթացքում: Նրանք իրենց հետ բերում են նաև նկարներ և առարկաներ, որոնք կօգնեն ցուցադրել քննարկվող սկզբունքը: (Զգայուն եղեք ժամանակի սահմանափակումներին: Ձեր ուսուցումը համապատասխանեցրեք լսողների կարիքներին: Եթե նրանք երեխաներ են, անգամ եթե չափահաս են, հասարակ նկարները ու առարկաները հաճախ կարող են ավելացնել լսողների հասկացողությունը և կենտրոնացնել ուշադրությունը):
- Մինչ Երեց Գոմեսը բացատրում է, որ մենք գնում ենք հոգիների աշխարհ, երբ մահանում ենք, նրա գործընկերը՝ երեց Ջոնսոնը, նկատում է պատանի լսողներից մեկի հարցական հայացքը: (Գործընկերները պետք է հետևեն և զգայուն լինեն ուսուցանվողների մտահոգություններին ու ըմբռնմանը: Երբ խոսողը դուք չեք, շարունակեք պահպանել տեսողական շփումը, որպեսզի զգաք, երբ հետաքրքրվողները լրացուցիչ բացատրության կամ վկայության կարիք ունեն: Անհրաժեշտության դեպքում նման օգնություն առաջարկեք: Աղոթեք ձեր գործընկերոջ համար):

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Հարցազրույց անցկացրեք ձեզ հայտնի ամենաարդյունավետ ավետարանի ուսուցչի հետ: Խնդրեք նրանց կիսվել, թե ինչն է նրանց օգնել Հոգով ուսուցանել: Հրավիրեք նրանց կիսվել իրենց մտքերով, թե ինչպես կարելի է ուսուցանել և ինչպես կարելի է Հոգին հրավիրել ձեր ուսուցման մեջ: Նշումներ կատարեք ձեր հարցազրույցի ժամանակ:

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ԵՎ ՆԱԵՎ ՀԱՎԱՏՔՈՎ», ՄԱՍ Ա

Միսիոներների Պատրաստման Կենտրոնում, միսիոներները օրական մի քանի ժամ ծախսում են անձնապես և զուգընկերոջ հետ միասին սուրբ գրությունների ուսումնասիրության վրա: Միսիայի ծառայության ընթացքում միսիոներները պետք է շարունակեն ամեն օր իրենց ուսումնասիրությունը: Նրանք պետք է սովորեն «ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎԵՈՒ 88.118), աշխատելով կառուցել ավետարանի գիտելիքի պաշարների պահոց, որը կարևոր է իրենց ուսուցանման համար:

Այս գլուխն ուսանողներին ուսուցանում է ինչպես գիտելիք ձեռք բերել ուսումնասիրելով և նաև հավատքով: Նրանք հնարավորություն կունենան վարժվելու ուսուցանել դասաժամի ընթացքում այս գրառումների օգնությամբ: Ուսումնասիրելով և հավատքով դասի նախապատրաստությանն անդրադարձ է արվում նաև 6-րդ գլխում, որպեսզի ավելի շատ ժամանակ հատկացվի ուսումնասիրության և դաս պատրաստելու կարևոր ունակությունները զարգացնելու և ներկայացնելու հարցին: Ուսանողները շատ հնարավորություններ կունենան այդ դասընթացի ժամանակ, ՄՊԿ-ում, միսիայի ծառայության և կյանքի ընթացքում կիրառելու Տիրոջ խորհուրդը տրված Հայրոմ Սմիթին նրա միսիայից առաջ. «Նախ փնտրիր իմ խոսքը» (ՎԵՈՒ 11.21):

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Աղոթքը և սուրբ գրությունների շուրջ խորհելը մեզ օգնում են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը:
- Մենք պետք է փնտրենք ձեռք բերել խոսքը:
- Մենք խոսքը ձեռք ենք բերում ուսումնասիրելով և նախապատրաստվելով ուսուցանելու վերականգնված ավետարանը:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Աղոթքը և սուրբ գրությունների շուրջ խորհելը մեզ օգնում են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը:

Բացատրեք, որ հոգևոր հաղորդակցումը հիմնականում պահանջում է մեր կողմից որոշակի նախնական ջանք: Կիսվեք Յոթանասունից Երեց Լ. Լայոնել Քենդրիկի հետևյալ խոսքերով:

> «Անձնական հայտնություն ստանալը պասիվ գործընթաց չէ: Երբ մենք փնտրում ենք նման հայտնություն, մենք պետք է պատրաստվենք այդ սուրբ փորձառություններին: Նախագահ Սփենսեր Վ. Քիմբալը մեզ ասել է, որ Աստված հայտնում է Իրեն մարդկանց, ովքեր պատրաստ են նման հայտնությունների» (*CR*, April 1964, p. 97)» («Personal Revelation», *Brigham Young University 1996–97 Speeches* [1997], 252):

- Ի՞նչ որոշակի քայլեր մենք կարող ենք անել ոգեշնչում ստանալուն պատրաստվելու համար:
- Ո՞րն է մեր պարտականությունը ոգեշնչում ստանալուց հետո (տես ՎԼՈՒ 46.7):

Օգտագործեք հետևյալ պնդումները և հարցերը, որոնք ձեզ կօգնեն քննարկել այդ սկզբունքները ձեր ուսանողների հետ.

Աղոթքը հոգևոր հաղորդակցման հիմքն է: Կարդացեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

> «Ոգեշնչումը չի գալիս, հնարավոր է և չի կարող գալ, եթե դուք չխնդրեք այն, կամ որևէ մեկ չխնդրի այն ձեզ համար:
>
> Սուրբ գրություններում ոչ մի այլ ուղերձ այդքան հաճախ չի կրկնվում, ինչպես աղոթելու՝ խնդրելու հրավերը, անգամ պատվիրանը:
>
> Աղոթքը հայտնության այնքան կարևոր մաս է, առանց որի վարագույրը կարող է փակ մնալ ձեզ համար: Սովորե՛ք աղոթել: Հաճա՛խ աղոթեք: Աղոթեք ձեր մտքում, ձեր սրտում: Աղոթեք ձեր ծնկների վրա» (in Conference Report, հոկ. 1994, 76; կամ *Ensign*, Nov. 1994, 59):

- Ինչո՞ւ է կարևոր, որ դուք հաճախ աղոթեք ներշնչման համար:
- Ե՞րբ և որտե՞ղ եք դուք լավագույն ժամանակը և վայրը գտնում օրվա մեջ լուրջ մտահոգությունների կամ կարիքների մասին աղոթելու համար:

Սուրբ գրությունների մասին խորհելը պատրաստում է մեզ հայտնություն ստանալուն: Միասին կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 76.19 և 138.1–2, 11:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում խորհել (տես 2 Նեփի 4.16):
- Ձեր կարծիքով, ե՞րբ միսիոներները պետք է ժամանակ հատկացնեն սուրբ գրությունների մասին խորհելուն:

Կարդացեք Քույր Էնն Գ. Վիրթլինի խոսքերն ուսանողի ձեռնարկում (էջ 39) և ուսանողներին խնդրեք քննարկել, թե ինչու է սուրբ գրությունների շուրջ խորհելը հայտնություն բերում:

Մենք պետք է փնտրենք ձեռք բերել խոսքը:

Փակեք Միսիոներների Պատրաստման Կենտրոն անվանումը կրող պիտակը և դասարանին ցույց տվեք հետևյալ նկարը: Ուսանողներին հարցրեք, թե արդյոք ճանաչում են այդ շենքը և գիտեն, թե որտեղ է այն գտնվում: Բացեք պատասխանը և ուսանողներին ասացեք, որ աշխարհում կան շատ Միսիոներների Պատրաստման Կենտրոններ, ներառյալ ամենախոշորը և ամենահայտնին, որը գտնվում է Պրովոյում՝ Յուտա: Այդ կենտրոնները գտնվում են Անգլիայում, Նոր Զելանդիայում, Գանայում, Բրազիլիայում, Դոմինիկյան Հանրապետությունում, Ֆիլիպիններում, Ճապոնիայում, Հարավային Աֆրիկայում, Իսպանիայում, Պերուում, Մեքսիկայում, Կորեայում, Գվատեմալայում, Կոլումբիայում և Չիլիում: Ուսանողներին խնդրեք կիսվել իրենց Միսիոներների Պատրաստման Կենտրոնում տեղի ունեցող հիմնական գործունեության մասին իրենց իմացությամբ: Բացատրեք, որ ՄՊԿ-ի հիմնական մասնագիտացումը վերականգնված ավետարանի մասին գիտելիքն է:

- Ինչո՞ւ դուք չպետք է սպասեք ՄՊԿ-ին վերականգնված ավետարանը լրջորեն ուսումնասիրելու համար:

Տարբեր ուսանողների խնդրեք բարձրաձայն կարդալ հետևյալ սուրբ գրություններից որևէ մեկը. Վարդապետություն և Ուխտեր 11.21; 42.14; 84.85; 100.5–8:

- Ի՞նչ սկզբունքներ դուք կարող եք քաղել այս հատվածներից: (Գրեք դրանք գրատախտակին):

Կիսվեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ խոսքերով.

> «Մենք սիրում ենք մեր բոլոր միսիոներներին, ովքեր ծառայում են Տիրոջը լիաժամկետ միսիայում: Սակայն միսիոներները տարբեր են լինում: Ոմանք միսիայի հենց առաջին ամսից ավելի լավ են պատրաստված Տիրոջը ծառայելու, քան նրանք, ովքեր քսանչորս ամիս անց վերադառնում են տուն:
>
> Մենք ցանկանում ենք, որ միսիայի ծառայությունը սկսող երիտասարդները «եփված» լինեն, որոնք ունեն անձնական արդարակեցությունից և մաքուր կյանքից ծնված հավատք, որպեսզի անցկացնեն հիանալի և արդյունավետ միսիա» (in Conference Report, ապրիլ 1986, 59; կամ *Ensign*, May 1986, 45):

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում սկսել միսիայի ծառայությունը «եփված»:

Մենք խոսքը ձեռք ենք բերում ուսումնասիրելով և նախապատրաստվելով ուսուցանելու վերականգնված ավետարանը:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերով.

> «Ես ասել եմ ողջ աշխարհի միսիոներներին, որ իրենք հաջողում կամ ձախողում են իրենց միսիան առավոտյան 6.30–9.30 ընկած հատվածում» («Missionary Work and the Atonement of Jesus Christ» [սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 20, 2000], 5):

- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Երեց Հոլլանդը: (ժամանակին արթնանալը, միսիոներական ուսումնասիրության ժամանակը, ծրագրավորումը, աղոթքը):
- Ինչպե՞ս կարող է արդյունավետ ուսումնասիրությունը օգնել «հաջողել կամ ձախողել» միսիան:

Միսիոներների Պատրաստման Կենտրոն Պրովոյում՝ Յուտա:

Թեև միսիաների ժամացուցակները տարբեր են, միսիոներներից ակնկալվում է ամեն օր նշանակալից ժամանակ հատկացնել վերականգնված ավետարանի անձնական և զուգընկերոջ հետ միասին ուսումնասիրությանը և իրենց լեզվին:

Կիսվեք միսիոներական ուսումնասիրության ժամանակի մասին Երեց Հոլլանդի խոսքերով: Հետևեք նրա խորհրդի հիմնական միտքին.

> «Առավոտյան ժամերին է, երբ ջանասեր, պրպտող և աղոթող միսիոները ստանում է Որդու մասին Հոր վկայությունը, որը կրակով և Սուրբ Հոգով ծնվում է *միսիոների* սրտում: Այդ պատճառով ենք մենք ցանկանում, որ ժամանակին արթուն լինեք.... Մենք ցանկանում ենք, որ դուք ի վիճակի լինեք պատրաստվելու, ստանալու Տիրոջ Հոգին, թարմացնելու ձեր վկայությունը փրկության աշխատանքի մասին, որի մեջ ընդգրկված եք՝ փրկության, որը Հիսուս Քրիստոսում է» («Missionary Work and the Atonement of Jesus Christ», 5):

- Ո՞րն է օրվա սուրբ գրությունների հիմնական նպատակը:

10 Մի ուսանողի խնդրեք կարդալ Երեց Լ. Թոմ Փերիի հուշերն այն մասին, թե ինչպես է միսիոների իր անձնական ուսումնասիրությունն ազդել իր կյանքի վրա (տես ուսանողի ձեռնարկ, էջ 40) կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 10 (0:53) շարժանկարը: Ուսանողներին խնդրեք ուշադրություն դարձնել, թե ինչ օգուտ է նա քաղել իր օրվա փորձառությունից:

- Ի՞նչ առավելություններ է նշում Երեց Փերին անհատական ուսումնասիրության, զուգընկերոջ հետ ուսումնասիրության արդյունքում:

Ուսանողներին խրախուսեք պարտավորվել լավագույն օգուտը քաղել օրվա իրենց ուսումնասիրությունից:

Ուսանողներին խնդրեք հիշողությամբ արտասանել հավատո հանգանակներից որևէ մեկը: Նմանապես խնդրեք անգիր ասել սեմինարիայի ընթացքում խորացված ուսումնասիրության երկու-երք հատվածներ: Ապա այդ ուսանողներին խնդրեք նկարագրել այն գործընթացը, որին հետևել են դրանք անգիր սովորելու համար:

- Ի՞նչ օգուտ է բերում միսիոներին թվով շատ սուրբ գրությունների հատվածներ անգիր իմանալը:
- Ինչպե՞ս կարող է սուրբ գրությունների անգիր սովորելը հանդիսանալ հավատքի և ուսումնասիրության վարժություն:

Ուսանողներին բացատրեք խոսքն ուսումնասիրությամբ ձեռք բերելու արդյունավետ միջոց է հանդիսանում սովորելը գտնել և կիրառել սուրբ գրությունները ձեր անձնական կյանքում: *Սկզբունքը* հիմնարար ճշմարտություն է, որը հիմք է ծառայում հավատքի կամ գործողության համար: *Կիրառել* նշանակում է, որ մարդ օգտագործում է տրված ցուցումը կամ միտքը՝ իր ըմբռնումը կամ պահվածքը բարելավելու կամ ամրապնդելու համար:

Որոշ սուրբ գրություններ նշում են սկզբունքն ուղղակիորեն: Օրինակ, ուսանողներին խնդրեք կարդալ Ալմա 41.10 և նշեք վերջին նախադասության մեջ նշված սկզբունքը: («Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»):

- Ինչպե՞ս դուք կարող եք կիրառել այս սկզբունքը ձեր կյանքում:

Կան սուրբ գրություններ, որոնց միտքը անուղղակի է և պահանջում է մտավոր ջանքեր՝ սկզբունքը վերհանելու համար: Օրինակ՝ ուսանողներին խնդրեք կարդալ Հովհաննես 3.5 հատվածը և նշեք այդ սուրբ գրության մեջ պարունակվող սկզբունքը: Հնարավոր պատասխաններն են.

- Եկեղեցուն միանալու համար պետք է մկրտվել և հաստատվել:
- Սելեստիալ արքայություն մտնելու համար պահանջվում է մկրտություն և հաստատում:
- Լավ Վերջին Օրերի Սուրբ լինելու համար դուք պետք է պատվեք ձեր մկրտության ուխտերը և ապրեք այնպես, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա գործել ձեր կյանքում:

Բացատրեք, որ հաճախ սուրբ գրության մեկ հատվածից կարելի է վերհանել մեկից ավել սկզբունքներ: Ուսանողներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 31.1 հատվածը և առաջարկեք գտնել որքան հնարավոր է շատ սկզբունքներ, այդ կարճ հատվածի մեջ: Նրանց լրացուցիչ ժամանակ տվեք յուրաքանչյուր պատասխանից հետո մտածելու համար: (Մի մտահոգվեք լռության կարճ պահերով, մինչ ուսանողները մտածում են):

Հնարավոր պատասխաններ են.

- Տերը գիտի յուրաքանչյուրիս անվանապես («Թոմաս»):
- Մենք կարող ենք դառնալ Հիսուս Քրիստոսի որդիները և դուստրերը («իմ որդի»):
- Օրհնությունը տրվում է հավատքի արդյունքում («Օրհնված եք դուք ձեր հավատքի շնորհիվ»):
- Ավետարանական հնազանդության մեջ պատճառա-հետևանքային կապ գոյություն ունի (օրինակ՝ հավատքը օրհնություններ է բերում):
- Սա Աստծո աշխատանքն *է* («իմ աշխատանքը»):
- Մեր հավատքը պահանջվում է Աստծո աշխատանքը հասկանալու համար:
- Աստված ճանաչում է Իր զավակներին:
- Հայտնությունը տրվել է վերջին օրերին:
- Աստված կարող է խոսել սովորական մարդկանց հետ:

Ուսանողներին զգուշացրեք, որ մենք չպետք է «ճոխացնենք» կամ «աղավաղենք» սուրբ գրությունների իմաստը, կամ գտնենք գաղափարներ, որոնք այնտեղ չկան, սակայն հաճախ մենք բավական չենք խորհում խորությամբ հասկանալու համար այն սկզբունքները, որոնք թաքնված են սուրբ գրություններում: Ուսանողներին խրախուսեք ավելի դանդաղ կարդալ սուրբ գրությունները և ավելի խորը մտածել դրանց մասին:

Կրկնեք վարժությունը, ընտրելով ստորև տրված հղումներից մեկը կամ երկուսը, խնդրելով դասարանին պատասխանել նույն ձևով, ինչպես նախկինում, կամ քննարկեք հանձնարարված վկայակոչումները և թույլ տվեք նրանց գտնել և քննարկել հանձնարարված հղումներն իրենց խմբի մեջ:

- Ալմա 32.41–42
- Մատթեոս 5.14–16
- Սաղմոս 1.1–3
- Մովսես 6.57

Հինգից-տաս րոպե տվեք ուսուցողական այս վարժության համար: Ավարտեք, խնդրելով ուսանողներին ամփոփիչ դիտողություններ անել սուրբ գրություններից սկզբունքներ վերհանելու արժեքի մասին:

Ցուցադրեք սուրբ գրքերի մի օրինակ, որի մեջ շատ նշումներ կան կատարած: Դա կարող է լինել ձեր սուրբ գրությունը, կամ, եթե լինի ձեր ուսանողներից որևէ մեկի սուրբ գրությունը, ավելի լավ:

- Ո՞րն են սուրբ գրություններում նշումներ կատարելու հնարավոր արժեքները:

Ուսանողներին խնդրեք կիսվել սուրբ գրություններում նշումներ կատարելու օգտակար եղանակներով: Առաջարկությունները գրեք գրատախտակին: Շեշտեք, որ կան շատ ճանապարհներ սուրբ գրությունները նշելու համար և որ դա անձնական ընտրություն է: Եթե ուսանողները որոշեն նշումներ կատարել իրենց սուրբ գրություններում, իրենք կարող են ընտրել այնպիսի եղանակ, որն օգնում է նշել կարևոր բառերը, արտահայտությունները, մտքերը, մարդկանց կամ իրադարձությունները: Շատ մարդկանց համար, սուրբ գրություններում նշումներ կատարելը օգնում է ավելի հեշտ հիշել և գտնել դրանք: Ավելի լավ է շեշտել սուրբ գրությունների հիմնական տարրերը, նշումներ կատարելով, քան որոշակի նշելու համակարգ ուսուցանելով: Վերանայեք սուրբ գրություններում նշումներ կատարելու մասին ուսանողի ձեռնարկում (էջ 41):

Ուշադրություն. Ուսուցանման հետևյալ առաջարկությունը ներկայացնում է դասի ծրագրեր կազմելու հմտություն: Այս հմտությունը կարող է օգտագործվել ժամանակ առ ժամանակ այս դասընթացի ընթացքում: Միսիոներները խրախուսվում են գրել իրենց մտքերը և կազմակերպել դրանք, որպեսզի հասկանան վերականգնված ավետարանի վարդապետությունները: *Միսիոներները պետք է պատրաստվեն այն ճանապարհով, որն ավելի արդյունավետ է իրենց համար:* Միսիոներները, ովքեր գնում են Միսիոներների Պատրաստման Կենտրոն այս անելու արդեն ձեռք բերած փորձով, առավելություն կունենան իրենց միսիային նախապատարստվելիս:

Ուսանողներին խնդրեք նկարագրել, թե ինչ է իրենից ներկայացնում դասի ծրագիրը: Դուք կարող եք խնդրել ուսանողներին անդրադառնալ դասի ծրագրի նմուշին ուսանողի ձեռնարկում (տես էջ 45): Շեշտեք, որ սա միայն մեկ օրինակ և որ կան շատ տարբեր ուղիներ դասեր պատրաստելու համար: Որոշ մարդիկ օգտագործում են թվեր և տառեր՝ տարբեր կետեր թվելու և կազմակերպելու համար: Մյուսները օգտագործում են հասարակ նկարներ:

Ուսանողներին հարցրեք, կազմե՞լ են արդյոք ծրագիր գրավոր հանձնարարության կամ ելույթի համար:

- Ինչպե՞ս է օգնել այդ նախապատրաստությունը:

Միսիայի ծառայության ընթացքում դասի ծրագիր կազմելը նույն նպատակն ունի: Մի քանի ուսանողներին խնդրեք ուսանողի ձեռնարկում (էջ 42–43) հերթով բարձրաձայն կարդալ պարբերություններն այն մասին, ինչպես է դասի ծրագիր գրելը խորացնում ուսման և ուսուցանման գործընթացը: Այնուհետև դասարանով քննարկեք այն գործոնները, որոնք պետք է հաշվի առնել դա անելիս, և դասի ծրագրի նմուշը, որը տրված է ուսանողի ձեռնարկում (էջ 43–44):

Ուսանողներին խնդրեք զույգերի բաժանվել: Դատարկ թղթի վրա յուրաքանչյուր զույգի խնդրեք 15 րոպե խորհրդակցելուց հետո գրել դասի ծրագիր ավետարանի մեկ թեմայի ուսուցանման համար, օրինակ՝ Աստվածագլխի, Առաջին Տեսիլքի, աղոթքի, առ Հիսուս Քրիստոս հավատքի, ապաշխարության, տասանորդի կամ ծոմապահության: Նախապատրատության ժամանակից հետո ուսանողների մի քանի զույգերի խնդրեք դասարանի հետ կիսվել իրենց ծրագրով: (Եթե դասի ժամը չի բավականացնում, ասացեք ուսանողներին պահել իրենց աշխատանքը և բերել այն հաջորդ դասին):

Յուրաքանչյուր զույգի խնդրեք իր թեման ուսուցանել մեկ այլ զույգի: Նրանք կարող են բացատրել իրենց սովորածը, բացատրելով այն իրենց խոսքերով, անդրադառնալով դասի ծրագրին, որպեսզի հիշեն այն բոլոր կետերը, որոնցով ցանկանում էին կիսվել: Երկու ուսանողներն էլ պետք է մասնակցեն ուսուցանման վարժությանը, ինչպես զուգընկերներն անում են դա միսիայի ծառայության ընթացքում:

Ուսանողներին ասացեք, որ երկու զույգերի ուսուցանումից հետո, նրանք, ում ուսուցանում էին, պետք է գնահատեն և տան իրենց կարծիքն ուսուցանման մասին: Կարծիքը տալուց պետք է նշել վարդապետությունները, սուրբ գրությունները և նկարները, որոնք պարզ էին և օգտակար: Պետք է արվեն այնպիսի առաջարկություններ, որոնք կբարելավեն ուսուցանումը,

օրինակ լրացուցիչ սուրբ գրությունների ուսուցանում, բացատրություններ կամ սուրբ գրություններ, որոնք պարզ չէին, և դրանք բարելավելու եղանակներ, և այլն:

Ներկայացրեք գնահատումներն ուսանողներին, շեշտելով, որ ուրիշներից կարծիք ստանալն արժեքավոր է: Կարծիք հայտնելու նպատակը ոչ թե քննադատելն է, այլ լավ աշխատանքը գովաբանելը և օգնելը, որ աշխատանքը բարելավվի: Նշեք, որ կարծիք հայտնելն ու կարծիք կազմելն այս դասընթացի մասն է կազմելու ապագայում ևս: Այն նաև օգտագործվում է ՄՊԿ-ում և միսիայի ընթացքում վերապատրաստումների ժամանակ: (Կարող եք զույգերից մեկին հանձնարարել դուրս գալ դասարանի առաջ և ցուցադրել իրենց ուսուցանումը բոլորին):

Փոխեք դերերը և խնդրեք մեկ այլ զույգի ուսուցանել և դիտողություններ ստանալ:

Երբ ուսանողների երկու զույգերն ուսուցանել են միմյանց և դիտողություններ ստացել, քննարկեք դասարանով այն աղբյուրները, որոնք նրանք օգտագործել են իրենց դասի ծրագիրը կազմելիս:

- Այդ աղբյուրներից որո՞նք եք դուք առավել օգտակար գտնում և ինչո՞ւ:
- Ինչպե՞ս կարող են երկու խումբն օգտագործել նույն աղբյուրը տարբեր ձևերով:

Ուսանողներին հարցրեք, թե ինչպես է ավետարանի սկզբունքն ուսուցանելն օգնել իրենց ավելի լավ հասկանալ այն և իմանալ դրա ճշմարտության մասին: Նրանց խրախուսեք շարունակել սովորել, որպեսզի վերականգնված ավետարանի ավելի լավ ուսուցիչներ դառնան:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Մտածեք այն մասին, թե ավետարանի գիտելիքի ձեռքբերման ո՞ր փուլում եք գտնվում, համեմատած նրա հետ, թե որտեղ կցանկանայիք լինել միսիան սկսելուց: Որոշեք, թե ինչ դուք պետք է անեք այդ մակարդակին հասնելու համար և գրեք մի քանի նպատակներ, որոնք կօգնեն ձեզ հասնել այդ աճին ավետարանի ձեր գիտելիքի մեջ:
- Ընտրեք վերականգնված ավետարանի մի վարդապետություն կամ սկզբունք, որը դուք կցանկանայիք ավելի լավ հասկանալ: Ուսումնասիրեք այդ վարդապետությունը կամ սկզբունքը, և մշակեք դասի ծրագիր, որն օգտագործելով ուսուցանեք ձեր ընկերոջը կամ ընտանիքի անդամին:
- Սկսեք ամրացնել սուրբ գրությունները նշելու ծրագիրը, սկսելով նշումներ կատարել ձեր սուրբ գրություններում:

Գլուխ 6

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ԵՎ ՆԱԵՎ ՀԱՎԱՏՔՈՎ», ՄԱՍ Բ

Այս գլուխը շարունակում է շեշտել 5-րդ գլխում ներկայացրած հմտությունները: Նախապատրաստության կարևորության պատճառով, ուսանողները լրացուցիչ հնարավորություն են ունենում այս հմտությունը զարգացնելու համար: Շեշտվում է նաև ուսումնասիրության և ուսուցանմանը պատրաստվելու ժամանակ հավատքի և Սուրբ Հոգու զորության կարիքը: Երբ միսիոներները սովորում են կազմակերպել վերականգնված ավետարանի մասին իրենց հասկացողությունը և հավատք գործադրել իրենց ուսումնասիրության ընթացքում, նրանց խոստացվում է Սուրբ Հոգու ընկերակցությունը:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Վկայություն բերելը հրավիրում է Հոգու ներկայությունը մեր ուսուցման մեջ:
- Խոսքը մենք ձեռք ենք բերում հավատքի միջոցով:
- Աստված Սուրբ Հոգին խոստանում է նրանց, ովքեր գանձում են Նրա խոսքը:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Վկայություն բերելը հրավիրում է Հոգու ներկայությունը մեր ուսուցման մեջ:

Ուսանողներին հարցրեք, թե քանի՞ խումբ բերեցին իրենց վկայությունները նախորդ դասի փոքր խմբերի ուսուցանման ժամանակ: Որոշ ուսանողներ, հնարավոր է, անգամ չեն մտածել այն մասին, որ ներառեն իրենց վկայությունն ուսուցանման ընթացքում: Սա լավ ժամանակ է նրանց հետ քննարկելու ավետարանի սկզբունքի մասին վկայելու կարևորությունը:

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է վկայելը և ձեր զգացմունքներով կիսվելն ուսուցանման կարևոր մասը կազմում:

Կիսվեք վկայություն բերելու մասին հետևյալ սկզբունքներով, որոնք ուսուցանվում են «Քարոզիր իմ ավետարանը» միսիոներական ծառայության ուղեցույցում և Նախագահ Բոյդ Ք. Փաքերի խոսքերում.

«Ձեր վկայությամբ կիսվելը հաճախ առավել զորեղ եղանակներից է, որը հնարվիրում է Հոգին և օգնում ուրիշներին զգալ Հոգին: Այն ավելացնում է ներկա անձնական վկայություն սուրբ գրություններից ձեր ուսուցանած ճշմարտություններին» («Քարոզիր իմ ավետարանը» [2004], 198):

«Արտասովոր չէ, երբ միսիոներն ասում էն. «Ինչպե՞ս ես կարող եմ բերել վկայություն, մինչև չեմ ստացել այն: Ինչպե՞ս ես կարող եմ վկայել, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ ավետարանը ճշմարիտ է: Եթե ես չունեմ այդպիսի վկայություն, արդյո՞ք ես անազնիվ չեմ լինի»:

Օ, եթե ես կարողանամ ուսուցանել ձեզ այդ մեկ սկզբունքը: Վկայությունը կարելի է *գտնել* այն *բերելով:* Հոգևոր գիտելիքի ձեր փնտրտուքներում է գտնվում «հավատքի թռիչքը», ինչպես այն անվանում են իմաստասերները: Դա այն պահն է, երբ դուք հասնում եք լույսի սահմանին և մխրճվում խավարի մեջ, բացահայտելու համար, որ առջևում մի քանի քայլ առաջ լուսավոր ճանապարհ է» (Boyd K. Packer, *"That All May Be Edified"* [1982], 339–40):

- Ինչպե՞ս կարող ենք անկեղծ վկայություն բերել, չօգտագործելով «Ես բերում եմ իմ վկայությունը» կամ «Ես վկայում եմ» արտահայտությունները:

Բացատրեք, որ թեև դրանք պատշաճ խոսքեր են ուսուցանման համար, բայց պատշաճ և հասարակ եղանակներ են վկայություն բերելու ժամանակ: Օրինակ, միսիոները կարող է ասել. «Ես գիտեմ, որ կիրակի օրը սուրբ պահելը ձեր սրտին ավելի մեծ խաղաղություն կբերի»: «Հիսուս Քրիստոսն աստծո Որդին է» և «Ես ինքս եմ իմացել, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է» երկուսն էլ վկայության արտահայտություններ են:

Ուսանողներին խնդրեք քննարկել, թե ինչպես կարող են միսիոներներն օգտագործել սուրբ գրությունները, ժամանակակից մարգարեների կամ առաքյալների խոսքերը կամ անձնական փորձառությունը որոշակի սկզբունքի մասին վկայություն բերելու համար: Ահա մի քանի օրինակներ.

- *Սուրբ գրությունը որպես վկայություն:* Վկայությունը, որը Փրկիչը քավել է մեր մեղքերը `գտնվում է 2 Նեփի 2.8-ում:
- *Մարգարեների և առաքյալների խոսքերը որպես վկայություն.* «[Հիսուս Քրիստոսը] տվեց Իր կյանքը, քավելով ողջ մարդկության մեղքերը» ("The Living Christ," *Ensign,* ապրիլ 2000, 2):
- *Անձնական փորձը որպես վկայություն:* Երիտասարդ կինը հավատքով վճարում է տասանորդը տարիներ շարունակ և անձնական վկայություն ունի դրա ճշմարտության մասին:

Ուսանողներին խրախուսեք մտածել այն իմաստալից ճանապարհների մասին, որոնցով իրենք կարող են վկայություն բերել, հրավիրելով մարդկանց գալ դեպի Քրիստոսը, ընդունելով վերականգնված ավետարանի սկզբունքները և արարողությունները: Ուսանողներին հրավիրեք կամավոր բերել մեկ-երկու նախադասություններից կազմված վկայություններ ավետարանի որևէ սկզբունքի վերաբերյալ, որն իրենք գիտեն, որ ճշմարիտ է:

Միսիոներները վերականգնված ավետարանի իրենց ուսումնասիրության ընթացքում կպատրաստվեն ուսուցանելու մեծ թվով տարբեր հետաքրքրվողների: Որքան շատ իրենք ծանոթ լինեն և իրենց վստահ զգան իրենց գրառումներից օգտվելիս, այնքան ավելի լավ պատրաստված կլինեն միսիայի ծառայությունը սկսելուց:

Ուսուցանման հետևյալ առաջարկությունները օգնում է ճիշտ օգտագործել դասի ծրագիր կազմելու փորձառությունը նախորդ դասից, ավելացնելով վկայության տարրը:

Ուսանողներին բաժանեք զույգերի (նախկին զույգերից տարբեր): Յուրաքանչյուր զույգին խնդրեք ստեղծել դասի հիմնական ծրագիր ուսուցանելու համար ավետարանի մի թեմա, որը նախկինում չեն ընտրել կամ ուսուցանել: Դասի ծրագրի մեջ նրանց խնդրեք ներառել երկու կետ, երբ կարող են բերել իրենց անկեղծ վկայությունը: Նրանց կոչ արեք բերել վկայություն առանց օգտագործելու *վկայել* կամ *վկայություն* բառերը (տես նախորդ ուսուցանման առաջարկությունը): Ուսանողներին խնդրեք գրել իրենց մտքերը դասի ծրագրի մեջ:

Խնդրեք, որ յուրաքանչյուր զույգ ավետարանի իր սկզբունքն ուսուցանի մյուս զույգին՝ օգտվելով դասի ծրագրից: Զույգի երկու անդամներն էլ պետք է մասնակցեն ուսուցանմանը և յուրաքանչյուրը պետք է հնարավորություն ունենա դասի ժամանակ առնվազն մեկ անգամ բերելու իր վկայությունը:

Երբ բոլոր զույգերն ուսուցանեն, նրանց, ում ուսուցանվել է, պետք է գնահատեն ուսուցանող զույգին: Գնահատումը պետք է նշի դասի դրական և օգտակար տարրերը: Առաջարկությունները պետք է նաև օգնեն բարելավել ուսուցումը, ավելացնելով սուրբ գրություններ, որոնք կարող են ամրացնել ուսուցանումը, ոչ պարզ մասերի նկարագրություններ, և բարելավման եղանակներ:

Փոխվեք դերերով և թույլ տվեք, որ մյուս զույգն ուսուցանի, վկայի և ստանա գնահատում: Եթե դասաժամը չի բավականացնում, կարող եք վարժությունն ավարտել հաջորդ դասին:

Խոսքը մենք ձեռք ենք բերում հավատքի միջոցով:

Ստորև նշված սուրբ գրությունների հղումները հանձնարարեք տարբեր ուսանողների: Նրանց խնդրեք կարդալ սուրբ գրությունները դասարանին, շեշտելով այն բայերը, որոնք օգտագործվում են սուրբ գրություններում և հուշում, թե ինչպես պետք է ուսումնասիրել Տիրոջ խոսքը, և բացատրել դրանց նշանակությունը (շեշտադրումն ավելացված է):

- «Օրենքի գրքի վրա *մտածես*» (Հեսու 1.8):
- «*Մնվեք* Քրիստոսի խոսքերով» (2 Նեփի 32.3):
- «Կառչած մնացեք Աստծո խոսքին» (Հելաման 3.29):
- «*Խորհեք* այն բաները վրա, որոնք ես ասացի» (3 Նեփի 17.3):
- «Շարունակ ձեր մտքում *գանձեք* կյանքի խոսքերը» (ՎԵՈՒ 84.85):

Ուսանողներին խնդրեք նկարագրել, թե ինչպես իրենք կարող են ուսումնասիրել սուրբ գրություններն այն ձևով, որով ասվում է այս հատվածներից յուրաքանչյուրում, և թե ինչ դեր է խաղում հավատքը սուրբ գրությունների այս տեսակի ուսումնասիրության մեջ:

Ուսանողներին խնդրեք կարդալ խոսքը հավատքի միջոցով ստանալու սկզբունքին վերաբերող առաջին պարբերությունն ուսանողի ձեռնարկում (էջ 49):

- Ինչո՞ւ է հավատքով աղոթքն անհրաժեշտ Տիրոջ ուսմունքները հասկանալու համար:
- Ինչո՞ւ է այդ պարբերությունն այդքան կարևոր միսիոներների ուսուցանման աշխատանքների համար:

Մի քանի ուսանողի խնդրեք դասարանին կարդալ Առաքյալների խոսքերն ուսանողի ձեռնարկից հավատքով Տիրոջ ուսմունքները ստանալու վերաբերյալ (տես ուսանողի ձեռնարկ, էջ

49–50): Մեկ այլ ուսանողի խնդրեք ամփոփել այն, ինչ ուսուցանում է յուրաքանչյուր Առաքյալ հավատքով սովորելու մասին, և թե ինչ նշանակություն ունի դա ուսուցանման համար:

Աստված Սուրբ Հոգին խոստանում է նրանց, ովքեր գանձում են Նրա խոսքը:

Դասարանին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 84.85 և գտնել այն օրհնությունները, որոնք տրվում են նրանց, ովքեր գնահատում են սուրբ գրությունները:

Գրատախտակին երկու սխեմայի տեղ թողեք: Հետևյալ սխեման տեղադրեք գրատախտակին և համառոտ քննարկեք, թե ինպես այդ սխեման կարող է օգտագործվել հատվածը վերլուծելու համար: Ուսանողներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 11.21 և նշեք այն օրհնությունները, որոնք տրվում են սուրբ գրությունների ուսումնասիրության արդյունքում:

Ստանում ենք Տիրոջ խոսքը →Լեզուն բացվում է →Տիրոջ Հոգին և Նրա խոսքը մեզ հետ է→ ունենք Աստծո զորությունը մարդկանց համոզելու համար

Խնդրեք մի ուսանողի կամավոր դուրս գալ գրատախտակի մոտ և կազմել պարզ սխեմա, որը պատկերում է Ալմա 17.2–3, իսկ դասարանը թող միասին կարդա այն:

Մինչ ուսանողը նկարում է սխեման, դասարանին հարցրեք.

- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներներն իմանան և հասկանան այս հատվածները:

Շարունակեք, կարդալով Եկեղեցու տասներեքերորդ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի խոսքերը.

> «Աստծո զորությունը ձեր ուսուցանման ժամանակ ունենալու հերթականությունը հետևյալն է՝ նախ աշխատում եք ստանալ խոսքը, ապա գալիս է հասկացողությունը և Հոգին, և, վերջապես, համոզելու զորությունը» (*The Gospel Teacher and His Message* [address to religious educators, Sept. 17, 1976], 5):

Հարցրեք ուսանողին, թե արդյոք նա չի ցանկանում ճշտում կատարել սխեմայի մեջ այդ խոսքերի արդյունքում:

Ուսանողը կարող է նման մի ավելացում կատարել.

Ձանում ենք ձեռք բերել խոսքը → Գանձում ենք խոսքերը → Զարգացնում ենք արդար ցանկություններ → Աշխատում ենք հասկանալ Հոգու ներգործումները → Զարգացնում ենք համոզելու զորությունը

- Ինչպե՞ս է նվազում միսիոների արդյունավետությունը, եթե այս տարրերից որևէ մեկն ընթացքից դուրս է մնում:

Կիսվեք Նախագահ Բենսոնի հետևյալ հայտարարությամբ.

> «Եկեք թեթևակի չվերաբերվենք այն բաներին, որոնք մենք ստացել ենք Տիրոջ ձեռքից: Նրա խոսքն ամենաարժեքավոր պարգևներից մեկն է, որ Նա տվել է մեզ: Ես ձեզ կոչ եմ անում պարտավորվել ուսումնասիրել սուրբ գրությունները: Խորասուզվեք դրանց մեջ ամեն օր, որպեսզի Հոգու զորությունն այցելի ձեզ» (“The Power of the Word,” *Ensign,* May 1986, 82):

Ուսանողներին խնդրեք պատմել, թե ինչպես է սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունն իրենց կյանք բերել Սուրբ Հոգին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Մտածեք հաջորդ ծոմի և վկայության ժողովին ծխում կամ ճյուղում ձեր վկայությունը բերելու մասին:
- Ընտրեք ձեր սիրված գլուխը Մորմոնի Գրքից կամ սիրված բաժինը Վարդապետություն և Ուխտերից և բավական շատ ժամանակ տրամադրեք «հավատքով ուսումնասիրելուն»: Ժամանակ հատկացրեք աղոթելուն սուրբ գրությունների մասին, խորհելուն, վերլուծելուն, սկզբունքներ գտնելուն և որոշելուն, թե ինչպես կարող եք կիրառել ձեր սովորածը կյանքում: Ձեր ջանքերի մասին խոսեք մոտ ընկերոջ կամ քահանայության ղեկավարի հետ:



Գլուխ 7

ԵՐԿՆԱՅԻՆ ՀՈՐ ԾՐԱԳԻՐԸ



Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր բոլոր զավակներն ունենան լիակատար ուրախություն: Նա ներկայացրել է մի ծրագիր, որի միջոցով մենք կարող ենք կրկին վերադառնալ Նրա մոտ՝ փրկված, վեհացած և հավերժական հնարավորություններով օժտված (տես *Հավատքին հավատարիմ*, էջ 200, ինչպես մեջբերված է ուսանողի ձեռնարկում, էջ 58): Ծրագրի առանցքը Հիսուս Քրիստոսի Քավությունն է կազմում: Հիսուսը՝ Հոգու մեջ Հոր Առաջնեկը և Միածինը մարմնի մեջ, ընտրվեց լինելու մեր Փրկիչը և Քավիչը, կենտրոնական դեր խաղալով Հոր ծրագրում: Հոր ծրագրի աննկարագրելի կարևորությունը կարելի է ավելի լիարժեք հասկանալ դրա տարբեր անվանումներից.

- Ազատման մեծ և հավերժական ծրագիր (2 Նեփի 11.5)
- Փրկագնման մեծ ծրագիր (Հակոբ 6.8)
- Փրկության ծրագիր (Հարոմ 1.2)
- Երջանկության ծրագիր (Ալմա 42.16)
- Ողորմության մեծ ծրագիր (Ալմա 42.31)

Երկնային Հոր ծրագիրը պահանջում է, որ մենք ստանանք ֆիզիկական մարմին և ապացուցենք, որ արժանի ենք Նրա ներկայությունը վերադառնալուն:

Այս դասում ուսանողները կուսումնասիրեն Երկնային Հոր ծրագրի կարևոր հիմունքները և կսովորեն ներկայացնել փրկության ծրագրի հիմունքները: Ուսանողները պետք է հասկանան, հատկապես, թե ինչու է ծրագիրը «բերում անմահություն և հավերժական կյանք» Աստծո զավակներին (Մովսես 1.39):

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Երկնային Հոր ծրագրում կա երեք շրջան՝ նախամահկանացու, մահկանացու և ետմահկանացու:

- Հիսուս Քրիստոսն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում:
- Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր է դարձնում հաղթահարել հոգևոր և ֆիզիկական մահվան խոչնդոտները:
- Երկնային Հայրը պատրաստել է փառքի աստիճաններ Իր զավակների համար:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երկնային Հոր ծրագրում կա երեք շրջան՝ նախամահկանացու, մահկանացու և ետմահկանացու:

Գրատախտակին մի թագ նկարեք:



- Ինչպե՞ս կփոխվեր ձեր կյանքը, եթե դուք իմանայիք, որ թագավորի ուղիղ ժառանգ եք և շուտով ստանալու եք ձեր արքայական ժառանգությունը:
- Ինչո՞ւ կարող է մեզանից յուրաքանչյուրն իրեն համարի աստվածային ընտանիքից:
- Ի՞նչ ժառանգության իրավունք ունենք մենք:
- Ինչպե՞ս գիտենք այդ բաները:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ խոսքերով.

> «Հարցեր, ինչպիսք են. Որտեղի՞ց ենք մենք գալիս, ինչո՞ւ ենք մենք այստեղ և ո՞ւր ենք մենք գնում, պատասխանվում են Հիսուս Քրիստոսի ավետարանում: Մարգարեներն այն կոչել են փրկության ծրագիր և «երջանկության մեծ ծրագիր» (Ալմա 42.8): Ոգեշնչման միջոցով մենք կարող ենք հասկանալ հավերժության այս ճանապարհի ուղեցույցը և օգտագործել այն մահկանացու կյանքի մեր ուղու համար» (in Conference Report, հոկ. 1993, 96; կամ *Ensign*, Nov. 1993, 72):

- Ինչպե՞ս է փրկության ծրագրի մասին գիտելիքն ազդում մեր ապրելակերպի վրա:

Ուսանողների հետ կարդացեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

> «Հնարավոր չի իմաստ քաղել կյանքից առանց նախաերկրային կյանքի վարդապետության իմացության....
>
> Երբ մենք հասկանում ենք նախաերկրային կյանքի վարդապետությունը, ամենինչ իր տեղն է ընկնում և իմաստ ձեռք բերում» (in Conference Report, հոկ. 1983, 22; կամ *Ensign*, Nov. 1983, 18):

11 Ցուցադրեք ԹՏՍ 11 (4:30) շարժանկարը: Առաջին երկու պատմությունները նպատակ ունեն օրինակ ծառայելու, թե ինչպես է փրկության ծրագրի մասին գիտելիքը օգնում խնդիրների և հարցերի հանդիպելիս: Վերջին պատմությունը ներկայացնում է մի հարց, սակայն չի ցուցադրում, թե ինչպես լուծել այն: Օգտագործեք այդ պատմությունը, որպես հնարավորություն՝ վարժվելու ուսանողների հետ կիրառելու փրկության ծրագրի մասին իրենց գիտելիքը, բարդ հարցերի դեպքում:

- Ինչպե՞ս օգտագործվեց փրկության ծրագիրը դժվար հարցի պատասխանը գտնելու համար:

Ուսանողներին խնդրեք բաժանվել երեք հոգուց բաղկացած խմբերի: Նրանց խնդրեք օգտագործել «Topical Guide»-ի (կամ Սուրբ գրությունների ուղեցույցի) բաժիններից մեկը, որոնք նշված են ստորև, գոյության այն փուլի համար, որի մասին ցանկանում են սովորել և ուսուցանել: Նրանք պետք է ընտրեն մեկ հատված Հին Կտակարանից, մեկ հատված Նոր Կտակարանից և մեկական հատված Մորմոնի Գրքից և Վարդապետություն և Ուխտեր կամ Թանկագին Մարգարիտից: Նրանք պետք է օգտագործեն իրենց ընտրած հատվածները խմբի մեկ այլ անդամի ուսուցանելու համար:

Փուլ	**Topical Guide (Թեմատիկ ուղեցույց)**	**Սուրբ գրությունների ուղեցույց**
Նախամահկան ացու կյանք	Man, Antemortal Existence of, էջ 305	Մարդ, Մարդիկ: *Մարդը՝ Երկնային Հոր հոգեղեն զավակ՝* էջ 150
Մահկանացու կյանք	Mortality, էջ 329	Մահկանացու, Մահկանացություն, էջ 146
Ետմահկանացու կյանք	Immortality, Immortal, էջ 224–225	Անմահ, Անմահություն, էջ 15

Ուսանողներին տվեք 10–15 րոպե, որպեսզի նրանք ընտրեն և պատրաստեն այն սուրբ գրությունները, որոնք ցանկանում են ուսուցանել: Հաջորդ 8–10 րոպեների ընթացքում յուրաքանչյուր ուսանողին ուսուցանելու հնարավորություն տվեք: Ապա փոխեք ուսուցչի, հետաքրքրվողի և դիտորդի դերերը:

Մյուս ուսանողներին ժամանակ տվեք կիսվելու իրենց կարծիքով ուսուցանման վարժության մասին, հարցեր տալով, ինչպես տրված է ստորև, նրանց, ովքեր դիտում էին.

- Ի՞նչն էր լավ:
- Ի՞նչը դուք այլ ձևով կանեիք, եթե ուսուցանեիք սուրբ գրության այս նույն հատվածը:

Ամփոփելով դասի այս մասը՝ կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Մեր նախաերկրային կյանքի մասին աստվածաշնչային հղումներ ունենալով հանդերձ, ինչո՞ւ է այս վարդապետությունն առանձնահատուկ տեղ գրավում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: (Քրիստոսի մաքուր վարդապետությունները կորել են Ուրացության ժամանակ, սակայն շատ դեպքերում դեռ Աստվածաշնչում են, հատկապես, երբ դիտվում են Վերականգնման սուրբ գրությունների օգնությամբ):
- Ինչպե՞ս է ժամանակակից հայտնությունը մեզ օգնում ավելի լավ ուսուցանել նախաերկրային, երկրային և ետմահու կյանքի վարդապետությունները:

Երկու ուսանողի խնդրեք կանգնել դասարանի առաջ: Մեկին խնդրեք արձագանքել հետևյալ իրավիճակին, ստանձնելով մեկի դերը, ով ոչինչ չգիտի երջանկության ծրագրի մասին, իսկ երկրորդ ուսանողին խնդրեք խաղալ միսիոների դերը, որը ցանկանում է կիսվել ավետարանով: Իրավիճակի երկու դերախաղերից հետո թույլ տվեք դասարանում գտնվող ուսանողներին կիսվել իրենց դիտողություններով:

- Երիտասարդ մայրը վերջերս կորցրել է իր հինգ ամսեկան երեխային. «Կտեսնե՞մ ես արդյոք իմ երեխային»:
- Դեռահասը հարցնում է. «Ինչո՞ւ է այդքան կարևոր բարոյապես մաքուր մնալը, եթե կյանքն ավարտվում է մահով»:
- Միջին տարիքի մի մարդ անհանգստանում է իր կնոջ համար: Նրանք ունեն չորս երեխա, իսկ կինը վերջերս իմացել է, որ քաղցկեղով է հիվանդ. «Ինչպ՞ես դա կարող է պատահել, եթե դուք հավատում եք արդար Աստծուն»:
- Երիտասարդ չափահասն ասում է. «Ես այնքան շատ մեղքեր եմ գործել, ինչո՞ւ պետք է փորձեմ լավը լինել»:

Ամփոփեք, ասելով, որ Երկնային Հոր երջանկության ծրագրի մասին գիտելիքը օգնում է մեզ պատասխանել նման հարցերի:

Հիսուս Քրիստոսն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում:

Սկսեք, հարցնելով ուսանողներին. Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսը երջանկության մեծ ծրագրի առանցքը հանդիսանում:

Ուսանողներին խնդրեք կարդալ Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը, Հովհաննես 1.1–16 և անհատապես կարդալ և վերլուծել հատվածները, գտնելով օրինակներ, երբ Հիսուսը Երկնային Հոր ծրագրի կարևոր մասն է կազմում: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, գրատախտակին գրեք և քննարկեք ուսանողների մտքերը: Եթե անհրաժեշտ է, օգտագործեք հետևյալ սխեման.

Հիսուս Քրիստոսն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում:	
ՋՍԹ, Հովհաննես 1.1–2	Հիսուսը Երկնային Հոր հետ էր և ավետարան էր ուսուցանում նախաերկրային կյանքում:
ՋՍԹ, Հովհաննես 1.3	Հիսուսը ստեղծեց այս աշխարհը:
ՋՍԹ, Հովհաննես 1.6–10, 14	Հովհաննես Մկրտիչն ուղարկվեց վկայություն բերելու Հիսուսի՝ որպես Աստծո Որդու մասին:
ՋՍԹ, Հովհաննես 1.12	Նրանք, ովքեր հավատում են Հիսուսին, զորություն են ստանում:
ՋՍԹ, Հովհաննես 1.16	Քրիստոսի միջոցով մենք ստանում ենք անմահություն և հավերժական կյանք:

- Ձեր կյանքում ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ ուսուցանել հետաքրքրվողներին Հիսուս Քրիստոսի կարևորությունը Երկնային Հոր ծրագրում:
- Ինչպե՞ս դուք կարող եք իմանալ, երբ են հետաքրքրվողներն ընդունում ձեր ուղերձը և գալիս դեպի Քրիստոսը:

Գրատախտակին գրեք «Արարում–Անկում–Քավություն»: Բացատրեք, որ այս երեք իրադարձությունները Երկնային Հոր ծրագրի կարևոր մասն են կազմում: Ուսանողների հետ կիսվեք Երեց Բրուս Ռ. ՄակՔոնիկի խոսքերով, որոնք օգնում են մեզ հասկանալ, թե ինչպես են կապված փրկության ծրագրի այս կարևոր երեք մասերը՝ Արարումը, Անկումը և Քավությունը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 58):

- Ինչո՞ւ է Փրկիչն առանցքային դեր խաղում այդ երեք իրադարձություններում:
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Քավությունն ազդել ձեր կյանքի վրա երկրի Արարումից առաջ:

Հիսուս Քրիստոսի քավությունը հնարավոր է դարձնում հոգևոր և ֆիզիկական մահի խոչնդոտները հաղթահարել:

12 Մի ուսանողի խնդրեք կարդալ Երեց Ռասսել Մ. Նելսոնի հայտարարությունը քավության մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 59), կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 12 (0:33) շարժանկարը:

- Ի՞նչ ներըմբռնում եք դուք ստանում այդ հայտարարությունից:

Գրատախտակին գրեք «ֆիզիկական մահ» բառերը:

Ուսանողներից մեկին խնդրեք դասարանին կարդալ 2 Նեփի 9.7–9:

- Համաձայն այդ տողերի, եթե չլիներ Քավությունը, ի՞նչ կպատահեր մեր մարմինները հետ:
- Ի՞նչ կպատահեր մեր հոգիների հետ:

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Ա Կորնթացիս 15.19–22, իսկ մեկ ուրիշի՝ 2 Նեփի 9.11:

- Երկրի բնակիչներից որքա՞նն են հաղթահարել ֆիզիկական մահը Հիսուս Քրիստոսի Հարության միջոցով:

Գրատախտակին գրեք «հոգևոր մահ»: Մի ուսանողի խնդրեք կարդալ հոգևոր մահվան սահմանումն Ալմա 42.9-ում: Ուսանողներին խնդրեք անդրադառնալ ուսանողի ձեռնարկին (տես 58–60 էջեր) և գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչն է հոգևոր մահ բերում:
- Որո՞նք են մեղքի հետևանքները:
- Ի՞նչ արեց Քրիստոսը, որպեսզի մեզ համար հնարավոր դարձնի մեղքի հաղթահարումը:
- Ի՞նչ մենք պետք է անենք հոգևոր մահը հաղթահարելու համար:

Ուսանողներին ասացեք, որ առավել կարևոր մանրամասները, որոնք մենք գիտենք հոգևոր աշխարհի կամ ետմահկանացու կյանքի մասին, ստացվել են Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի տեսիլքի միջոցով: Ուսանողներին խնդրեք անդրադառնալ Վարդապետություն և Ուխտեր 138-ին: Նրանց հետ վերանայեք բաժնի վերնագրում նկարագրվող տեսիլքի մանրամասնները: Տվեք հետևյալ հարցերը և խնդրեք ուսանողներին գտնել պատասխաններն առաջին մի քանի տողերում.

- Ինչի՞ մասին էր խորհում Նախագահ Սմիթը, երբ ունեցավ այդ տեսիլքը: (Քավության և Աստծո ու Նրա Որդու սիրո մասին, տես հհ. 1–4):
- Ի՞նչ էին անում հոգևոր աշխարհում գտնվողները (հհ. 12–16):

Ուսանողներին խնդրեք անդրադառնալ Վարդապետություն և Ուխտեր 138.18–19 և գտնել, թե ինչ էր ուսուցանում Տերը նրանց, ովքեր հավատարիմ էին, երբ այցելեց հոգևոր աշխարհ:

Ուսանողների հետ քննարկեք 29–37 հատվածները և խնդրեք նրանց նմանություններ գտնել այն վարդապետությունների միջև, որոնք ուսուցանվում են հոգևոր աշխարհում նրանց, ովքեր

երկրի վրա մերժել են ճշմարտությունները, և որոնք ուսուցանվում են հետաքրքրվողներին մահկանացու կյանքում:

Երկնային Հայրը պատրաստել է փառքի աստիճաններ Իր զավակների համար:

Բացատրեք, որ միսիոներները հետաքրքրվողներին ուսուցանում են փառքի աստիճանների շատ ընդհանուր պատկերը: Նմանատիպ վարդապետություններ, որ միսիոներներն ուսուցանում են, պարունակված են *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* (2004) գրքույկի «Փառքի արքայությունները» բաժնի առաջին երկու պարբերություններում «Սելեստիալ արքայություն», «Թերեստրիալ արքայություն» և «Թելեստիալ արքայություն» ենթավերնագրերի տակ: Ուսանողներին խնդրեք բարձրաձայն կարդալ այդ վարդապետությունները *Հավատքին հավատարիմ* գրքույկում (196–199 էջեր):

- Ինչո՞ւ է կարևոր չծանրաբեռնել հետաքրքրվողներին չափազանց շատ մանրամասներով, մինչև նրանք հասկանան ավետարանի առաջնային սկզբունքները և սկսեն ապրել ըստ դրանց (տես ՎԱՈՒ 19.22):
- Ձեր կարծիքով, որո՞նք են այն առավել կարևոր մանրամասները, որոնք հետաքրքրվողները պետք է իմանան փառքի աստիճանների մասին ավետարանի մեր ուղերձն ուսումնասիրելու վաղ շրջանում:

Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք պատրաստել դասի ծրագիր, որը նա կարող է օգտագործել, հետաքրքրվողին փառքի երեք աստիճաններն ուսուցանելու համար: Ապա նրանց խնդրեք զուգընկերոջն ուսուցանել, օգտվելով այդ ծրագրից: Խնդրեք նրանց գնահատել միմյանց, նշելով ամուր կողմերը և բարելավման կարիք ունեցող ուղղությունները: Ապա, թող ուսանողները բաժանվեն նոր զույգերի և կրկին ուսուցանեն իրենց դասերը: Կրկին կատարեք գնահատում:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Ուսումնասիրեք «Քավություն» բառը Սուրբ գրությունների ուղեցույցում («Քավել, Քավություն», էջ 224): Կարող եք նշել այն տեղեկությունը, որը պատրաստվում եք օգտագործել Քավության մասին ուսուցանելիս:
- Կազմեք փրկության ծրագրի մեկ էջանոց ամփոփում կամ պատկերեք այն նկարի միջոցով:



Մովսեսը և տապանակները, Ջերի Հարսթոն

ՄԱՐԳԱՐԵՆԵՐԸ ԵՎ ՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ջոզեֆ Սմիթ, Սկիզբ Գրքունս

Միսիոներները հաճախ միայն մի քանի րոպե են ունենում իրենց կարևոր ուղերձը հայտարարելու համար: Նրանք պետք է պատրաստ լինեն արդյունավետ ներկայացնելու Վերականգնման փառահեղ ուղերձը, միևնույն ժամանակ մեծ խորությամբ, վկայելով Մարգարե Ջոզեֆ Սմիթի, որպես վերջին օրերի մարգարեի դերի մասին, ում միջոցով Փրկիչը վերականգնեց Իր ավետարանը: Միսիոներները օգնում են մարդկանց հասկանալ, թե *ինչու* մենք այսօր մարգարեի կարիք ունենք: Ուղին այսպիսին է. Երկնային Հայրը խոսում է Իր մարգարեների միջոցով. մարդիկ մերժում են ուղերձը. ուրացություն է ի հայտ գալիս: Երկնային Հայրը կրկին խոսում է Իր մարգարեների միջոցով: Երբ հետաքրքրվողները հասկանում են այս ուղին, նրանք ավելի պատարաստված են լինում հասկանալու կարևորությունը վերջին օրերի մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին, որի միջոցով Տերը վերականգնել է Իր Եկեղեցին:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Տերն ապահովում է ճշմարտությունը, քահանայության իշխանությունը, արարողությունները և կազմակերպությունն Իր մարգարեների միջոցով:
- Պատմության ընթացքում ուրացության և վերականգնման շրջանը մի քանի անգամ կրկնվել է:
- Փրկչին մերժելու, Նրա ուսմունքները և քահանայության իշխանությունը մերժելու արդյունքում Նոր Կտակարանի Եկեղեցին Ուրացության երթարկվեց:
- Բարեփոխումների աշխատանքը Եվրոպայում օգնեց ճանապարհ նախապատրաստել Վերականգնման համար:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Տերն ապահովում է ճշմարտությունը, քահանայության իշխանությունը, արարողությունները և կազմակերպությունն Իր մարգարեների միջոցով:

Պահեք մի հին մարգարեի նկար և գրատախտակին գրեք *մարգարե* բառը: Դասարանի հետ կիսվեք հետևյալ ենթադրական իրավիճակով.

Դուք օգանավում եք և ձեր կողքին նստած անձնավորությունն իմանում է, որ դուք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եք: Նա ասում է, որ լսել է, թե ձեր եկեղեցին առաջնորդվում է մարգարեի կողմից: Դուք ունեք մի քանի րոպե ժամանակակից մարգարեի դերը բացատրելու, և պատմելու, թե ինչու եք ձեզ վստահ զգում նրան հետևելիս:

Խնդրեք բոլոր ուսանողներին պատասխաններով կիսվել իրենց կողքի ուսանողի հետ:

Խնդրեք ուսանողներին կարդալ մարգարեների մասին Սուրբ Գրությունների Ուղեցույցում («Մարգարե», էջ 148): Ուսանողներից մեկին խնդրեք գրագիր լինել և գրատախտակին գրի առնել մարգարեի մի քանի դերերը: Կարող եք նաև կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի խոսքերն ուսանողների ձեռնարկում (էջ 66):

- Ի՞նչ օրհնություններ են տրվում մարգարեին հետևելու արդյունքում: Ձեր կարծիքով, ո՞ր օրհնություններն են առավել կարևոր և ինչու:

Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք էլ ավելի խորաքննել, բացատրելով մարգարեի դերի հետ կապված քննարկված բառերը: Օրինակ, անդրադարձեք գրատախտակին գրված *իշխանություն* բառին: Ցուցադրեք դատարկ չեկ և ուսանողներին ասացեք, որ պատրաստ եք ֆինանսապես պարգևատրել նրանցից մեկին՝ դասին հաճախելու համար: Չեկը տվեք մի ուսանողի և խնդրեք նրանց չեկ դուրս գրել իր կողքին նստած ուսանողի համար: Ուսանողին հիշեցրեք ստորագրել իր չեկը հաջորդ ստացողին տալուց առաջ: Երբ չեկը դուրս է գրված, ցույց տվեք այն դասարանին և հարցրեք, թե արդյոք այն ստացող ուսանողը որևէ խնդիրներ կունենա այն օրինական կանխիկացնելու համար:

- Օրինական տեսակետից, որքա՞ն կարևոր է չեկի վրա պատշաճ ստորագրության առկայությունը:
- Ինչո՞ւ անձը պետք է ունենա պատշաճ իշխանություն՝ օրինական գործարք կատարելու, օրինակ՝ չեկ դուրս գրելու համար:
- Ինչպե՞ս կարելի է դա կապել պատշաճ քահանայության իշխանություն ունենալու անհրաժեշտության հետ:
- Ինչո՞ւ է Աստծո հետ գործերում իշխանություն անհրաժեշտ:

Կիսվեք հետևյալ սահմանումով և խնդրեք ուսանողներին ասել, թե ինչ է այն նկարագրում. «Իշխանություն և զորություն, որ Աստված տալիս է մարդուն, որպեսզի նա բոլոր բաներում գործի մարդու փրկության համար» (Սուրբ գրությունների ուղեցույց, «Քահանայություն», էջ 199). Գրատախտակին գրեք *քահանայություն* բառն *իշխանություն* բառի դիմաց: Քննարկեք, թե ինչու մենք Տիրոջ Եկեղեցում ունենք քահանայության իշխանության կարիք:

13 Կարդացեք Երեց Մերիլ Ջ. Բեյթմենի հետևյալ խոսքերը, կամ ցույց տվեք ԹՏՍ 13 (0:46) շարժանկարը: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցը.

> «Քահանայությունը մարդուն փոխանցված Աստծո զորությունն ու իշխանությունն է: Քահանայության բանալիներն այդ զորության օգտագործումը ղեկավարելու իրավունքն է: Եկեղեցու Նախագահը կրում է ամբողջ Եկեղեցին կառավարելու համար անհրաժեշտ բանալիները: Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի Նրա

> խորհրդականները նույնպես կրում են արքայության բանալիները և գործածում դրանք՝ Նախագահի ղեկավարությամբ: Ցցերի նախագահները, եպիսկոպոսները և տաճարների, միսիաների և քվորումների նախագահներն ունեն իրենց իրավասության տակ գտնվող միավորներում Եկեղեցին ղեկավարելու բանալիները: Նրանց խորհրդականները չեն կրում բանալիներ, սակայն ստանում են փոխանցված իշխանություն կոչումների և հանձնարարությունների միջոցով» [*Church Handbook of Instructions, Book 2: Priesthood and Auxiliary Leaders* (1998), 161.]» (in Conference Report, հոկ. 2003, 54; կամ *Ensign*, Nov. 2003, 50):

- Ի՞նչ է նշանակում քահանայության *բանալիները:*

Բացատրեք, որ Վերականգնման վաղ տարիներին հարց բարձրացավ վերականգնված Եկեղեցում մկրտության անհրաժեշտության մասին, եթե անձն արդեն մկրտված է եղել մեկ այլ եկեղեցում: Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Տիրոջ պատասխանը Վարդապետություն և Ուխտեր 22-ում:

Ուսանողներից մեկին խնդրեք արտասանել հավատո չորրորդ հանգանակը, իսկ մյուսին հավատո հինգերորդ հանգանակը:

- Ի՞նչ կապ եք դուք տեսնում այդ երկու հավատո հանգանակների միջև:

Բացատրեք, որ երբ Տիրոջն անհրաժեշտ է վերականգնել Իր քահանայության իշխանությունը և դրա բանալիները երկրի վրա, Նա դա անում է Իր մարգարեների միջոցով: Ուսանողներին խնդրեք նշել մի քանի օրինություն, որոնք անձնապես ստացել են, որովհետև քահանայությունը վերականգնվել է մարգարեի միջոցով:

Ուսանողների հետ կիսվեք հետևյալ սահմանումով և խնդրեք նրանց ասել, թե որ բառն է սահմանում. Սուրբ արարողություն, որը կատարվում է քահանայության իշխանությամբ: Խնդրեք ուսանողներին այսօր Եկեղեցում կատարվող արարողությունների օրինակներ բերել: Թվարկեք նրանց պատասխանները գրատախտակին: Կիսվեք հետևյալ սահմանումով ուսանողների հետ և խնդրեք նրանց ասել, թե որ բառով այն կարելի է սահմանել:

- Համաձայն Վարդապետություն և Ուխտեր 84.19–21-ի, ինչո՞ւ են արարողությունները մեզ համար կենսական:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է Տերը սուրբ արարողություններին այդքան մեծ կարևորություն տալիս փրկության համար:
- Ինչո՞ւ է արարողությունների հետ կապված տաճարներ կառուցելու անհրաժեշտությունն այդքան մեծ:

Կիսվեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերով.

> «Եկեղեցում մենք բավարար իշխանություն ունենք կատարելու համար բոլոր արարողությունները, որոնք անհրաժեշտ են ողջ մարդկային ընտանիքը փրկագնելու և վեհացնելու համար: Եվ քանի որ մենք ունենք կնքող զորության բանալիները, այն, ինչ մենք կապում ենք պատշաճ կապով այստեղ, կկապվի երկնքում....
>
> Մորոնիի հայտնվելուց տասերեք տարի անց տաճար կառուցվեց.... և Տերը կրկին հայտնվեց և Եղիան եկավ Նրա հետ և շնորհեց կնքող զորության բանալիները: Այդ ժամանակից ի վեր արարողությունները ժամանակավոր չեն, այլ մշտական» («Ordinances», in *1980 Devotional Speeches of the Year* [1981], 15–16):

Երբ Տերը, Եղիան և մյուս մարգարեները հայտնվեցին Կիրթլենդի Տաճարում, ո՞վ առաջին ստացավ քահանայության իշխանությունը և բանալիները (տես ՎԱՈՒ 110 բաժնի նախադրությունը): (Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին)

Ուսանողներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.14–17:

- Համաձայն 15–16 հատվածների, ի՞նչ ազդեցություն ունեցավ Ուրացությունը Տիրոջ Եկեղեցու վրա:

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին իշխանություն ունի՝ կատարելու արարողություններ, որոնք թույլ են տալիս մեզ վերադառնալ Աստծո մոտ և ապրել Նրա հետ սելեստիալ արքայությունում: Հրավիրեք ուսանողներին պատմել, թե ինչպես է որևէ սուրբ արարողություն ազդել իրենց կյանքի վրա:

Ցույց տվեք համապատասխան մի նկար: Ուսանողներին խնդրեք Նոր Կտակարանում գտնել սուրբ գրության այն հատվածը, որն այդ նկարի համար լավագույնս կհամապատասխանի որպես վերնագիր: (Եթե ուսանողը օգնության կարիք ունի, օգնեք նրան գտնելու այն ուսանողի ձեռնարկում, էջ 66, սուրբ գրություններ խորագրի տակ):



- Ինչպե՞ս կարելի է Եկեղեցու կազմակերպությունը համեմատել շենքի հետ:
- Համաձայն Եփեսացիս 2.20, ո՞րն է Քրիստոսի Եկեղեցու հիմքը:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ են մարգարեները և առաքյալները հանդիսանում Եկեղեցու հիմքը, իսկ Հիսուս Քրիստոսը՝ գլխավոր անկյունաքարը (տես Եփեսացիս 2.20):

Պատմության ընթացքում ուրացության և վերականգնման շրջանը մի քանի անգամ կրկնվել է:

Ուսանողներից մեկին խնդրեք ուսանողի ձեռնարկում այս սկզբունքի վերաբերյալ կարդալ ներածական պարբերությունը (65 էջեր): Ուսանողներին խնդրեք ուշադրություն դարձնել, թե ինչ է կորում ուրացության ժամանակ և ինչ է վերականգնվում ավետարանի նոր տնտեսությունների հետ: Նրանց նկատառումները գրեք գրատախտակին:

Թվարկեք հետևյալ սուրբ գրությունները գրատախտակին և խնդրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ տողերը, որոնք նկարագրում են ուրացության և վերականգնման այդ ուղին.

- *Մովսես 5.12:* Ադամն իր երեխաներին ուսուցանում է Աստծո հավերժական ծրագիրը:
- *Մովսես 5.13, 6.15:* Ադամի զավակներից շատերը մերժեցին նրա ուսմունքները և հետևեցին Սատանային:
- *Մովսես 8.19:* Տերը կարգեց Նոյին հայտարարելու Իր ավետարանը և այն վերականգնելու Ենովքի միջոցով: Ի վերջո, համաշխարհային ուրացությունը բերեց ջրհեղեղի և միայն Նոյի ընտանիքը հնազանդվեց:
- *Աբրահամ 1.18–19:* Նոյի նման, Աբրահամը կանչվեց Աստծո կողմից վերականգնելու ավետարանը և ծառայելու մարդկանց:
- *Մովսես 1.3, 6:* Ի վերջո, Աբրահամից հետո, Իսահակը և Հակոբը, Իսրայելի զավակները, ընկան ընդհանուր ուրացության մեջ, և Մովսեսը կանչվեց կրկին վերականգնելու ավետարանը:

Ուսանողներին խնդրեք բաժանվել երկու-երեք հոգուց կազմված խմբերի: Յուրաքանչյուր խմբի խնդրեք կարդալ «Ուրացություն» բաժինը *Հավատքին հավատարիմ Ավետարանական վկայակոչում* (2004, 194–196 էջեր): Ապա նրանց խնդրեք միմյանց միացնել այդ բաժնի տեղեկությունն ուսանողների ձեռնարկի տեղեկության հետ և գրի առնել երեք կարևոր կետ: Երկու կամ երեք խմբի խնդրեք օգտագործել իրենց գրառումները և դերերով դասարանին ներկայացնել, թե ինչպես իրենք կուսուցանեին հետաքրքրվողին ուրացության իրադարձությունները և թե ինչ է Տերն անում՝ օգնելու համար Իր զավակներին հաղթահարել ուրացությունը: Ամեն դերախաղից հետո, դասարանին խնդրեք նշել, թե ինչը լավ ընթացավ և թե ինչպես կարելի է ներկայացումն ավելի լավը դարձնել: (*Դիտողություն.* Այստեղ հիմնականում շեշտադրվում է ուրացությունը: Վերականգնումը կքննարկվի հետագայում՝ Ուսուցանելու առաջարկներում):

Ուսանողների հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Ուրացության մասին գիտելիքը լավ նախապատրաստություն հանդիսանում Ջոզեֆ Սմիթի և Առաջին Տեսիլքի մասին սովորելու համար:
- Ինչո՞ւ է օգտակար հասկանալ ուրացության և վերականգնման ուղին, կրկնվող տնտեսությունների ընթացքում:
- Ինչպե՞ս է վերականգնման ուղին ցույց տալիս Իր զավակների հանդեպ Աստծո սերը:

Փրկչին մերժելու, Նրա ուսմունքները և քահանայության իշխանությունը մերժելու արդյունքում Նոր Կտակարանի Եկեղեցին Ուրացության երթարկվեց:

Ուսուցանման նախորդ առաջարկից անդրադարձեք եկեղեցու շենքի պատկերմանը: Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ այդ բաժնի ներածական պարբերությունն ուսանողների ձեռնարկում (էջ 68), իսկ դասարանին խնդրեք լսել և որոշել, թե ինչ կորավ Փրկչի Եկեղեցուց:

- Ինչպիսի՞ գործողությունների արդյունքում վերացան առաքյալները, մարգարեները և Հիսուս Քրիստոսը՝ որպես վաղ Եկեղեցու հիմք:
- Ի՞նչպես փոխվեց Եկեղեցին, երբ հանվեց հիմքը:
- Ինչպիսի՞ ճանապարհներով են մարդիկ մերժում մարգարեներին:

Գրեք հետևյալ սուրբ գրությունների շղթան գրատախտակին. Գործք 20.29–31, Ա Կորնթացիս 11.18, Գաղատացիս 1.6–8, Ա Տիմոթեոս 1.5–7, Ա Հովհաննես 2.18: Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք մեկական հղում: Ուսանողներին խնդրեք կարդալ իրենց հանձնարարված սուրբ գրությունը և գտնել այն վտանգները, որոնց մասին վաղ ժամանակների Առաքյալները զգուշացրել են Եկեղեցու անդամներին: Ուսանողներին խնդրեք դասարանի հետ կիսվել այդ հանձնարարությունից իրենց սովորածով:

Ուսանողներին խնդրեք բաժանվել զույգերի և ուսումնասիրել այս սկզբունքի պարբերությունները (տես ուսանողի ձեռնարկ, էջ 66–68) և նախկինը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 65–66): Յուրաքանչյուր զույգի թույլ տվեք ստեղծել դասի ծրագիր՝ ուրացության և վերականգնման սկզբունքներից մեկի վերաբերյալ: Խնդրեք յուրաքանչյուր զույգին, օգտագործելով դասի իրենց ծրագիրը, մյուս զույգին սովորեցնել ուրացության մասին: Զույգի երկու ուսանողները պետք է մասնակցեն ուսուցանմանը: Ապա փոխեք դերերը, տալով մյուս ուսանողներին ևս ուսուցանման հնարավորություն: Վարժության վերջում թույլ տվեք ուսանողներին կիսվել իրենց դիտարկումներով, տալով հետևյալ հարցերը. «Ի՞նչ դուք սովորեցիք այս փորձից», «Ինչո՞վ ձեզ դուր եկավ մյուս խումբը» և «Ի՞նչը հաջորդ անգամ դուք կանեք այլ ձևով»:

Բացատրեք, որ շատ եկեղեցիներ ունեն որոշակի գիտելիք ճշմարտության մասին և ինչ-որ չափով երջանկություն են բերում մարդկանց: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի երջանկության ամբողջական ծրագիրը:

- Եթե դուք հետաքրքրվողին ուսուցանեիք ուրացության գաղափարը, ինչպե՞ս կպարզեիք, թե արդյոք նա հասկացել է ձեր ուսմունքը:

Բարեփոխումների աշխատանքը Եվրոպայում օգնեց ճանապարհ նախապատրաստել Վերականգնման համար:

Ցուցադրեք հետևյալ անձանց նկարները, եթե ունեք դրանք, կամ գրեք նրանց անունները գրատախտակին. Ջոն Ուիկլիֆ, Մարտին Լյութեր, Յեն Հես, Հալդրիխ Ցվինգլի, Ջոն Նոքս, Ջոն Քալվին և Վիլիամ Թինդեյլ: Հարցրեք, թե ինչ ընհանուր կողմեր ունեն այդ մարդիկ: (Նրանք կրոնական բարեփոխիչներից էին, ովքեր օգնեցին պատրաստել աշխարհը Վերականգնմանը): Հրավիրեք ուսանողներին համառոտ կիսվել նրանով, ինչ նրանք գիտեն այդ բարեփոխիչների մասին: Կարող եք ուսանողներին հիշեցնել Երեց Մ. Ռասսել Բալլարդի և Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի և Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերի մասին ուսանողի ձեռնարկում (էջ 69–70):

Կարդացեք և քննարկեք այլ հայտարարություններ ուսանողի ձեռնարկում կրոնական բարեփոխիչների կարևորության մասին (տես էջ 70): Կիսվեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ խոսքերով.

> «Աստված, մեր բոլորի Հայրը, օգտագործում է երկրի մարդկանց, հատկապես լավ մարդկանց, իրականացնելու իր նպատակները: Դա ճշմարիտ է անցյալի համար, ճշմարիտ է այսօրվա համար և ճշմարիտ է ապագայի համար» (in Conference Report, ապրիլ 1972, 49; կամ *Ensign*, July 1972, 59):

- Ինչո՞ւ է Բարեփոխումը հանդիսանում Վերականգման նախադրյալը:
- Ինչպե՞ս է ձեր իմացությունն այն մասին, որ շատ բարեփոխիչներ աստվածայնորեն ոգեշնչվել և օգնել են պատրաստել Վերականգնման ճանապարհը, ազդում այլ եկեղեցիների և նրանց անդամների մասին ձեր տեսակետի վրա (տես ՎԿՈՒ 123.12):

14 Կիսվեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի տված ամփոփումով, որը պետք է օգնի ուսանողներին պատրաստվել հաջորդ շաբաթվա դասին կամ ցուցադրեք ԹՍՍ 14 (2:22) շարժանկարը:

«Իր մահից առաջ [Փրկիչը] կարգեց Իր Առաքյալներին: Նրանք աշխատեցին որոշ ժամանակ: Նրա Եկեղեցին կազմավորվեց:

Դարեր անցան: Խավարի ամպը պատեց երկիրը....

Եկավ թալանի և տառապանքների շրջանը, որը նշանավորվեց երկարատև ու արյունոտ հակամարտություններով....

Անցան առաջին հազար տարիները և սկսվեց երկրորդ հազարամյակը: Դրա առաջին դարերը շարունակեցին նույն ուղին: Դա վախով և տանջանքներով լցված ժամանակ էր....

Մինչ տարիները շարունակում էին իրենց անդադար ընթացքը, նոր օրվա արևը սկսեց շողալ երկրի վրա: Դա արվեստի, ճարտարապետության և գրականության հրաշալի ծաղկման դարաշրջանն էր.... վերածնունդը:

Բարեփոխիչները փորձեցին փոխել եկեղեցին.... Դրանք մեծ քաջության տեր մարդիկ էին, որոնցից շատերն արժանացան դաժան մահվան իրենց համոզմունքների համար.... Նրանց միակ ցանկությունն էր գտնել մի ուղի, որով կարող էին երկրպագել Աստծուն այնպես, ինչպես Նա արժանի էր:

Մինչ այս զարթոնքը քրիստոնեաները շրջում էին աշխարհում, քաղաքական ուժերը նույնպես աշխատում էին: Այնուհետև սկսվեց Ամերիկյան Հեղափոխական Պատերազմը, որի արդյունքում ծնվեց մի ազգ, որի կանոնադրությունը հայտարարեց, որ կառավարությունը չպետք է իր զավթող ձեռքը մեկնի կրոնին վերաբերող հարցերին: Նոր օր բացվեց, փառավոր մի օր: Այլևս չկար պետական եկեղեցի: Ոչ մեկի հավատքը չէր գերակայում մյուսի վրա:

Խավարի, ցավի և պայքարի դարերից հետո, եկավ ավետարանի վերականգնման ծաղկման ժամանակը: Հին ժամանակների մարգարեները խոսել էին այս երկար սպասված օրվա մասին....

Այդ փառավոր օրը բացվեց 1820 թվականին, երբ մի պատանի, ջերմեռանդ և հավատքով լի, գնաց անտառի մի պուրակ և աղոթքով բարձրացրեց իր ձայնը, փնտրելով իմաստություն, որի կարիքը մեծապես զգում էր» (in Conference Report, հոկ. 1999, 92–94; կամ *Ensign,* Nov. 1999, 73–74):

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Անգիր սովորեք առնվազն երկու սուրբ գրությունների հատվածներ, որոնք ուսուցանում են Ուրացության մասին: Մի քանի հղումներ. Եսայիա 29.13–14; Ամոս 8.11–12, Գործք 20.29–30, Գաղատացիս 1.6–8, Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3, 2 Նեփի 27.1, Մորմոն 8.28, և Վարդապետություն և Ուխտեր 1.14–16:
- Կարդացեք Առաջին Տեսիլքի պատմությունը Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.5–20-ում:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ

Այս տնտեսության մեջ ավետարանի Վերականգնումն ընդգրկում է բոլոր նախկին տնտեսությունների ճշմարտությունները, ուխտերը, արարողությունները, քահանայության զորությունը և քահանայության բանալիները՝ իրենց ամբողջականությամբ: Վերականգնումը հիմնեց Աստծո արքայությունը երկրի վրա՝ ի նախապատրաստություն Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին: Ինչպես Տերը մարգարեացավ Նեփիացիներին Իր այցի ժամանակ, Մորմոնի Գիրքը պետք է դառնար հավատացյալների խոստացված հավաքման սկզբի նշանը (տես 3 Նեփի 21.1–7): Աստծո կանչված մարգարեների միջոցով Վերականգնումն աշխարհ եկավ ավետարանի իր ողջ լույսով (տես "The Glorious Gospel Light Has Shone," *Hymns,* no. 283):

«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին 19-րդ դարի եկեղեցի չէ, ոչ էլ ամերիկյան եկեղեցի, ոչ էլ պարզապես մի եկեղեցի, որն իր արմատներով հասնում է այսպես կոչված Քրիստոնյա դարաշրջանի: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում է ուսուցանվում Քրիստոսի ավետարանը, ինչպես եղել է երկրի հիմնադրումից առաջ: Սա ժամանակների լրության տնտեսությունն է, երբ ավետարանը ղեկավարվում է Ջոզեֆ անունով մարգարեի կողմից, մի տնտեսություն, երբ կրկին բացահայտվեց, որ մենք սիրող աստծո զավակներն ենք» (M. Russell Ballard, "The Power of the Restoration" [սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 24, 2003], 4):

Այս գլուխն ուսանողներին տալիս է տեղեկություն և ուսուցանման հնարավորություններ Ջոզեֆ Սմիթի որպես մարգարե կանչվելու, Մորմոնի Գրքի կարևորության և Տիրոջ իրական Եկեղեցու Վերականգնման հիմնարար ճշմարտությունների վերաբերյալ:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Աստված կանչեց Ջոզեֆ Սմիթին՝ լինելու Վերականգնման մարգարեն:
- Աստծո զորությամբ ու պարգևով Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը և երևան բերեց այլ սուրբ գրություններ:
- Մորմոնի Գիրքը օգնում է բերել մարդկանց Քրիստոսի մոտ:
- Մորմոնի Գիրքը Վերականգնման համոզիչ վկայություն է:
- Հիսուսի Քրիստոսի ղեկավարության ներքո, Իր ծառաների միջոցով, վերականգնվեց քահանայությունը և Եկեղեցին:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Աստված կանչեց Ջոզեֆ Սմիթին՝ լինելու Վերականգնման մարգարեն:

Միսիոներները պետք է հասկանան, որ այն, ինչ պատահեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ, համապատասխանում է այն ուղուն, որն Աստված օգտագործել է ամենասկզբից. Նա կանչում է մարգարեներ, հաճախ անձամբ նրանց հայտնվելով. Նա մարգարեների միջոցով տալիս է հայտնություն և սուրբ գրություններ. Մարգարեներն ուսուցանում են ավետարանի սկզբունքները Նրա ղեկավարությամբ. և մենք հրավիրվում ենք հետևելու այդ ուսմունքներին:

Ձեր ուսանողներն ավելի լավ պատարաստված կլինեն ուսուցանելու, երբ հասկանան, որ Աստված հետևում է այս ուղուն՝ մեր օրերում ճշմարտությունը հայտնելու համար: Երբ նրանց հետաքրքրվողները հասկանան այս ուղին, նրանք ավելի լավ պատրաստված կլինեն տեսնելու, թե ինչպես են Ջոզեֆ Սմիթը և Մորմոնի Գիրքը համապատասխանում Երկնային Հոր ծրագրին:

Հետևյալ ուղին գրեք գրատախտակին.

- Աստված կանչում է մարգարեներ և հաճախ անձամբ է հայտնվում նրանց:
- Նա տալիս է մարգարեներին քահանայության իշխանություն:
- Մարգարեները վկայում են Քրիստոսի մասին և ուսուցանում ավետարանը, հաճախ գրի առնելով իրենց վկայությունը և ուսմունքները սուրբ գրություններում:
- Սուրբ Հոգին հաստատում է ճշմարտությունը:
- Մենք հրավիրվում ենք հնազանդվել:

Խնդրեք ուսանողներին մտածել այս կետերի օրինակների մասին Հին Կտակարանից կամ Մորմոնի Գրքից: Ապա տվեք նույն հարցը և խնդրեք նրանց օրինակներ բերել Նոր Կտակարանից: Կարող եք նրանց պատասխանները գրել գրատախտակին համապատասխան պնդման դիմաց: Վկայեք, որ Տերը կրկնողաբար հետևել է այս ուղուն դեռ Ադամի օրերից սկսած:

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր, որ հետաքրքրվողները հասկանան այս ուղին:
- Ինչպե՞ս է Տիրոջ կողմից Մարգարե Ջոզեֆ Սմիթին կանչելը տեղավորվում այդ ուղու մեջ:
- Ինչո՞ւ էր Մարգարե Ջոզեֆ Սմիթին կանչելն անհրաժեշտ մեր օրերի համար:

Խնդրեք ուսանողներին մտածել սուրբ գրությունների մի հատվածի մասին, որը մեծապես ազդել է իրենց կյանքի վրա: Խնդրեք նրանցից մեկին-երկուսին կիսվել սուրբ գրության իրենց հատվածով և պատմել, թե ինչպես է այն ազդել իրենց վրա:

Որևէ մեկին խնդրեք մեջբերել Հակոբոս 1.5, ապա կարդացեք հետևյալ խոսքերը.

> «Մի նախադասություն, քանվեց հասարակ ու պարզ խոսքեր՝ Հոգու կողմից գրված այս խոսքերը մեծագույն ազդեցությունն գործեցին կրոնի և դրան վերաբերող բոլոր հարցերի վրա: Թեև դրանք ներկայացնում են համընդհանուր կիրառման աստվածային հայեցակարգ և գրված են եղել որպես ուղեցույց բոլոր մարդկանց համար, թեև դրանք նախանշում են այն ուղին, որով բոլորը պետք է առաջնորդվեն մաքուր և անարատ կրոնի իրենց որոնումներում, և թեև դրանք ուղղություն են բոլոր նրանց համար, ովքեր փնտրում են Տիրոջը և Նրա փրկող ճմարտությունները, միևնույն է, դրանք պահվեցին դարեր շարունակ որպես հատուկ ուղղություն այն մարգարեի համար, որը պետք է բերեր այն ժամանակների լրության տնտեսություն» (Bruce R. McConkie, *A New Witness for the Articles of Faith* [1985], 5):

Ուսանողներին խնդրեք նկարագրել, թե ինչով էր տարբերվում այդ տողերի կարդալը պատանի Ջոզեֆ Սմիթի կողմից կարդալուց և նույն այդ տողերի երբևէ մեկ այլ անձի կողմից կարդալուց: (Ջոզեֆի աղոթքի շնորհիվ ի հայտ եկան Առաջին Տեսիլքը և նրա միջոցով ավետարանի Վերականգնումը):

Ուսանողներին հինգ րոպե տվեք Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.14-20 կարդալու համար: Այնուհետև խնդրեք ուսանողներին բաժանվել զույգերի և միմյանց պատմել Առաջին Տեսիլքի պատմությունն իրենց բառերով և վկայել դրա ճշմարտության մասին: Շրջեք ուսանողների մեջ, լսելով և առաջարկություններ անելով:

Ուսանողների հետ միասին կարդացեք Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի խոսքերը ուսանողի ձեռնարկի 9-րդ գլխի նախաբանում (էջ 75):

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունները. Վարդապետություն և Ուխտեր 1.17, 19, 135.3, 6, 136.37–38: Բաժանեք դրանք դասարանի մեջ և ուսանողներին խնդրեք, օգտվելով իրենց հատվածներից, ձևակերպել Մարգարե Ջոզեֆ Սմիթի դերի և աշխատանքի մասին մի քանի համառոտ նկարագրություններ:

Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը և Աստծո պարգևի և զորության միջոցով երևան բերեց այլ սուրբ գրություններ:

Հարցրեք, թե արդյոք կան ուսանողներ, ովքեր տիրապետում են երկրորդ լեզվի: Նրանց հարցրեք, թե որքան ժամանակ է պահանջվել իրենց նոր լեզուն սովորելու համար: Պահեք Մորմոնի Գրքի օրինակը և ուսանողներին հարցրեք, թե որքան ժամանակ կպահանջվեր մեկ լեզվից մյուսն այդ չափի մի գիրք թարգմանելու համար:

15 Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Երեց Ռասսել Մ. Նելսոնի խոսքերն ուսանողների ձեռնարկում՝ Մորմոնի Գիրքը թարգմանելու համար անհրաժեշտ ժամանակի մասին (էջ 77), կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 15 (1:27) շարժանկարը:

- Ըստ Վարդապետություն և Ուխտեր 1.29-ի, ինչպե՞ս Մորմոնի Գրքի թարգմանությունը հնարավոր դարձավ:
- Ի՞նչ է նշանակում «միջոցներով» բառը Վարդապետություն և Ուխտեր 20.8-ում (տես 8*ա* տողատակի հղումը):

Ուսանողներին կարդացեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի սեփական պատմությունը Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.35 հատվածում.

«Գրառումների հետ միասին գտնվեց մի հետաքրքիր սարք, որը հնում կոչում էին Ուրիմ և Թումիմ, որը բաղկացած էր երկու թափանցիկ քարերից, որոնք աղեղնաձև շրջանակով փակցված էին տափակ թիթեղին: Ուրիմի և Թումիմի միջոցով նա թարգմանեց գրությունները աստծո պարգևով և զորությամբ» (տես *History of the Church,* 4:537):

- Ջոզեֆ Սմիթը թարգմանելիս պետք է հավատք գործադրեր: Համաձայն Վարդապետություն և Ուխտեր 8.1–3, 10–11, 9.7–9 հատվածների, ի՞նչ այլ ջանքեր էին հարկավոր Ջոզեֆին Աստծո պարգևը և զորությունը օգտագործելով թարգմանելու համար:
- Այս տողերից ի՞նչ սկզբունքներ դուք կարող եք կիրառել ձեր ապագա ջանքերում, որպեսզի վերականգնված ավետարանը սովորեք այնքան, որ արդյունավետ կարողանաք ուսուցանել այն:

Բացի Մորմոնի Գրքից, ի՞նչ այլ սուրբ գրություններ ի հայտ բերեց Ջոզեֆ Սմիթն Աստծո պարգևով և զորությամբ: (Գրեք դրանք գրատախտակին):

Ցույց տվեք ուսանողներին Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի և Թանկագին Մարգարիտի նկարագրությունները *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* (2004) գրքույկի, «Սուրբ գրքեր» բաժնում (173–178 էջեր): Ուսանողներին բաժանեք երեք հոգանոց խմբերի, մեկական խումբ սուրբ գրությունների գրքերից յուրաքանչյուրի համար: Խնդրեք խմբի յուրաքանչյուր ուսանողին պատրաստել համառոտ և պարզ բացատրություն իրենց խմբի սուրբ գրությունների մասին: Յուրաքանչյուր խմբին ժամանակ տվեք, որպեսզի յուրաքանչյուր ուսանող կարողանա իր նկարագրությունն առանց կարդալու պատմի իր խմբի մյուս երկու ուսանողներին: Նրանց խրախուսեք այնպիսի նկարագրություններ և բացատրություններ տալ, որոնք բավականին պարզ են նոր հետաքրքրվողի համար: Բացի այդ, կարող եք ուսանողներին խրախուսել իրենց բացատրություններում ներառել ժամանակակից մարգարեների և առաքյալների արժեքավոր խոսքերը (տես ՎԵՈՒ 1.38, 68.4): Խմբի անդամներին խնդրեք միմյանց հետ կիսվել իրենց դիտողություններով: Առաջարկեք այն փոփոխությունները, որոնք կօգնեն բարելավել նրանց նկարագրությունները:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերը նկարագրել է այլ սուրբ գրությունների անհրաժեշտությունը և միմյանց միջև կապը, որոնք ի հայտ են եկել Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով.

«Աստծո ասած ոչ բոլոր բաներն են Աստվածաշնչում: Մյուս սուրբ գրությունները՝ Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, և Թանկագին Մարգարիտը, հավասար արժեք ունեն և լրացնում են միմյանց» (in Conference Report, հոկ. 1984, 81; կամ *Ensign,* Nov. 1984, 66):

Մորմոնի Գիրքը օգնում է բերել մարդկանց Քրիստոսի մոտ:

Պատմեք Յոթանասունի անդամ՝ Երեց Ջեկ Հ. Գոսլինդ կրտսերի հետևյալ պատմությունը.

«Երբ մեկնում էի համաժողովի, կողքիս նստած էր մի տղամարդ, որը գործով գնում էր Սոլթ Լեյք: Նա ասաց, որ շատ անդամներ Եկեղեցու մասին խոսելիս, այդքան էլ պատրաստակամ չէին իր հետ:

Նա ինձ մի քանի հարց տվեց երիտասարդների, բարօրության ծրագրի, Եկեղեցու մասին ընդհանրապես: Ապա նա ինձ հարցրեց. «Ինչո՞ւ դուք, Մորմոներդ, քրիստոնեա չեք»....

Ես ասացի. «Ինչո՞ւ եք դուք տալիս այդ հարցը»:

Նա պատասխանեց. «Երբ դուք նստեցիք օդանավ, դուք բացեցիք այդ գիրքը՝ Մորմոնի Գիրքը, և ոչ թե Աստվածաշունչը, ինչպես քրիստոնեան կաներ»:

Ես հարցրեցի նրան, թե արդյոք չէր ցանկանում մի բան կարդալ Մորմոնի Գրքում:

Նա ասաց. «Եթե դուք փորձում եք վաճառել ինձ Մորմոնի Գիրքը, ես հետաքրքրված չեմ»:

Ես ասացի. «Դուք կկարդա՞ք մի տող»:

Դասարանին հարցրեք, թե իրենց կարծիքով, ինչ տող առաջարկեց երեց Գոսլինը կարդալ այդ մարդուն: Ուսանողներին մեկ կամ երկու րոպե տվեք, որպեսզի նրանք Մորմոնի Գրքում գտնեն այն տողը, որն ապացուցում է, որ մենք հավատում ենք Քրիստոսին: Ապա նրանց խնդրեք կարդալ դա դասարանի առաջ, այնուհետև շարունակեք երեց Գոսլինի պատմությունը.

«Ես տվեցի նրան իմ Մորմոնի Գիրքը, մատնանշելով 2 Նեփի 25.26, և խնդրեցի նրան կարդալ այն....

Հետո, երբ նա կարդաց սուրբ գրությունը, մենք երկար զրուցեցինք Մորմոնի Գրքի մասին: Ես նրան բերեցի իմ վկայությունն այն մասին, որ դա մեկ այլ վկայություն է Քրիստոսի մասին: Ապա ես նրան հարցրեցի, թե արդյոք չէր ցանկանա, որ միսիոներներն այցելեին և ուսուցանեին իրեն ավետարանի մասին: Նա ասաց, որ կուզենար: Միսիոներներն ուսուցանեցին այդ մարդուն և նրա ընտանիքին: Ի վերջո, նրանք բոլորը մկրտվեցին և դարձան Եկեղեցու ակտիվ անդամներ» (*Introduction to the Scriptures: Part B Sunday School Course 13* [1985], 40):

- Միսիոներական ի՞նչ կարևոր սկզբունք է ցուցադրում այս պատմությունը:
- Ինչ եք կարծում, ինչո՞վ օգնեց այն, որ այդ մարդը կարդաց Մորմոնի Գրքում, Քրիստոսի վրա կենտրոնացած լինելու սուրբ գրվածքի փաստը:

Ուսանողների հետ միասին կարդացեք Մորոնի 10.32 և խնդրեք նրանց գտնել այն, ինչ Մորոնին ուսուցանում էր այն մասին, թե *ինչու* մենք պետք է գանք դեպի Քրիստոսը:

- Ի՞նչ կարևոր քայլեր պետք է կատարի հետաքրքրվողը, որպեսզի «գա դեպի Քրիստոսը» (Մորոնի 10.32): (Ընդունի ավետարանի առաջնային սկզբունքները և արարողությունները):

Մի քանի ուսանողների խնդրեք համառոտ կիսվել, թե ինչպես է ազդել Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը Փրկչի մասին իրենց վկայությունների վրա:

Մորմոնի Գիրքը Վերականգնման համոզիչ վկայություն է:

Ուսանողներին խնդրեք ուսանողի ձեռնարկում կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի խոսքերը և Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի առաջին նախադասությունը (տես էջ 79):

- Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքը Վերականգնման համոզիչ վկայություն հանդիսանում:

- Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա ի՞նչ մենք պետք է եզրակացնենք Ջոզեֆ Սմիթի, քահանայության իշխանության, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու, հայտնության մասին:

Դասարանին խնդրեք կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի երկրորդ նախադասությունը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 79–80), ապա քննարկեք այն, թե ինչպես մենք կարող ենք օգտագործել Մորմոնի Գիրքն առարկություններին պատասխանելու համար: Կարող եք այդ ընթացքի յուրաքանչյուր քայլ գրել գրատախտակին: Դասարանին առաջարկեք մի առարկություն, որին կարող են հանդիպել միսիոներները, ապա օգտվելով Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի առաջարկած ընթացքով, վերացրեք մտահոգությունը Մորմոնի Գրքի օգնությամբ:

- Ինչպե՞ս դուք կօգտագործեիք այս չորս քայլերը՝ տասանորդ վճարելու հարցում առարկությանը պատասխանելու համար:

Թույլ տվեք, որ դասարանը միասին աշխատի այս առարկության վրա, կիրառելով բոլոր չորս քայլերը: Ուսանողներից մեկին խնդրեք ամփոփել, թե ինչպես նա կխրախուսեր հետաքրքրվողին ուսումնասիրել և աղոթել Մորմոնի Գրքի վերաբերյալ, որպեսզի իմանա, թե արդյոք տասանորդ վճարելն Աստծո պատվիրան է:

Դասարանը բաժանեք երեք-չորս հոգանոց փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի մի «առարկություն» հանձնարարեք: Խնդրեք նրանց դերախաղ անցկացնել, որտեղ հետաքրքրվողն առարկում է, իսկ միսիոներները օգնում են նրան ուսումնասիրել Վերականգնման սուրբ գրությունները և հասկանալ Մորմոնի Գրքի ճշմարտությամբ մասին իմանալու անհրաժեշտությունը: Կարող եք հանձնարարել հետևյալ առարկությունները կամ ինքներդ ընտրեք թեմաներ. Իմաստության Խոսքը, Հանգստության օրը, կենդանի մարգարեները, Աստվածաշնչից բացի այլ սուրբ գրքեր, ծոմապահությունը:

Խմբերից մի քանիսին խնդրեք կիսվել իրենց դերախաղի դասով դասարանի մյուս անդամների հետ: Ուսանողներին հարցրեք, թե ինչու այս մոտեցումն ավելի շուտ կհրավիրի Հոգին, քան վիճաբանությունն աստվածաշնչի իմաստի շուրջ: Դասարանին խնդրեք կարծիք հայտնել խմբերի դասի մասին: Վկայեք, որ Մորմոնի Գիրքը մեր լավագույն գործիքն է Վերականգնման ճշմարտությունն ուսուցանելու գործում:

Հիսուսի Քրիստոսի ղեկավարության ներքո, Իր ծառաների միջոցով, վերականգնվեց քահանայությունը և Եկեղեցին:

Գրատախտակին գրեք «Մայիսի 15, 1829» և «Ապրիլի 6, 1830»: Հարցրեք, թե արդյոք ուսանողները գիտեն 1829թ. մայիսի 15-ի նշանակության մասին:

Ուսանողներից մեկին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 13 բաժնի նախադրությունը և պատրաստվել սեփական բառերով ամփոփել՝ դասարանի համար: Մինչ ուսանողը պատրաստվում է, դասարանի անդամներին տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս դուք կսահմանեք *քահանայություն* բառը: (Կարող եք նրանց սահմանումը գրել գրատախտակին):
- Ինչո՞ւ է անհրաժեշտ քահանայության իշխանությունը:

Խնդրեք ուսանողին, որին հանձնարարվել էր, ներկայացնել Վարդապետություն և Ուխտեր 13-ի վերնագրի ամփոփումը:

Կիսվեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերով.

«Հիշեք, դա հարություն առած Հովհաննես Մկրտիչն էր, Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի ղեկավարության ներքո, ովքեր կրում էին Մելքիսեդեկյան Քահանայության բանալիները, որ անձամբ եկավ Ահարոնյան Քահանայությունը վերականգնելու համար, և հարություն առած Պետրոս, Հակոբոս և Հովհաննեսն էին, որ անձամբ եկան Մելքիսեդեկյան Քահանայությունը վերականգնելու: Սրանք Եկեղեցու պատմության այն փաստերն են, առանց որոնց քահանայության իշխանությունը կրելու մեր հայտարարությունն արժեք չունի» (in Conference Report, ապրիլ 1993, 23; կամ *Ensign*, May 1993, 20):

16 Ուսանողներին խնդրեք բացատրել, թե ինչու է 1830թ. ապրիլի 6-ը կարևոր: Ապա կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից՝ Երեց Լ. Թոմ Փերիի խոսքերը, կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 16 (1:18) շարժանկարը:

«1830թ. ապրիլի 6-ը նշանավոր օր է Վերջին Օրերի Սրբերի համար: Դա այն օրն է, երբ կազմակերպվեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Ավարտվեց Մորմոնի Գրքի թարգմանությունը և տպագրությունը, վերականգնվեց քահանայությունը և Տերը պատվիրեց, որ Իր եկեղեցին կրկին հիմնվի երկրի վրա:

Այս հատուկ առիթով Եկեղեցու ապագա անդամները հավաքվեցին Պիտեր Վիթմեր կրտսերի տանը Ֆայեթում՝ Նյու Յորք: Ժողովը հասարակ էր: Ջոզեֆ Սմիթը, այդ ժամանակ քսանչորս տարեկան տղա էր, երբ խնդրեց խմբի ուշադրությունը և նշանակեց հինգ օգնական, որոնք կօգնեին իրեն կարգավորել Նյու Յորքի իրավական պահանջները՝ կրոնական համայնք գրանցելու համար: Հանդիսավոր աղոթքի համար ծնկի գալուց հետո, Ջոզեֆ Սմիթն առաջարկեց, որ ինքը և Օլիվեր Քաուդերին կանչվեին նոր կազմավորված Եկեղեցու ուսուցիներ և հոգևոր խորհրդատուներ: Բոլորը բարձրացրեցին իրենց ձեռքերը.... և հիմնվեց Եկեղեցու ղեկավարության հաստատման ձևը» (in Conference Report, հոկ. 1994, 20; կամ *Ensign*, Nov. 1994, 17):

- Ինչո՞ւ էր անհրաժեշտ, որը քահանայությունը վերականգնվեր *նախքան* Եկեղեցու կազմակերպումը:
- Ի՞նչ փոփոխություններ կգործի Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնումը ձեր հետաքրքրվողների կյանքում:
- Ինչո՞ւ են երիտասարդ տղամարդիկ սովորաբար ստանում Մելքիսեդեկյան Քահանայությունը՝ լիաժամկետ միսիայում ծառայելուց առաջ:

Ինչպիսի՞ պատրաստություններ պետք է կատարի երիտասարդ տղամարդը Մելքիսեդեկյան Քահանայություն ստանալուց առաջ:

Պատասխանները ստանալուց հետո, ուսանողներին խնդրեք անդրադառնալ Վարդապետություն և Ուխտեր 84.33–48-ին և ընտրել սկզբունքներ, որոնք իրենց կարծիքով կարևոր են քահանայության երդումը և ուխտը հասկանալու համար: Քննարկեք նրանց մտքերը, եթե հարմար եք գտնում:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Ուսուցանեք այս գլխում տրված մեկ կամ մի քանի սկզբունքներ ընտանեկան երեկոյի կամ այլ հարմար միջոցառման ժամանակ: Օգտագործեք հիմնական սուրբ գրությունները և բերեք ձեր վկայությունն այդ սկզբունքների ճշմարտության մասին: (Լավ սովորություն է ուսուցանումից առաջ կազմել դասի ծրագիրը):
- Անգիր սովորեք հետևյալ սուրբ գրությունները. Գործք 2.37–38, 7.55–56, Եփեսացիս 2.19–20, 4.11–14:
- Անգիր սովորեք Մորմոնի Գրքի տիտղոսաթերթի նախաբանի երկու նախադասությունները:
- Ընտրեք և անգիր սովորեք Ջոզեֆ Սմիթ–Պատմության կարևոր տողերից:

Գլուխ 10

©1988 Greg K. Olsen: Տրամադրել է Mill Pond Press և Dr. Gerry Hooper: Չբազմացնել:

ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ԴԱՐՁԻ ԳԱԼԸ



Միսիոներները պետք է հավատք ունենան, որ Հիսուսը Քրիստոսն է, իրենց Փրկիչը և Քավիչը: Նրանք պետք է գործարկեն Նրա Քավությունն ապաշխարության միջոցով, հետևեն Նրա ուսմունքներին, վստահեն Նրա խոսքերին և հավատան, որ Նա սիրում է իրենց: Հիսուս Քրիստոսի հանդեպ բավարար հավատքը կուղեկցի նրան միսիայի միջով, անկախ վայրից և հանգամանքներից:

Միսիոներները պետք է ուսուցանեն հետաքրքրվողներին, ինչպես հավատք ձեռք բերել Քրիստոսի հանդեպ: Նրանք պետք է օգնեն նրանց դարձի գալ և ստանալ ջրով և Հոգով մկրտություն: Այս գլուխն առաջարկում է եղանակներ, որոնք կօգնեն ուսանողներին ավելի շատ սովորել Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի մասին, խորացնել իրենց անձնական հավատքը, ինչպես նաև նրանց հավատքը, ում ուսուցանում են, և կարողանան հասկանալ անձի դարձի գալու ընթացքում Սուրբ Հոգու պարգևի կարևորությունը:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս կենսական է հոգևոր զարգացման համար:
- Հավատքը կարող է աճել:
- Հավատքն առաջնորդում է դարձի գալու:
- Դարձի գալը ներառում է ապաշխարություն, մկրտություն և Սուրբ Հոգու պարգևի ստացում:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս կենսական է հոգևոր զարգացման համար:

Խնդրեք կամավորների կարդալ *հավատք* բառի սահմանումը Երրայեցիս 11.1-ում և Ալմա 32.21-ում: Այնուհետև խրախուսեք ուսանողներին օրինակներ բերել, թե ինչպես է հավատքի կիրառումը օրհնել նրանց կամ նրանց ծանոթներին:

Մի ուսանողի խնդրեք անգիր ասել (կամ կարդացեք) հավատո չորրոդ հանգանակը:

- Ո՞ւմ պետք է մենք հավատանք: Եվ ինչո՞ւ:

Մի ուսանողի խնդրեք կարդալ երկու հարց ուսանողի ձեռնարկից (էջ 85), որոնք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը տվել է հավատքի մասին: Ուսանողներին խնդրեք ասել, թե ինչպես իրենք կպատասխանեին այդ հարցերին, եթե դրանք տար հետաքրքրվողը: Նրանց պատասխանների համառոտ ամփոփումը գրեք գրատախտակին:

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի ամբողջ հայտարարությունը: Ապա հրավիրեք ուսանողներին համեմատել իրենց պատասխանները մարգարեի հայտարարության հետ: Առաջարկեք, որ ուսանողները համառոտ ամփոփեն Նախագահ Բենսոնի յուրաքանչյուր նկարագրությունը և ավելացնեն դրանք գրատախտակի ցանկին: Քննարկում ծավալեք այդ նկարագրությունների շուրջ:

Ուսանողներին խնդրեք գտնել «Հավատք» բառը Սուրբ գրությունների ուղեցույցում, (էջ 116): Կարող եք նաև մի քանի ուսանողի խնդրել կարդալ «Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս» բաժինը, որը «Հավատք» ավետարանական թեմայի մասն է կազմում *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* գրքույկում (2004, էջ 102): Խնդրեք նրանց կարդալ և նշել կարևոր նախադասությունները: Ուսանողներին հրավիրեք կիսվել իրենց նշած նախադասություններով և ասել, թե ինչու են դրանք կարևոր: Ուսանողներին խնդրեք գտնել սուրբ գրությունների հղումներ, որոնք հավատքի մասին են (օրինակ՝ Ալմա 32.1, Եթեր 12.6, Եբրայեցիս 11.1, Հակոբոս 2.17–18):

Խնդրեք ուսանողներին կարդալ Եթեր 12.14–15 հատվածները, որը պատմում է այն միսիոներների մասին, որոնք կիրառում էին իրենց հավատքը:

- Ինչո՞ւ այդ միսիոներները կարողացան հաջողության հասնել:
- Համաձայն տող 14-ի, ո՞ւր տարավ հավատքը Լամանացիներին:

Ուսանողներին խնդրեք պատասխանել հետևյալ հարցերին, օգտվելով մի բացատրությունից, որը կարող է հասկանալ հետաքրքրվողը, կամ՝ վերջերս մկրտված Եկեղեցու անդամը:

- Ի՞նչ փոխարինող արտահայտություն կարող եմ ես օգտագործել «հավատք» բառի իմաստը բացատրելու համար (տես նկարագրությունները, որոնք նրանք, հնարավոր է, կարդացել են Սուրբ գրությունների ուղեցույցում կամ *Հավատքին հավատարիմ* գրքույկում):
- Ի՞նչ հիմնական սուրբ գրություն ես կարող եմ կարդալ և նշել, որը նկարագրում է հավատքը: Ինչպե՞ս ես կարող եմ իմ բառերով արտահայտել այդ սուրբ գրության բովանդակությունը:
- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը տանում դեպի փրկություն:

Հավատքը կարող է աճել:

Շատ միսիոներներ ցանկանում են իմանալ, թե ինչպես կարող են մեծացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը: Սա կարևոր հարց է: Որքան ավելի մեծ հավատք ունեն միսիոներները Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի հանդեպ, այդքան ավելի մեծ զորություն կունենան նրանք՝ գտնելու նրանց, ում Տերը պատրաստել է, որպեսզի ուսուցանեն նրանց այնպես, ինչպես հաճելի է Աստծուն: Օգտագործեք ուսուցանելու այս առաջարկները, շեշտելու համար, թե ինչպես միսիոները կարող է անձամբ աճել հավատքի մեջ:

Հաջորդ սկզբունքը և ուսուցանելու համապատասխան առաջարկները (հավատքի և դարձի մասին) շեշտում են *հետաքրքրվողներին* Քրիստոսի հանդեպ հավատք զարգացնելու անհրաժեշտությունը և որ Վերականգնման ուղերձը էական է իրենց դարձի համար:

Կարդացեք Երեց Ջոն Կ. Կարմակի հետևյալ խոսքերը.

> «Մեր հավատքը խորացնելը պահանջում է մեզանից ապավինել Տիրոջը մեր ողջ հոգով» (“Lord, Increase Our Faith,” *Ensign*, մարտ 2002, 57):

- Ի՞նչ կարող ենք մենք անել Տիրոջ հանդեպ մեր վստահությունը մեծացնելու համար:

Ուսանողների պատասխաններից հետո նրանց խնդրեք անդրադառնալ Երեց Կարմակի և Երեց Ռիչարդ Ջ. Սթոտի խոսքերին ուսանողի ձեռնարկում (86–87 էջեր): Գրատախտակին գրեք «Մեծացրեք հավատքը, կատարելով հետևյալը....»: Մի քանի ուսանողների հրավիրեք բարձրաձայն կարդալ նշված կետերը: Ուսանողներին խնդրեք առաջարկել ամփոփ նախադասություն յուրաքանչյուր կետի համար և ավելացրեք դա գրատախտակին:

Ուսանողներից մեկին խնդրեք դասարանին կարդալ Երեց Սթոտի խոսքերի վերջին պարբերությունը, իսկ մեկ ուրիշի՝ ամփոփել այն իր բառերով:

Դասարանը բաժանեք զույգերի և խնդրեք նրանց 10–12 րոպե տրամադրել դաս պատրաստելուն: Ուսանողներին խնդրեք օգտագործել սուրբ գրությունները և պնդումները, որոնք մեջբերված են ուսանողի ձեռնարկի համապատասխան բաժնում (էջ 86), և պատարաստել երեք-հինգ րոպեանոց դաս, որը կարող են ուսուցանել, օգնելով *այլ միսիոներների* մեծացնել իրենց հավատքը: Նրանք կարող են նաև ներառել անձնական փորձառություններ, որոնք օգտակար կլինեն: Բացի այդ, խրախուսեք նրանց մտածել ծանոթ որևէ առարկայի մասին, օրինակ բույսի, որը կարող են կապել հավատքի աճի հետ: Խնդրեք նրանց այդ համեմատությունը ներառել իրենց դասի մեջ: Ժամանակ տրամադրեք ուսանողների զույգերի՝ իրենց դասը մյուս փոքր խմբերին կամ դասարանին ուսուցանելու համար: Ուսնողներին հրավիրեք հայտնել իրենց կարծիքը յուրաքանչյուր դասի ուժեղ կողմերի մասին և ասել, թե ինչ կարելի էր անել այն ուժեղացնելու համար:

Հավատքն առաջնորդում է դարձի գալու:

Գրատախտակին գրեք *դարձի գալ* բառը և ուսանողներին խնդրեք քննարկել դրա նշանակությունը: Նրանց խնդրեք օգտվել Սուրբ գրությունների ուղեցույցից, էջ 48 և Երեց Մերիոն Ջ. Ռոմնիի խոսքերից ուսանողների ձեռնարկում (88 էջեր): Ուսանողներից մեկին հրավիրեք կարդալ *դարձի գալ* բառը սահմանող տեղեկությունը:

- Ինչո՞ւ է Քրիստոսի հանդեպ հավատքը դարձի գալու կարևոր խրախուսող տարր հանդիսանում:
- Բացի Քրիստոսի հանդեպ հավատքից, ի՞նչ այլ տարրեր են կարևոր դարձի գալու համար:

Հրավիրեք դասարանի մի քանի անդամների կիսվել դարձի գալու իրենց անձնական փորձով: Նրանց խնդրեք քննարկել, թե ինչու է Հոգին և Քրիստոսի հանդեպ հավատք ունենալն իրենց դարձի գալու մասը կազմում:

Կարդացեք Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը.

> «Մեր պարտականությունն է, որ օգնենք ուրիշներին, Հոգու զորությամբ, *իմանալ* և *հասկանալ* ավետարանի վարդապետությունները և սկզբունքները: Բոլորը պետք է կարողանան *զգալ*, որ Վերականգնման վարդապետությունները ճշմարիտ են և մեծ արժեք են ներկայացնում» (in Conference Report, հոկ. 2000, 97; կամ *Ensign*, Nov. 2000, 75):

Դասարանը բաժանեք երեք-չորս հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք հետևյալ ցանկից որևէ մեկը. Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ, Մորմոնի Գրքի նախաբան կամ Մորոնի 10.2–7-ում տրված խոստումը: Խմբերին խնդրեք ուսումնասիրել այդ հատվածները և գտնել հետևյալ հարցի պատասխանները.

- Ի՞նչ եղանակներով կամ ինչ պայմաններում միսիոներները կարող են հետաքրքրվողի հետ կիսվել այս աղբյուրներից յուրաքանչյուրով:

Յուրաքանչյուր խմբից մի կամավորի խնդրեք դերախաղով ցույց տալ, թե ինչպես նա կկիսվեր այդ աղբյուրով, իսկ մյուս ուսանողը թող կատարի հետաքրքրվողի դերը: Նրանց հրավիրեք խրախուսել հետաքրքրվողին, որպես խաղի մի մաս, անկեղծ կարդալ և աղոթել Մորմոնի Գրքի մասին՝ որպես Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելու միջոցի: Ուսանողներին ժամանակ տվեք հայտնելու համար իրենց կարծիքը դերախաղի մեջ ընդգրկված ուսանողներին:

Դասարանի անդամներին հարցրեք, թե ինչու է հավատքն անհրաժեշտ և՛ միսիոների, և՛ հետաքրքրվողի համար: Ավարտեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ հայտարարությամբ.

> «Հիշեք, որ հավատքը և կասկածը չեն կարող համատեղ գոյություն ունենալ մտքում, քանի որ մեկը կհանի մյուսին: Դուրս գցեք կասկածը: Աճեցրեք հավատքը» (in Conference Report, հոկ. 2000, 65; կամ *Ensign*, Nov. 2000, 49):

Գրեք հետևյալ ցանկը գրատախտակին (առանց ուղեկցող սուրբ գրությունների): Դասարանին տվեք հինգից ութ րոպե՝ ցանկն արտագրելու Ալմա 32.26–43 և Եթեր 12.6 մտքում կարդալու և նշելու համար այն տողերը, որ ուսուցանում են այդ մասերը: Ուսանողներին խնդրեք գրել յուրաքանչյուր արտահայտության դիմաց իրենց վերաբերող սուրբ գրությունը: Բացատրեք, որ դրանք այն նույն գործողություններն են, որ տանում են մեզ դարձի գալու և օգնում Եկեղեցու անդամներին մեծացնել իրենց հավատքը և ամրացնել իրենց վկայությունները:

<u>Մեծացնել հավատքը</u>

1. Լսեք Աստծո խոսքն առանց մեխանիկորեն այն մերժելու: (Ալմա 32.27–28):
2. Հույս ունեցեք կամ ցանկացեք հավատալ, որ դա կարող է ճշմարիտ լինել: (Ալմա 32.27):
3. Գործեք ըստ այդ հույսի (փորձարկեք, սնուցել այն): (Ալմա 32.27, 33, 36):
4. Նկատեք լավ զգացմունքները կամ արդյունքները, որոնք հուշում են, որ խոսքը ճշմարիտ է: (Ալմա 32.28, 33–35):
5. Դիմացեք փորձություններին: (Եթեր 12.6):
6. Շարունակեք սնուցել խոսքը մինչև որ այն դառնա որոշակի: (Ալմա 32.38–42):

Դասարանը բաժանեք զույգերի և խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե իրենք հենց նոր ուսուցանել են ավետարանի ուղերձը որևէ ընտանիքի կամ անհատի: Ապա խնդրեք դասարանին օգտագործել իրենց ցանկը և ուղեկցող սուրբ գրությունները՝ ուսուցանելով իրենց հետաքրքրվողներին այն սկզբունքները, որոնք տանում են դեպի ավելի մեծ հավատք: Նրանք պետք է օգտագործեն իրենց սեփական խոսքերը, երբեմն հղում կատարելով տեքստի տողերին: Նրանց խրախուսեք ներառել անձնական փորձառությունը, եթե պատշաճ է: Յուրաքանչյուր զույգին տվեք 10 րոպե վարժությունը կատարելու համար: Ուսուցանվող անձը կարող է վարժության ընթացքում հարցեր տալ:

Վարժության վերջում թույլ տվեք դասարանի անդամներին դիտողություններ անել և լրացուցիչ հարցեր տալ հավատքի զարգացման մասին: Այդ հարցերին ինքներդ պատասխանելու փոխարեն, նախ ուսանողներին հնարավորություն տվեք պատասխաններ առաջարկել:

17 Ցուցադրեք վերջերս կտրված ծառի կամ թփի ճյուղ և բացատրեք, որ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին համեմատում էր կանաչ ծառի ճյուղը հետաքրքրվողի հետ: Դասարանին խնդրեք լսել, մինչ մի ուսանող կկարդա նրա խոսքերը և կաշխատի բացատրել Նախագահ Հինքլիի համեմատության իմաստը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 88), կամ կարող եք ցույց տալ ԹՏՍ 17 (1:44) շարժանկարը: Նախագահ Հինքլիի համեմատությունը քննարկելուց հետո դասարանի անդամներին թույլ տվեք առաջարկել մտքեր այն խորհրդանիշի մասին, որով հետաքրքրվողը համեմատվում է կրակի մեջ գցվող կանաչ ճյուղի հետ:

- Ի՞նչ կարող են անել միսիոներները, օգնելու համար նրանց, ովքեր սկսում են շփվել վերականգնված ավետարանի կրակի հետ:

Դարձի գալը ներառում է ապաշխարություն, մկրտություն և Սուրբ Հոգու պարգևի ստացում:

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Հովհաննես 3.5:

Ուսանողներին խնդրեք կարդալ Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերը մկրտության արարողության մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 89):

- Ինչո՞ւ, ըստ Մարգարե Ջոզեֆ Սմիթի, մկրտությունն առանց Սուրբ Հոգու պարգևի հաստատման աննպատակ է:

Ցույց տվեք հաղորդության սկուտեղների մի հավաքածու կամ նկար, որտեղ պատկերված են քահանայություն կրողները՝ հաղորդությունը օրհնելիս և բաժանելիս (Ավետարանի նկարների հավաքածու, 603–604 նկարներ):

- Ի՞նչ կփոխվի հաղորդության արարողություն մեջ, եթե հաղորդության հաջորդ ժողովին քահանայության ղեկավարներն օրհնեն և բաժանեն միայն հացը:
- Ինչպե՞ս կարելի է հաղորդության արարողության այս արտասովոր նկարագրությունը համեմատել ձեր ունկնդիրներին ջրով մկրտությանը նախապատրաստելու հետ, առանց շեշտելով Սուրբ Հոգու պարգևի կարևորությունը և ուսուցանելով նրանց այդ մասին: (*Ուշադրություն.* Այս նմանությունը չի փորձում համեմատել հաղորդության ջուրը Սուրբ Հոգու պարգևի հետ):

18 Բացատրեք ուսանողներին, որ մենք հաճախ խոսում ենք մարդկանց մկրտությանը նախապատրաստելու մասին, սակայն հաճախ մոռանում ենք ցույց տալ ամուր կապը մկրտության, հաստատման և Սուրբ Հոգու պարգևը շնորհելու մեջ: Կիսվեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի խոսքերով ուսանողների ձեռնարկից (էջ 88–89), կամ ցուցադրեք ԹՏՍ 18 (0:45) շարժանկարը:

- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք շեշտենք Սուրբ Հոգու պարգևի անհրաժեշտությունը:

Ուսանողների հետ կիսվեք հետևյալ սուրբ գրություններով: Կարող եք գրել դրանք գրատախտակին և խնդրել դասարանի անդամներին կարդալ, ապա բացատրել, թե ինչ են դրանք ասում Սուրբ Հոգու պարգևի կարևորության մասին:

- 2 Նեփի 31.13
- 2 Նեփի 31.17, 3 Նեփի 12.2
- 2 Նեփի 32.5, 3 Նեփի 19.9–13

19 Կիսվեք հետևյալ հայտարարությամբ՝ կրկին շեշտելու համար իրենց կյանքում Սուրբ Հոգու պարգևի անհրաժշտությունը նորադարձների և միսիոներների կողմից հասկանալու կարիքը կամ ցուցադրեք ԹՏՍ 19 (0:42) շարժանկարը:

> «Մկրտությունը *երկու* մասից է բաղկացած՝ մկրտություն ջրով և մկրտություն կրակով կամ Սուրբ Հոգով: Եթե առանձնացնեք դրանք միմյանցից, ապա, ինչպես ասել է Մարգարե Ջոզեֆ Սմիթը, դա կլինի միայն կիսով չափ մկրտություն....
>
> Երկուսը միասին պահելով, գրեթե արգելելով ինքներդ ձեզ ասել «մկրտություն», առանց ասելու «հաստատում», դուք կստանաք մկրտություն ջրով և հաստատումով և Սուրբ Հոգու պարգևի շնորհումով: Պահեք այդ գաղափարը ձեր մտքում այնպես, որպեսզի այդ երկուսն այնքան ամուր ամրացված լինեն միմյանց, որ ինչպես մեկ միասնական բաղադրիչ դառնան ձեր էության մասը» (Boyd K. Packer, "The Gift of the Holy Ghost: What Every Missionary Should Know–and Every Member as Well" [սեմինար նոր միսիայի նախագահների համար, հունիս 24, 2003], 3, 6):

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Անգիր սովորեք Եբրայեցիս 11.1, Ալմա 32.21 և Եթեր 12.6 հատվածները:
- Վերանայեք Երեց Ջոն Կ. Կարմակի և Երեց Ռիչարդ Գ. Սքոթի խոսքերի ընդգծված կետերը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 86–87): Մտածեք այդ կետերի հանդեպ ձեր վերաբերմունքի և դրանց համապատասխանելու ձեր ունակությունների մասին: Ընտրեք մեկ կամ երկու ոլորտ, որոնք կցանկայիք բարելավել, և ծրագիր մշակեք, որը կտանի դեպի այդ բարելավումը: Կիսվեք այդ ծրագրով ձեր Երկնային Հոր հետ աղոթքի միջոցով և օգնություն խնդրեք՝ ձեր հավատքը մեծացնելու համար:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԷՄՈՑԻՈՆԱԼ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է միսիոներական ծառայության մասին.

> «Պետք է առկա լինի առողջություն և ուժ՝ և՛ ֆիզիկական, և՛ մտավոր, քանի որ աշխատանքը պահանջկոտ է, ժամերը երկար, իսկ ճնշումը մեծ» (“Missionary Service,” in *First Worldwide Leadership Training Meeting* [2003], 18):

Ապագա միսիոներները պետք է այժմ աշխատեն հիմնել և պահպանել լավ ֆիզիկական, մտավոր և էմոցիոնալ առողջության օգտակար սովորույթներ: Ապագա միսիոներները, ովքեր հետևում են մարգարեական խորհրդին, ավելի լավ առողջություն և ավելի արդյունավետ կյանք են ունենում: Նրանք կարող են նաև ստանալ ոգեշնչման և իմաստության հատուկ օրհնություններ (տես Դանիել 1.8–20; ՎԿՈՒ 89.18–21): Ֆիզիկական, էմոցիոնալ կամ մտավոր դժվարություններ ունեցողները միսիային նախապատրաստվելիս պետք է խորհուրդ փնտրեն բժիշկներից, իրենց եպիսկոպոսներից և ցցերի նախագահներից: Տիրոջը ծառայելը «ողջ սրտով, մտքով և զորությամբ» (ՎԿՈՒ 4.2) մի նպատակ է, որը պահանջում է ձեր լավագույն ջանքերը ձեր կյանքի բոլոր ոլորտներում:

Դիտողություն. Դուք պետք է խուսափեք ծառայությանը որոկավորվելու համար ապագա միսիոների հատկանիշների մասին դատողություններ անելուց: Դա եպիսկոպոսների և ցցերի նախագահների խնդիրն է:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Ապագա միսիոներները պետք է պատրաստվեն լիաժամկետ միսիայի ֆիզիկական և էմոցիոնալ պահանջներին:
- Ֆիզիկական կամ էմոցիոնալ վիճակի պատճառով քահանայության ղեկավարների կողմից ազատված ապագա միսիոներների համար կան լիաժամկետ միսիայի այլընտրանքային այլ պատվավոր ծառայություններ:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ապագա միսիոներները պետք է պատրաստվեն լիաժամկետ միսիայի ֆիզիկական և էմոցիոնալ պահանջներին:

20 Կարդացեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի խոսքերն ուսանողի ձեռնարկի նախաբանում (էջ 93), ֆիզիկական կամ էմոցիոնալ դժվարությունների մասին, որ միսիոներները կարող են ունենալ միսիայից առաջ, կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 20, հատված 1 (1:01) շարժանկարը:

- Ինչո՞ւ է ֆիզիկական լավ առողջությունը կարևոր արդյունավետ միսիոներական աշխատանքի համար:
- Ինչո՞ւ է էմոցիոնալ (մտավոր) լավ առողջությունը կարևոր արդյունավետ միսիոներական աշխատանքի համար:
- Ինչո՞ւ է կարևոր որոշել, թե արդյոք միսիոների ֆիզիկական և էմոցիոնալ առողջությունը համապատասխանում է լիաժամկետ միսիոներական ծառայությանը:

20 Ուսանողների հետ կարդացեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի խորհուրդը քահանայության ղեկավարներին նրանց պատասխանատվության մասին՝ դատելու ապագա միսիոներների ֆիզիկական և էմոցիոնալ պատրաստվածության մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 94), կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 20, հատված 2 (0:48) շարժանկարը:

- Ի՞նչ պետք է քահանայության ղեկավարը պարզի ծառայելու համար ձեր ֆիզիկական և էմոցիոնալ պատրաստվածության մասին:
- Ինչպե՞ս դա կարող է ազդել որպես միսիոներ ձեր հոգևոր վիճակի և արդյունավետության վրա, եթե գիտեք, որ լուրջ առողջական խնդիր ունեք, որի մասին չեք ասել քահանայության ղեկավարներին կամ ստուգում անցկացնող բժիշկներին:

Գրեք առողջության հետևյալ ուղեցույցը գրատախտակին:

<u>Հիմնական ուղեցույց ֆիզիկական լավ առողջության համար</u>

1. Սնունդ
2. Կանոնավոր մարզում
3. Պատշաճ հիգիենա և ատամնաբուժական խնամք
4. Ապրելու մաքուր պայմաններ

Բաժանեք դասարանը երկու-երեք ուսանողներից բաղկացած խմբերի և յուրաքանչյուր խմբի մեկ ցուցում հանձնարարեք: Յուրաքանչյուր խմբի խնդրեք պատրաստել երեք-չորս րոպեանոց համառոտ դաս իրենց հանձնարարված թեմայով: Այդ դասերը պետք է բացատրեն, (1) ինչու է ցուցումը կարևոր և (2) ինչ մենք պետք է անենք, որպեսզի հետևենք ցուցումներին, երբ պատրաստվում ենք ծառայության և երբ ծառայում ենք լիաժամկետ միսիայում: Յուրաքանչյուր խմբի տվեք հարցի մեկ օրինակ և ստորև տրված տեղեկությունը, որը համապատասխանում է իրենց հանձնարարված ցուցումին: Նրանք կարող են օգտագործել հարցերն իրենց ուսուցման ժամանակ կամ պատրաստեն իրենց սեփական հարցերը:

1. *Սնունդ:* կիրառեք հավասարակշռված կերակրացանկ, օգտագործեք մաքուր ջուր և առողջ ուտելիք (տես ուսանողի ձեռնարկ, էջ 95):

   - Համաձայն Իմաստության Խոսքի Վարդապետություն և Ուխտեր 89.10–17-ում, սննդի ո՞ր հիմնական երեք խմբերի մասին է խոսք գնում:

     ա. Մրգեր և բանջարեղեն (հհ. 10–11):

     բ. Պրոտեին (հհ. 12–13): Այս խումբը ներառում է միս, ձուկ, կաթնամթերք, հավկիթ և լոբազգիներ:

գ. Ցորենազգիներ (հհ. 14–17): Ամբողջական ցորենազգիները լավագույն են, որպես տարբերակ, ինչպես բրինձը և ցորենը:

- Միսիայի ծառայության ընթացքում ի՞նչ վտանգներ կարող են առաջանալ ջրի օգտագործման հետ: (Ուսանողները կարող է հաշվի առած չլինեն այն վտանգները, որ կապված են խմիչքների մեջ սառեցրած կեղտոտ ջրի օգտագործման, ատամները և ափսեները լվանալու հետ):
- Ինչպե՞ս կարող է միսիոները մաքրել ջուրը:
- Ի՞նչ սովորույթներ պետք է օգտագործել մաքուր սնունդ պատրաստելու համար: (Օգտվեք սնունդ պատրաստելու մաքուր տարածքից և սպասքից, լավ եփեք ուտելիքը, մի օգտագործեք երկու ժամից ավելի սառնարանից դուրս մնացած ուտելիքը, չեփած միսն առանձին պահեք այլ ուտելիքից, և այլն):
- Ինչո՞ւ է վտանգավոր ուտել փողոցում վաճառվող սնունդը:
- Ի՞նչ դժվարությունների են հանդիպում լիաժամկետ միսիոներները, աշխատելով պահել հավասարակշռված կերակրացանկ, որը նկարագրված է Իմաստության Խոսքում:

2. *Կանոնավոր մարզում:* Ֆիզիկապես մարզված եղեք միսիոներական ծառայության համար (տես ուսանողի ձեռնարկ, էջ 95):

   Վերանայեք Երեց Մ. Ռասսել Բալլարդի և Երեց Ռասսել Մ. Նելսոնի խոսքերն ուսանողի ձեռնարկում (էջ 94):

   - Ինչպե՞ս է ամենօրյա մարզումը նպաստել ֆիզիկական և էմոցիոնալ առողջությանը:
   - Ի՞նչ երեք տեսակի վարժություններ են նշված (տես ուսանողի ձեռնարկ, էջ 95):
   - Լավ առողջության ի՞նչ սկզբունքներ են ուսուցանվում Վարդապետություն և Ուխտեր 88.124-ում:

3. *Պատշաճ հիգիենա և ատամնաբուժական խնամք:* Մարմինը և ատամները մաքուր պահեք (տես ուսանողի ձեռնարկ, էջ 95):

   - Ի՞նչ է ձեզ համար պատշաճ հիգիենան:
   - Ե՞րբ դուք պետք է լվանաք ձեր ձեռքերը:
   - Ինչպե՞ս դուք պետք է լվանաք ձեր ձեռքերը:
   - Մարմինը և ատամները մաքուր պահելն ինչպե՞ս կարող է ազդել ձեր քարոզման գործունեության վրա:

4. *Ապրելու մաքուր պայմաններ:* Ձեր բնակարանը պահեք մաքուր և դասավորված:

   - Ի՞նչ կապ գոյություն ունի Սուրբ Հոգու և մաքուր բնակավայրի միջև:
   - Ինչպիսի՞ն են միսիոներների համար տան մաքրման հետ կապված խելամիտ ակնկալիքները:

Մեկ այլ կարևոր հանգամանք, որը պետք է հաշվի առնել, դա մտավոր և էմոցիոնալ առողջությունն է: Ուսանողներին, ովքեր անհանգստություն, ճնշվածություն կամ նմանատիպ խնդիրներ են ունենում, խրախուսեք այդ հարցերի շուրջ խորհրդակցել իրենց եպիսկոպոսների և ցցերի նախագահների հետ: Այդ խնդիրները, պարտադիր չէ, որ արգելք հանդիսանան լիաժամկետ միսիայում ծառայելու համար:

21 Ուսանողների հետ կարդացեք ուսանողի ձեռնարկում (էջ 99) Երեց Ռիչարդ Ջ. Սթոտի խորհուրդը դեղամիջոցներ ընդունող միսիոներների մասին, կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 21 (0:50) շարժանկարը: Ձգայություն դրսևորելով քննարկեք անհրաժեշտությունը,

որ միսիոներները խորհրդակցեն իրենց առողջապահության մասնագետների հետ այն դեղամիջոցների համար, որոնք ընդունում են: Որոշ միսիոներներ սխալմամբ համարում են, որ միսիան կարող է լուծել իրենց բոլոր առողջական խնդիրները, և դադարում են օգտագործել իրենց բարօրության համար անհրաժեշտ դեղամիջոցները, ինչն իմաստուն որոշում չէ: Մյուսները սխալմամբ ենթադրում են, որ դեղամիջոցների օգտագործումը կարող է մեխանիկորեն զրկել իրենց միսիոներական ծառայությունից: Առողջապահության մասնագետների և քահանայության ղեկավարների հետ խորհրդակցելը կարող է օգնել որոշել լիաժամկետ միսիայի համար համապատասխանելիությունը:

Բացատրեք, որ նոր միսիոներների ընդհանուր խնդիրը կարոտի զգացումն է: Ծանոթ միջավայրը և մարդկանց թողնելն անհարմարության զգացում է առաջացնում: Դա բնական զգացում է, սակայն եթե այն շարունակվում է և սկսում ազդել միսիոների աշխատանքի վրա, Տիրոջ արքայությունում արդյունավետ ծառայելու նրա ունակությունը թուլանում է:

Ուսանողներին խնդրեք առաջարկել քայլեր, որոնք կարող են ձեռնարկել ապագա միսիոներները՝ միսիայի գնալիս ընտանիքից բաժանվելուն պատրաստվելու համար: (Կարող եք անդրադառնալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի խոսքերին ուսանողի ձեռնարկում, էջ 97):

Ուսանողներին խնդրեք առաջարկել այլ տարածված խնդիրներ, որոնց կարող են հանդիպել ջանասեր և հնազանդ միսիոներները: Թվարկեք նրանց պատասխանները գրատախտակին: Կարող եք ցանկում ընդգրկել հետևյալ խնդիրները.

Հուսահատություն
Ամաչկոտություն հանրության մեջ
Խոսելու թույլ ունակություններ
Նոր իրավիճակներից վախ
Օտար լեզու սովորելու դժվարություն
Բյուջե կազմելու դժվարություն

- Ինչպե՞ս կարող են ապագա միսիոներներն այսօր արդեն պատրաստվել հաղթահարել այդ խնդիրները:
- Համաձայն Ալմա 17.5-ի՝ ի՞նչ խնդիրների հանդիպեցին Մոսիայի որդիները:
- Ի՞նչ նրանք արեցին իրենց միսիաների ընթացքում ֆիզիկական և մտավոր դժվարությունների միջով անցնելու համար (տես Ալմա 17.2–3):

22 Ուսանողների հետ կարդացեք Նախագահ Հինքլիի պատմությունն այն մասին, ինչպես էր նա պայքարում իր միսիայի սկզբում (տես ուսանողի ձեռնարկ, էջ 97), կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 22 (1:27) շարժանկարը: Ուսանողներին խնդրեք հիշել Նախագահ Հինքլիի Հոր խորհուրդը: Գրեք այն գրատախտակին: («Մոռացիր քեզ և տրվիր աշխատանքին»):

- Ինչպե՞ս է այս կարճ խորհուրդն ազդել նրա միսիայի վրա:
- Ինչպե՞ս կարող է Նախագահ Հինքլիի փորձն օգնել ձեզ պատրաստվել ձեր միսիային:

Ուսանողներին խնդրեք օգտվել էմոցիոնալ լավ առողջության համար նախատեսված միջոցառումների ցանկից (տես ուսանողի ձեռնարկ, էջ 95): Դասարանը բաժանեք փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարեք ցանկից որևէ մեկը (ցանկը բաժանեք խմբերի միջև): Դասարանին բավական ժամանակ տվեք երեք կամ չորս հատկանիշ ընտրելու համար և քննարկեք դրանց նշանակությունը նրանց համար, թե ինչու են դրանք կարևոր և ինչպես կարելի է զարգացնել այդ հատկանիշները:

Յուրաքանչյուր խմբից մի ներկայացուցիչ հրավիրեք մեկ հատկանիշի քննարկման մասին ամփոփ զեկուցելու համար: Եթե ժամանակը թույլ է տալիս, լսեք մնացյալ ամփոփումները նույնպես:

Ուսանողներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 4.2: Նրանց հրավիրեք կիսվել լրացուցիչ մտքերով, թե ինչպես կարելի է պատրաստվել ծառայել *ողջ* սրտով, մտքով և զորությամբ:

Ֆիզիկական կամ էմոցիոնալ վիճակի պատճառով քահանայության ղեկավարների կողմից ազատված ապագա միսիոներների համար կան լիաժամկետ միսիայի այլընտրանքային այլ պատվավոր ծառայություններ:

Բացատրեք ուսանողներին, որ մտավոր և էմոցիոնալ հիվանդությունները պետք է դիտվեն որպես ֆիզիկական հիվանդություններ, որոնք բուժման կարիք ունեն: Մտավոր կամ էմոցիոնալ հիվանդությունը կարող է թույլ չտալ անձին ծառայել լիաժամկետ միսիայում:

Ներկայացրեք հետևյալ մտահայեցողական իրավիճակը.

Գոնզալեսների ընտանիքում միսիոներական լավ ավանդույթ գոյություն ունի: Խուանի բոլոր եղբայրները հաջողությամբ ծառայել են միսիայում: Նա ամենափոքր երեխան է, որ դարձավ 19 տարեկան: Նա մեծացել է «Հույս ունեմ, որ ինձ կկանչեն միսիայի» Եկեղեցու երգի ազդեցության ներքո (*Children's Songbook,* 169): Խուանն անսահման ցանկանում է շարունակել միսիոներական ծառայության ավանդույթը: Սակայն, կան երկու խանգարող հանգամանքներ. (1) Խուանը խորը ճնշվածությամբ է տառապում և դեղամիջոցների կարիք ունի, և (2) նա վախենում է, որ չի կարողանա կատարել իր գործը միսիայում, քանի որ չի կարողանում տիրապետել ճնշվածությանը: Նրա բոլոր եղբայրները կարծում են, որ եթե նա բավարար հավատք ունենա, ամեն ինչ լավ կլինի և նա կկարողանա լիաժամկետ միսիայում ծառայել, ինչպես իրենք:

- Ինչո՞ւ է կարևոր, որ Խուանն ազատ և ազնիվ խորհրդակցի իր քահանայության ղեկավարների և բժիշկների հետ՝ բացի ծառայելու իր ցանկությունից առկա էմոցիոնալ իր սահմանափակումների վերաբերյալ:

Ուսանողներից մեկին խնդրեք դասարանի համար կարդալ Նախագահող Եպիսկոպոսությունից Եպիսկոպոս Ռիչարդ Ս. Էջլիի խոսքերը (ուսանողների ձեռնարկ, էջ 98):

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում որևէ մեկի համար «հարգելի պատճառով ազատված լինել»:
- Ինչո՞ւ է կարևոր, որ քահանայության ղեկավարը որոշի, թե ով է «հարգելի պատճառով ազատված» լիաժամկետ միսիայից:

Ուսանողներին համար կարդացեք Նախագահ Հինքլիի հետևյալ խորհուրդը, ուղղված քահանայության ղեկավարներին լիաժամկետ միսիայում ծառայելու ունակություն չունեցողների վերաբերյալ.

> «Նրանց համար, ովքեր չպետք է, սակայն ցանկանում են ծառայել, [քահանայության ղեկավարները] գտեք այլ ուղիներ, որպեսզի նրանք կարողանան լավ գնահատված ներդրում կատարել» («Missionary Service», 18):

Կարդացեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի և Երեց Ռիչարդ Ջ. Սթոտի խոսքերը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 98–99) և գտեք այլ ուղիներ, որոնցով երիտասարդ տղամարդը կամ կինը, որը հարգելի պատճառով ազատված է լիաժամկետ միսիայից, կարող է ներդրում կատարել Եկեղեցու ծառայության միջոցով:

- Ծառայելու ի՞նչ այլ հնարավոր ճանապարհներ կան նրանց համար, ովքեր հարգելի պատճառով ազատված են լիաժամկետ միսիայից:

Կարող եք կիսվել ծառայության ոլորտի հետևյալ ցանկով, որից կարող են օգտվել արժանի անձինք, ովքեր հարգելի պատճառով ազատված են լիաժամկետ միսիայից: Շեշտեք, որ այս հնարավորությունները որոշվում և տրվում են ցցի նախագահի կողմից:

Եկեղեցու Կրթական Համակարգ
Բարօրություն
Ագարակի կառավարում
Տաճարներ
Այցելուների կոնտրոններ (միայն քույրերի համար)
Միսիոներների պատարստման կենտրոններ
Շենքերի սպասարկում
Հատուկ տեղական ծրագրեր

- Ինչպե՞ս կարող է այսպիսի ծառայությունը օրհնություն լինել երիտասարդ անձի համար, որն ի վիճակի չէ ծառայելու լիաժամկետ միսիայում:
- Ինչպե՞ս կարող է այսպիսի ծառայությունը օրհնել Եկեղեցին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Ծրագրեք մեկ շաբաթվա կերակրացանկ, ապա գնեք մթերքներ, պատրաստեք և մի քանի առողջ ճաշատեսակներ հյուրասիրեք ընտանիքի անդամներին կամ նրանց, ում հետ կիսում եք բնակարանը:
- Ընտանեկան երեկոյի ժամանակ դաս մատուցեք անձնական հիգիենայի կամ ամենօրյա ֆիզիկական մարզման մասին:
- Մեկ շաբաթվա ընթացքում օրական առնվազն մեկ ժամ մարզվեք (բացի կիրակի օրերից): Օրինակ՝ ամեն օր դուք կարող եք արագ քայլել մեկ ժամ (նախընտրելի է բարձրանալ և իջնել), կամ կարող եք մեքենա վարելու փոխարեն հեծանվով գնալ այն վայրերը, ուր հնարավոր է:

ԺԱՄԱՆԱԿԻ ԻՄԱՍՏՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՈՏ ԲԵՐԵԼԻՍ

Երբ միսիոները սկսում է իր լիաժամկետ ծառայությունը, նա Տիրոջ ժամանակի մեջ է մտնում: Եկեղեցու անդամների հետ աշխատելը, նախ լավ է հետաքրքրվողներ ձեռք բերելու համար, ինչպես նաև ունակությունները զարգացնելու, վերականգնված ավետարանի ուղերձով ուրիշներին մոտենալու, վերջապես վստահություն կառուցելու և հաջողություն ձեռք բերելու համար է: Միսիայի ծառայության ընթացքում միսիոներները Տիրոջ ծառայության մեջ են և կատարում են Նրա կամքը: Մանրակրկիտ ծրագրավորումը և նպատակներ դնելը կարող է օգնել միսիոներին իմաստալից օգտագործել Տիրոջ ժամանակը՝ մարդկանց ավետարանի առաջին սկզբունքի միջոցով դեպի Քրիստոսը բերելու համար: Իմանալով, թե ինչպես կարող ենք կազմակերպել մեր ջանքերն առավելագույն արժեք ստանալու համար, մենք կարող ենք ավելի մեծ ուրախություն գտնել միսիոներական աշխատանքի մեջ:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Մարդկանց գտնելն ու ուսուցանելը և՛ միսիոներների, և՛ Եկեղեցու անդամների պարտականությունն է:
- Արդյունավետ ծրագրավորումը, նպատակներ դնելը և ժամանակի կառավարումը օգնում են կենտրոնանալ միսիոներական ջանքերի վրա և ավելացնում են գործի հաջողությունը:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Մարդկանց գտնելն ու ուսուցանելը և՛ միսիոներների, և՛ Եկեղեցու անդամների պարտականությունն է:

Դասարանին խնդրեք առաջարկել այնքան ուղիներ, որքան կարող են, որոնցով միսիոներները և եկեղեցու աղնամները կարող են գտնել մարդկանց՝ ուսուցանելու համար

նրանց վերականգնված ավետարանի ուղերձը: Ուսանողներից մեկին խնդրեք առաջարկությունները գրել գրատախտակին:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 29.7 և 42.8: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ո՞ւմ է Տերը կոչ արել մեզ հավաքել:
- Ի՞նչ է նշանակում «գտեք նրանց, ովքեր կընդունեն ձեզ» (ՎԱՈՒ 42.8):

Ուսանողներին հիշեցրեք, որ մենք բոլորս Աստծո ընտանիքի անդամներն ենք և պատասխանատվություն ենք կրում ավետարանի համար (տես ՎԱՈՒ 88.81): Նրանք պետք է աղոթեն հոգևոր զգայունության համար, որպեսզի հասկանան ուրիշների հետ ավետարանի մասին խոսելու հնարավորությունները:

Ուսանողներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 123.12 և Երեց Դալլին Հ. Օուքսի և Ռիչարդ Ջ. Սթոտի խոսքերն ուսանողի ձեռնարկում (էջ 103):

- Ինչպե՞ս է այս սուրբ գրությունը պատճառաբանում այն, թե ինչու շատ մարդիկ դեռ չեն ընդունել ավետարանը:
- Համաձայն Երեց Օուքսի, ո՞րն է հետաքրքրվողներ փնտրելու բանալին:
- Ինչպե՞ս կարող են անդամները և միսիոներները միասին աշխատել մարդկանց գտնելու և դարձի բերելու ընթացքում:

Կարող եք նաև խնդրել ուսանողներին կարդալ և քննարկել լրացուցիչ մտքեր և հայտարարություններ ուսանողի ձեռնարկում (էջ 102–104):

Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունը. «Ուսուցանեք, երբ գտնեք, գտեք, երբ ուսուցանեք»: Մի ուսանողի հարցրեք, թե ի՞նչ կարող է այդ արտահայտությունը նշանակել միսիոների համար: Ուսանողներին խնդրեք առաջարկել ավետարանի մի քանի թեմաներ կամ սկզբունքներ, որոնք, իրենց կարծիքով, հետաքրքիր կլինեն հետաքրքրվողներին: Մի ուսանողի խնդրեք մտքերը գրել գրատախտակին: Այնուհետև ուսանողներին հարցրեք, թե այդ վարդապետություններից կամ սկզբունքներից որոնք կարող են արագ ներկայացվել անտեղյակ մարդուն: Ընտրված սկզբունքների դիմաց նշան արեք:

Ձեր ուսանողներին օգնեք հասկանալ, որ երբ նրանք միսիայի ծառայության ընթացքում հանդիպում են մարդկանց, նրանք պետք է պատրաստ լինեն ուսուցանելու վերականգնված ճշմարտությունը համառոտ և ամփոփ ձևով, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա վկայել, որ իրենք Աստծո ծառաներն են (տես «Քարոզիր իմ ավետարանը» [2004], 158): Դա թույլ կտա մարդկանց զգալ Սուրբ Հոգու զորությունը: Բացատրեք, որ միսիոներները արագ կսովորեն օգտագործել ցանկացած թեմա, որը քննարկում են, և արագ ու պարզ ձևով կկարողանան այն կապել ավետարանի Վերականգնման հետ: Սա կարևոր է, որովհետև Վերականգնումն աշխարհին ուղղված մեր յուրահատուկ ուղերձն է:

Ուսանողներին կարդացեք հետևյալ օրինակն այն մասին, թե ինչպես կարող է ընտանիքի կարևորության մասին խոսելը կապվել միսիոներների կողմից Վերականգնման ուղերձի հետ.

«Մեր ընտանիքների հանդեպ մեր տածած սիրո և հոգատարության զգացմունքները հավերժական են.... Դրանք կենտրոնացած են Աստծո մասին մեր գիտելիքի վրա: Դուք եղել եք Աստծո ընտանիքի մասը դեռ ծնվելուց առաջ: Նա մեր Երկնային Հայրն է: Քանի որ Նա մեր Հայրն է, մենք եղբայրներ և քույրեր ենք: Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք վերադառնանք և ապրենք Նրա հետ, լինելով Նրա ընտանիքի մասը: Այստեղ երկրի վրա ընտանիքները կապված են Աստծո ընտանիքի հետ: Ընտանիքները կարող են միշտ միասին ապրել այս կյանքից հետո: Մենք գիտենք սա, որովհետև դարեր շարունակ կորած լինելու պատճառով, ճշմարիտ վարդապետությունները և արարողությունները.... վերականգնվել են երկրի վրա մեր սիրելի Երկնային Հոր կողմից կենդանի մարգարեի միջոցով: Այս վերականգնված

ճշմարտությունները ոչ միայն օգնում են մեզ հասկանալ մեր տեղն Աստծո ընտանիքում, այլ նաև այս կյանքում ամուր և երջանիկ ընտանիք ունենալու մեծագույն հույս են հանդիսանում: Թույլ տվեք ձեզ ավելին ուսուցանել....» («Քարոզիր իմ ավետարանը», 160):

Ուսանողներին խնդրեք առաջարկել Եկեղեցու այլ թեմաներ, որոնց մասին մարդիկ հետաքրքրված կլինեն խոսելու միսիոներների հետ (օրինակ Իմաստության Խոսքի, Մորմոնական Թաբերնաքլ երգչախումբի կամ հավերժական ամուսնության), և գրեք նրանց առաջարկությունները գրատախտակին: Ապա դասարանին խնդրեք առաջարկել ուղի, որով կարելի է կապել այդ թեմաներից մեկը Վերականգնման ուղերձի հետ: Քննարկեք այս միտքը դասարանի հետ, մինչև որ ուսանողները հստակ հասկանան, թե ինչպես կարող են դա անել:

Ուսանողներին խնդրեք բաժանվել զույգերի, որպեսզի իրենց զուգընկերոջ հետ քննարկեն, թե ինչպես կարող են օգտագործել գրատախտակին գրված թեմաներից որևէ մեկը, կարճ այցի ժամանակ՝ Վերականգնման ուղերձը ներկայացնելու համար: Յուրաքանչյուր զույգին խնդրեք պատկերացնել, թե ինչպիսին կարող է լինել միջավայրը և ինչպես նրանք կարող են ներկայացնել Վերականգնման ուղերձը երկու-բոպեանոց զրույցի ժամանակ: Ապա խնդրեք նրանց միանալ մեկ այլ զույգի և հերթով դերերով խաղալ ոչ անդամի հետ հանդիպումը և ուղերձի համառոտ ներկայացումը: Ուսուցանող զույգը կորոշի, դերախաղի մեջ ընդգրկի մեկ անձի, թե խմբի երկու անդամների:

Երբ զույգերից մեկը ցուցադրի իր մոտեցումը, մյուս զույգին խնդրեք քննարկել այն, ինչ իրենց դուրն եկավ և ինչը կարելի է փոխել: Ապա փոխեք դերերը և կրկնեք, թույլ տալով երկրորդ զույգին ուսուցանել և կարծիք հավաքել:

Դասարանի անդամներով քննարկեք նրանց ունեցած փորձառությունները, տալով հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ո՞ր վարդապետությունները կարող են հեշտությամբ առաջնորդել դեպի Վերականգնման ուղերձը:
- Ինչպիսի՞ դժվարություններ կան օտար մարդու հետ ավետարանի ուղերձով կիսվելու նեջ: (Ուսանողների պատասխանները կարող են ներառել ամաչկոտությունը, մերժում ստանալու վախը և քննարկման թեման չիմանալը հաղթահարելը):
- Ինչպե՞ս կարելի է հաղթահարել այդ դժվարությունները:

Քննարկեք, թե ինչու է կարևոր չօգտվել նույն մոտեցումից յուրաքանչյուր մարդու համար: Օգնեք ձեր ուսանողներին հասկանալ, որ Աստված գիտի Իր բոլոր զավակների սրտերը և հանգամանքները: Նա գիտի, թե ով է պատրաստ լսելու ավետարանը, իսկ ով՝ ոչ: Արդյունավետ միսիոներները փնտրում են Սուրբ Հոգու առաջնորդությունը, որպեսզի գտնեն նրանց, ովքեր պատրաստ են լսելու և սովորելու ավետարանի մասին:

Եթե ձեր լեզվով թղթե քարտեր կան, ցույց տվեք մի քանի տեսակ ձեր ուսանողներին: (Դրանք կարելի է ձեռք բերել տեղական միսիոներներից կամ տեղական քահանայության ղեկավարներից): Բացատրեք, որ այդ քարտերը Վերկանգնման մասին զրույց սկսելու ճանապարհներից մեկն է:

Մի քանի կամավորի խնդրեք գալ և կանգնել դասարանի առաջ, ընտրեք մի քարտ և մեկ այլ ուսանողի հետ միասին ցույց տվեք, թե ինչ իրավիճակում նրանք կարող են տալ քարտը նրան, ում հանդիպել են: Երբ երկու կամ երեք ուսանող ցուցադրեն, դասարանին թույլ տվեք դիտողություններ անել և առաջարկել այն իրավիճակներ, երբ կարող են քարտը տալ մարդկանց: (Կարող եք նաև կրկնել նմանատիպ վարժություն, օգտագործելով Եկեղեցու գրքույկները, Մորմոնի Գիրքը, տեսանյութեր և այլն): Իմաստը նրանում է, որ ուսանողներին հնարավորություն տրվի խոսելու մարդկանց առաջ և հաղթահարելու բնական հուզումը՝ ուրիշների հետ ավետարանի մասին խոսելիս:

Կարդացեք Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստի հետևյալ խոսքերը.

> «Սովորեք սիրել և ծառայել մարդկանց, ում հետ աշխատում եք: Դուք պետք է ամեն օր աղոթեք նրանց համար, որպեսզի Տերը լցնի ձեզ սիրով, նրանց ծառայելու համար: Եթե դուք չեք սիրում նրանց, ապա դժվարություններ կունենաք նրանց ուսուցանելիս» (in Conference Report, ապրիլ 1996, 58; կամ *Ensign*, May 1996, 41):

- Ինչո՞ւ է միսիոներների համար կարևոր սիրել իրենց ծառայության տարածքի մարդկանց, մշակույթը և լեզուն:

Ուսանողներին խնդրեք բաժանվել զույգերի: Մեկին խնդրեք խաղալ միսիոների դերը, իսկ մյուսին՝ լիովին օտար մարդու, որը հենց նոր համաձայնվել է, որ միսիոներն ուսուցանի իրեն իր տանը: Նրանց տվեք 30 վայրկյան՝ ողջույնի և միսիոներական ուղերձը հայտնելու համար: (Մի տվեք նախապատրաստվելու ժամանակ: Ակնկալվում է, որ այս հանձնարարությունը դժվար կլինի):

Ուսանողներին խնդրեք փոխվել դերերով և կրկնել վարժությունը:

Հաջորդը, խնդրեք զույգերին միանալ, կազմելով չորս հոգանոց խմբեր: Երկու ուսանողի խնդրեք ներկայացնել միսիոներների, երրորդին՝ Եկեղեցու անդամի, իսկ չորրորդին՝ Եկեղեցու անդամի ոչ անդամ ընկերոջ: Եկեղեցու անդամի ներկայացնող ուսանողին խնդրեք ներկայացնել հետաքրքրվողին միսիոներներին և ճանապարհ բացել վերականգնված ավետարանի դասի համար:

Այս կարճ վարժությունից հետո, խնդրեք ուսանողներին համեմատել փորձառությունները, քննարկելով յուրաքանչյուր մոտեցման ուժեղ և թույլ կողմերը:

Ուսանողներին հրավիրեք կարդալ Նախագահ Հինքլիի խոսքերն ուսանողի ձեռնարկում՝ ուսուցանման համար մարդկանց գտնելու ուղղությամբ անդամների հետ աշխատելու մասին (էջ 103): Կարող եք նաև անդրադառնալ Դալլին Հ. Օուքսին մեջբերող պարբերության մեջ բերված վիճակագրությանը (տես ուսանողի ձեռնարկ, էջ 104):

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ են անդամները ուսուցանելու համար մարդիկ գտնելու գործում կարևոր աղբյուր համարվում:
- Ինչպե՞ս է վերաբերում Վարդապետություն և Ուխտեր 33.8–9-ը լիաժամկետ միսիոներներին, Եկեղեցու անդամներին:
- Ի՞նչ ճանապարհներով կարող են լիաժամկետ միսիոներներն օգնել Եկեղեցու անդամներին ուրիշների հետ կիսվել վերականգնված ավետարանով:

Հարցրեք, ինչ է նշանակում *ընկերակցել* բառը: Հրավիրեք ուսանողներին կարդալ Նախագահ Հինքլիի և Երեց Ռիչարդ Ջ. Սթոտի խոսքերն ուսանողի ձեռնարկում (էջ 104): Քննարկեք դրանք և հարցրեք, թե ինչու են անդամներն այդքան կարևոր ուսուցանելու և ընկերակցելու ընթացքում: Հետևյալ հարցը կարող է օգտակար լինել.

- Ի՞նչ ճանապարհներով միսիոները կարող է խրախուսել անդամների և հետաքրքրվողների միջև ընկերակցումը:

Դասարանի անդամներին, ովքեր ընկերակցել են հետաքրքրվողներին, խնդրեք համառոտ պատմել իրենց փորձի մասին: Եթե դասարանում նորադարձներ կան, խնդրեք նրանց կիսվել ընկերակցելու վերաբերյալ իրենց կարծիքով:

- Ուրիշ ի՞նչ ճանապարհներով մենք կարող ենք ընկերակցել մեր ընկերներին և ծանոթներին:
- Ինչո՞ւ է կարևոր շարունակել ընկերակցել նորադարձներին նրանց մկրտությունից հետո:

Արդյունավետ ծրագրավորումը, նպատակներ դնելը և ժամանակի կառավարումը օգնում են կենտրոնանալ միսիոներական ջանքերի վրա և ավելացնում են գործի հաջողությունը:

Ուսանողներին խնդրեք արագ առաջարկել հետևյալ մասնագիտություններում հաջողություն ունենալու մի քանի գործոն.

Բժիշկ
Խանութի վաճառող
Ուսուցիչ
ՎՕՍ միսիոներ

Ուսանողներին խնդրեք համեմատել ՎՕՍ միսիոների համար իրենց տված պատասխաններն ուսանողի ձեռնարկում տված հիմնական գործոնների հետ (տես էջ 105):

- Ի՞նչը կարող է խանգարել յուրաքանչյուր գործոնի համար իրատեսական նպատակ դնելու գործում: (Հնարավոր պատասխաններ. Տարածքում ապրող Եկեղեցու անդամների թիվը կամ ընդհանրապես բնակիչների վերաբերմունքը Եկեղեցու հանդեպ):
- Ինչպե՞ս դուք կարող եք որոշել, թե երբ է պատշաճ փոփոխություններ կատարել միսիոներական նպատակներում:
- Կա՞ն արդյոք որևէ վտանգներ նպատակներ սահմանելու հարցում: Ինչպիսի՞ք և ինչո՞ւ:
- Ինչպե՞ս կարող է աղոթքն ազդել նպատակ դնելու վրա:

Հարցրեք, թե արդյոք դասարանում ձկնորսներ կամ որսորդներ կա՞ն: Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Երեմիա 16.16, իսկ մյուսին՝ Մատթեոս 4.19:

- Ինչպե՞ս կարելի է միսիոներական աշխատանքը համեմատել որսորդության և ձկնորսության հետ:
- Ի՞նչ պետք է հաշվի առնել որսորդական կամ ձկնորսական հաջող արշավ կազմակերպելու համար:
- Ի՞նչ պետք է հաշվի առնել միսիայի ծառայության ընթացքում հաջող օր կազմակերպելու համար:

Գրատախտակին նկարեք հետևյալ պատկերը.

- Ինչո՞ւ են աղոթքը և ծրագրավորումը կարևոր միսիոներական ծառայության համար: (Խրախուսեք մեկից ավելի ուսանողների պատասխանել):

Գրատախտակին գրեք. «Ուսուցանման համար մարդիկ գտնելու տիպային օր»: Ուսանողներին խնդրեք առաջարկել հնարավոր միսիոնեարական միջոցառումներ, որոնք կարող են օգնել նրանց հետաքրքրվողներ գտնել: Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին: (Հնարավոր պատասխաններ. հանդիպել անդամների հետ և խրախուսել նրանց սիրել և ծառայել իրենց հարևաններին և ընկերներին, սահմանել օր, երբ կարող են հրավիրել ընկերներին՝ սովորելու Վերականգնման մասին, անուններ տալ, ծառայել մարդկանց, ում չեն ճանաչում, խոսել հնարավորինս շատ մարդկանց հետ, առաջարկել թղթե քարտեր, այցելել ընտանիքի պատմության կենտրոն և ծանոթանալ այնտեղ եղած նյութերին):

Գրատախտակին գրեք *առաջնահերթություններ* բառը և դասարանի հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է այս խոսքը նշանակում:
- Ինչո՞ւ են առաջնահերթությունները կարևոր միսիոներական աշխատանքի մեջ:
- Ինչպե՞ս է Դալլին Հ. Օուքսի հետևյալ հայտարարությունը վերաբերում լիաժամկետ միսիոներին. «Ժամանակի ընթացքում մենք ընտրության միայն մեկ հնարավորություն ունենք, այնուհետև այն ընդմիշտ կորած է» (in Conference Report, մարտ–ապրիլ 2001, 110; կամ *Ensign,* May 2001, 84; տես նաև ուսանողի ձեռնարկ, էջ 103):

Ուսանողներին խնդրեք առաջարկել հնարավոր ժամանակացույց (ինչը տեղի կունենա առաջինը, ինչ միջոցառումներ կհաջորդեն և ինչ հերթականությամբ) գրատախտակին գրված գործերի համար «Ուսուցանման համար մարդիկ գտնելու տիպային օր» վերնագրի տակ:

Դասարանին խնդրեք առաջարկել այնպիսի միջոցառումներ, որոնք առավել արդյունավետ կլինեն օրվա տարբեր ժամերին:

Ուսանողները նաև օգտակար կհամարեն այդ գործերն ըստ առաջնահերթության համարակալելը, առավել կարևորին տալով մեկ թիվը, և այդպես շարունակ: Շարունակեք համարակալել, մինչև բոլոր գործերն ընդգրկվեն: Ուսանողներին թույլ տվեք մեկնաբանել, թե ինչու են որոշ գործեր դասվել ավելի կարևոր, քան մյուսները:

- Ի՞նչ հանգամանքներ կարող են պահանջել այս առաջնահերթությունների փոփոխություն:
- Ինչո՞ւ է ամեն օրը ծրագրավորելը և առաջնահերթություններ դնելը օգտակար միսիոներների համար:
- Փորձ ձեռք բերելու հետ մեկտեղ, որքա՞ն արագ, ձեր կարծիքով, զույգը կարող է կազմել իր աշխատանքային օրվա ծրագիրը:
- Ինչպե՞ս է իմաստուն միսիոներական ծրագրավորումը կապված Դալլին Հ. Օուքսի համեմատության հետ՝ «ձկնորսության» վրա միսիոների իրական ժամանակը ծախսելու մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 103):

Կիսվեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոսքերով.

> «Երբ մենք գործում ենք ընհանրությունների մեջ, մենք երբեք հաջողության չենք հասնի, սակայն երբ մենք գործ ունենք որոշակիության հետ, մենք դժվար թե տապալենք մեր գործը» (in Conference Report, հոկ. 1984, 55; կամ *Ensign,* Nov. 1984, 43):

- Ինչպե՞ս մենք կարող ենք այս ուսմունքը կիրառել միսիոներական նպատակներ դնելու գործում:
- Ի՞նչ կապ կարող է ունենալ Նախագահ Մոնսոնի հայտարարությունը գործունեության զեկուցման մասին միսիոներների կողմից նպատակներ դնելու հետ (տես ուսանողի ձեռնարկ, էջ 106):
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհրաժեշտ, որ միսիոներներն ամեն շաբաթ զեկուցեն իրենց աշխատանքի մասին միսիայի նախագահին:

Ուսանողների հետ կիսվեք իրենց ժամանակն իմաստուն օգտագործելու իմաստալից նպատակներ դնելու գործընթացն այժմ սկսելու կարևորության մասին: Ուսանողներին հարցրեք, թե ինչ հատուկ նպատակներ իրենք կարող են սահմանել, որոնք կօգնեն պատրաստվել միսիայի (օրինակ՝ կարդալ Մորմոնի Գիրքը, սկսել օրագիր վարել, վաղ քնել և վաղ արթնանալ):

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Եթե դեռ չեք սկսել, սկսեք օգտագործել ծրագրավորման օրագիր՝ ձեր օրվա գործերը կազմակերպելու և կարևորություններ սահմանելու համար:
- Սահմանեք իրատեսական նպատակներ և առաջնահերթություններ սահմանեք, ինչը կօգնի ձեզ պատրաստվել և առաջադիմել ձեր միսիայում:
- Գրեք չորս համառոտ մոտեցում վերականգնված ավետարանի ուղերձով կիսվելու համար մեկի հետ, ով Եկեղեցու անդամ չէ: Վարժվեք, յուրաքանչյուր մոտեցումը բանավոր կիրառելիս, սկզբում գրառումների օգնությամբ, ապա առանց դրանց:
- Հաջորդ շաբաթ որևէ մեկին, ով Եկեղեցու անդամ չէ, տվեք փոխանցիկ թղթե քարտ:

Գլուխ 13

ՀԵՏԱՔՐՔՐՎՈՂՆԵՐԻՆ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մարդիկ դարձի են գալիս, երբ սկսում են ապրել վերականգնված ավետարանի սկզբունքներով և զգալով Սուրբ Հոգին, որը հաստատում է, որ այն, ինչ իրենք անում են, ներդաշնակ է Աստծո կամքի հետ: Հավատքը, ապաշխարությունը և ուխտեր կապելը ջանք է պահանջում: Երբ հետաքրքրվողները հրավիրվում են պարտավորվելու ապրել ըստ սկզբունքի, կարևոր ուղի է բացվում միսիոներների համար նրանց պատրաստելու՝ սուրբ ուխտերը կապելու և դրանք պահելու: Հետաքրքրվողները, ովքեր պատրաստվում են մկրտության և հաստատման արարողություններին Տիրոջ Եկեղեցում, պարտավոր են ապրել արժանավորության որոշակի չափանիշներով, որոնք միսիոներները պետք է օգնեն հասկանալ:

Միսիոներները պետք է նաև հասկանան, որ մկրտությունը և հաստատումը վերջնանպատակ չէ: Միսիոների արտոնությունն ու պատասխանատվությունն է հետաքրքրվողին ուսուցանելը, որ կան լրացուցիչ ուխտեր և արարողություններ, որոնք նրանք կարող են ստանալ Տիրոջ տանը: Միսիոներները օգնում են տեղական ծխի և ճյուղի քահանայության ղեկավարներին, ում առաջնային պարտականությունն է օգնել պատրաստել նոր անդամներին տաճարի համար:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Երբ հետաքրքրվողները գալիս են դեպի Քրիստոսը և նախապատրաստվում են դառնալու Եկեղեցու անդամ, նրանք պետք է հասկանան փրկության արարողությունների հետ կապված ուխտերը և պատրաստակամ լինեն կապել և պահել այդ սրբազան պարտավորությունները:
- Միսիոներներն օգնում են նորադարձներին նախապատրաստվել մկրտությանը, հաստատմանը և Տիրոջ Եկեղեցու անդամակցությանը:
- Վեհացման համար անհրաժեշտ ուխտերն ու արարողությունները ստանում են Տիրոջ տաճարում:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երբ հետաքրքրվողները գալիս են դեպի Քրիստոսը և նախապատրաստվում են դառնալու Եկեղեցու անդամ, նրանք պետք է հասկանան փրկության արարողությունների հետ կապված ուխտերը և պատրաստակամ լինեն կապել և պահել այդ սրբազան պարտավորությունները:

Ուսանողներին հարցրեք, թե ինչ է նշանակում *ուխտ* բառը Եկեղեցու անդամի համար: Պատասխաններից հետո ուսանողներին խնդրեք մտքում կարդալ «Ուխտ» բառահոդվածը Սուրբ գրությունների ուղեցույցում, էջ 213 (տես նաև *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* [2004], 44): Ուսանողներին խնդրեք մեկնաբանել այդ հատվածներից ստացված լրացուցիչ ներըմբռնումները:

- Ինչո՞ւ նորադարձները պետք է ուխտեր կապեն՝ Տիրոջ Եկեղեցու անդամները դառնալու համար:
- Ի՞նչ կարևոր հարցեր պետք է միսիոներները օգնեն հետաքրքրվողներին հասկանալ ուխտեր կապելու մասին:
- Ինչպե՞ս է Վարդապետություն և Ուխտեր 130.21-ը կապված ուխտեր պահելու հետ:

Ուսանողներին խնդրեք անդրադառնալ Երեց Մ. Ռասսել Բալլարդի (տես ուսանողի ձեռնարկ, էջ 111) խոսքերին և գտնել այն կարևոր բառերը, որոնք տանում են ուխտեր կապելու (իմանալ, հասկանալ, զգալ և ապրել): Գրեք դրանք գրատախտակին:

- Ի՞նչն է օգնում հետաքրքրվողին *զգալ* վարդապետության կամ սկզբունքի ճշմարտությունը:
- Ինչպե՞ս կարող է միսիոներն իմանալ, թե արդյոք հետաքրքրվողը *գիտի* և *զգում է* վերականգնված ավետարանի ճշմարտությունը:
- Ինչո՞ւ է դարձի գալու հոգևոր ընթացքը տանում դեպի ուխտեր և արարողություններ:
- Ի՞նչ լրացուցիչ ուխտեր և արարողություններ կարող է ակնկալել նոր մկրտված անդամը:

Միսիոներներն օգնում են նորադարձներին նախապատրաստվել մկրտությանը, հաստատմանը և Տիրոջ Եկեղեցու անդամակցությանը:

Ուսանողներին խնդրեք վերանայել Վարդապետություն և Ուխտեր 20.37, 68 և Մորոնի 6.2–3 հատվածները և գտնել այն, ինչ անձը պետք է անի՝ պատրաստվելու համար մկրտությանը, հաստատմանը և Սուրբ Հոգու պարգևին: Գրեք նրանց պատասխանները գրատախտակին: Քննարկեք ցանկը, նշելով, թե ինչու է յուրաքանչյուր կետ ուժի մեջ մնում մկրտությունից հետո:

Միսիոներները պատասխանատու են պատրաստելու համար իսկապես դարձի եկած հետաքրքրվողներին ջրով և Սուրբ Հոգով մկրտությանը: Սա ներառում է հետաքրքրվողներին ուխտերն ուսուցանելը, որոնք նրանք իսկապես կկապեն մկրտության ժամանակ: Մկրտության հարցազրույցի ժամանակ, ապագա անդամներին կխնդրեն նաև պարտավորվել ապրել այդ ուխտերով: Այդ ուխտերը կապելու և պահելու պատրաստակամությունը ցույց է տալիս անձի դարձի գալու աստիճանը: Կիսվեք և քննարկեք ուսանողների հետ հետևյալ պարտավորությունները: Դասարանին հնարավորություն տվեք քննարկել յուրաքանչյուր պարտավորություն, որն անդամն իր վրա է վերցնում մկրտության ժամանակ: Նրանց հրավիրեք խոսել այն մասին, թե ինչու է կարևոր հասկանալ և ստանձնել այդ պարտավորություններից յուրաքանչյուրը մկրտվելուց առաջ: Կարող եք գրել դրանք գրատախտակին:

Հետաքրքրվողները, որոնք իսկապես դարձի են եկել և պատրաստ են մկրտությանը և Սուրբ Հոգու պարգևին, պետք է.

- Զարգացնեն վկայություն Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ:
- Հավատան, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից, և որ այսօր Եկեղեցին ղեկավարվում է կենդանի մարգարեի կողմից:
- Իսկապես ապաշխարեն իրենց մեղքերից (տես Մորոնի 6.2–3, ՎԱՈՒ 20.37):
- Ապրեն մաքրաբարոյության օրենքով, որն արգելում է կնոջ և տղամարդու միջև ցանկացած սեռական հարաբերություններ օրինական ամուսնության սահմաններից դուրս:
- Ապրեն տասանորդի օրենքով, որն անձի եկամտի մեկ-տասներորորդի կանոնավոր ներդրում է:
- Ապրեն Իմաստության Խոսքով:
- Հանգստության օրը սուրբ պահեն և ամեն շաբաթ ընդունեն հաղորդությունը:
- Պատրաստ լինեն իրենց վրա վերցնելու Քրիստոսի անունը և պահելու Նրա պատվիրանները ողջ կյանքի ընթացքում:
- Պատրաստ լինեն ստանալու տաճարում տրվող արարողությունները:

Կիսվեք Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի հետևյալ խոսքերով, ինչպես վկայակոչել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին: Ուսանողներին խնդրեք գտնել այն ամենը, ինչ պահանջվում է նորադարձներից, և մտածել, թե ինչ կարող են անել միսիոներները՝ օգնելու համար հետաքրքրվողներին բավարարել այդ պահանջները:

> «Խոսելով Եկեղեցի գալու արժանավորության մասին՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը գրել է. «Մկրտությանն արժանի լինելու համար մարդիկ պետք է ուսուցանվեն: Իսկ ի՞նչ պետք է նրանք ուսուցանվեն: Այո, հավատք առ Աստված, Հիսուս Քրիստոս և Սուրբ Հոգի, հավատք առ աղոթքի զորությունը և Հիսուսի սովորեցրած ավետարանի արարողությունները և սկզբունքները, հավատք առ այդ ավետարանի և դրա բոլոր զորությունների վերականգնումը, հավատք առ Մարգարե Ջոզեֆ Սմիթ, հավատք առ Եկեղեցի, որի հիմնադրման համար նա գործիք հանդիսացավ, հավատք առ քահանայություն՝ որպես կենդանի Աստծո լիազորված ծառաների, հավատք առ հայտնություններ, որ ստացվում են մեր ժամանակներում, հավատք առ այն աշխատանքը, որը պահանջվում է Վերջին Օրերի Սրբերից, հավատք առ տասանորդի սկզբունքը և բոլոր մյուս պահանջները, ժամանակավոր և հոգևոր, որ նշված են Աստծո օրենքի մեջ, և, վերջապես, հավատք առ Տիրոջ առաջ արդար կյանքն ապրելուն» (’Baptism,’ *Improvement Era,* Jan. 1911, 267–68)» (“Find the Lambs, Feed the Sheep,” *Ensign*, May 1999, 106):

- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներն օգնի հետաքրքրվողին Եկեղեցուն միանալուց առաջ հասկանալ իր բոլոր պարտավորությունները:
- Ինչպե՞ս կարող է մկրտության պահանջներն իմանալը փոխել մկրտությանը պատրաստ մարդկանց թիվը:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ են մկրտության համար բարձր չափանիշներ պահանջվում:

Ուշադրություն. Ուսուցանման հետևյալ միտքը բավականին մեծ ժամանակ է պահանջում: Նախապատրաստելու և ուսուցանելու փորձը, ինչևէ, արժեքավոր կլինի ապագա միսիոներների համար: Դուք հավանաբար կարիք կունենաք կրճատելու ուսուցանման այս կամ մյուս մտքերը: Կամ կարող եք շարունակել այս վարժությունը հաջորդ դասին:

Ուսանողներին խնդրեք անդրադառնալ այս սկզբունքի համար ուսանողի ձեռնարկին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 112–115): Գրեք հետևյալ պատվիրանները գրատախտակին.

1. Կիրակին սուրբ պահեք
2. Հետևեք մարգարեներին
3. Ապրեք մաքրաբարոյության օրենքով
4. Հնազանդվեք Իմաստության Խոսքին
5. Ապրեք տասանորդի օրենքով

Ուսանողներին տեղեկացրեք, որ իրենց ժամանակ կտրվի կազմելու դասի համառոտ ծրագիր՝ գրատախտակին նշված պատվիրաններից մեկի համար: Շրջեք դասարանով, մատնանշեք ուսանողին և հանձնարարեք թեմայի համարը (1-5): Կրկնեք թվային հերթականությունը մինչև որ բոլոր ուսանողները հանձնարարված թեմա ունենան: Բավարար ժամանակ տրամադրեք յուրաքանչյուր ուսանողի՝ դասի ծրագիր պատրաստելու համար՝ հետաքրքրվողին հանձնարարված թեմայով հինգ րոպեանոց դաս ուսուցանելու համար: Շեշտեք, որ նրանց դասի ծրագիրը պետք է ներառի սուրբ գրություններ, հարցեր, վկայություն և պատվիրաններին հնազանդվելու պարտավորություն: Նրանք կարող են օգտվել ուսանողի ձեռնարկում տրված տեղեկությունից (կամ Սուրբ գրությունների ուղեցույցից), և *Հավատքին հավատարիմ* գրքույկից, կամ օգտագործել իրենց սեփական փորձը:

Երբ ուսանողները պատրաստ լինեն, նրանց խնդրեք բաժանվել զույգերի և միմյանց ուսուցանել իրենց տրված պատվիրանի թեմայով հինգ րոպեանոց դաս: Հետևեք, որպեսզի ուսանողները գնահատեն միմյանց ուսուցանումը, նշելով միմյանց ուժեղ կողմերը և առաջարկելով դասերի բարելավման ուղիներ:

Նույն թեման ուսուցանող երկու ուսանողների խնդրեք գալ դասարանի առաջ և դերերով ներկայացնել միսիոներների, ուսուցանելով իրենց թեման երեք-չորս այլ ուսանողների, ովքեր ներկայացնում են հետաքրքրվողի ընտանիքը: Քննարկեք և գնահատեք իրենց ուսուցանումը, եթե ժամանակը թույլ է տալիս: Կրկնեք այս գործողությունը, օգտագործելով մնացած բոլոր թեմաները:

Վեհացման համար անհրաժեշտ ուխտերն ու արարողությունները ստանում են Տիրոջ տաճարում:

Ուսանողներին բացատրեք, որ միսիոներները ոչ միայն օգնում են նորադարձներին կապել և պահել մկրտության և հաստատման ուխտերը, այլ նաև կարևոր դեր են կատարում, ծանոթացնելով նորադարձներին այն մտքին, որ իրենք կարող են սկսել պատրաստվել այն ժամանակին, երբ կարող են ստանալ տաճարի օրհնությունները: Ուսուցանման հետևյալ առաջարկությունը տրվում է որպես օգնություն ապագա միսիոներներին՝ օգնելու համար նորադարձներին հասկանալ տաճարի ապագա օրհնություններին պատրաստվելու կարևորությունը:

Ցուցադրեք մեկ կամ ավելի տաճարի նկարներ: Տաճարի տարածք այցելած կամ տաճարում արարողություններ կատարած ուսանողներին խնդրեք նկարագրել այն զգացմունքները, որ ունեցել են տաճարում:

- Ինչո՞ւ են հաճախ նման զգացումներ առաջանում տաճար այցելելիս:
- Ի՞նչ օրհնություններ պետք է նոր մկրտված անդամներն ակնկալեն տաճարում:

Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 124.55:

- Համաձայն այս հատվածի, որո՞նք են տաճարի բարձրագույն օրհնությունները:

Ուսանողներին խնդրեք գտնել նախադասություններ կամ արտահայտություններ տաճարի ուխտերի և արարողությունների կարևորության մասին Նախագահ Հովարդ Վ. Հանթերի և Երեց Ռասսել Մ. Նելսոնի նկարագրություններից (տես ուսանողի ձեռնարկ, էջ 112): Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց նախադասություններով կամ արտահայտություններով:

Կարդացեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերը.

> «Հիանալի է գալ Եկեղեցի, սակայն դուք չեք կարող վեհացում ստանալ, մինչև չկապեք ուխտեր Տիրոջ տանը և ստանաք բանալիները և իշխանությունը, որոնք շնորհվում են այնտեղ, և որոնք չեն կարող տրվել այսօր երկրի վրա որևէ այլ տեղ» (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:253):

- Ինչո՞ւ պետք է միսիոներները հասկանան, որ մկրտությունն իրենց նորադարձների վերջնանպատակը չէ:

Ուսանողների հետ կարդացեք 2 Նեփի 31.17–20: Ուսանողներին խնդրեք քննարկել այն, ինչի մասին, իրենց կարծիքով, խոսվում է 20-րդ հատվածում տաճարի ուխտերի և արարողությունների մասին:

Ավարտեք ձեր վկայությամբ այն մասին, թե ինչու է կարևոր տաճարի արարողություններն արժանի ձևով ստանալը և ինչու են այդ արարողությունները կարևոր վեհացման համար:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Կազմեք այն ուխտերի ցանկը, որոնք դուք կապել եք ձեր կյանքում, և խորհեք այն մասին, թե ինչպես են դրանք ազդել ձեզ վրա և պաշտպանել ձեզ:
- Վարժվեք ուսուցանել այս թեմաներից որևէ մեկն ընտանեկան երեկոյի ժամանակ, ձեր ընկերոջը կամ հարևանին:
- Եթե դեռ չեք արել, այցելեք ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին և պատրաստվեք տաճար այցելելուն:

Գլուխ 14

ՔՐԻՍՏՈՍԱՆՄԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Քրիստոս՝ Արոր Ռասելի

Քրիստոսանման հատկանիշները օգնում են միսիոներներին արդյունավետ ուսուցանել վերականգնված ավետարանը: Երբ մենք դառնում ենք ավելի Քրիստոսանման, մենք կարողանում ենք տարածել ավետարանի լույսն ուրիշների վրա: Կրկնօրինակելով Փրկչին, մենք մեր գործերով և խոսքերով խրախուսում ենք ուրիշներին՝ «իրենց վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը» (ՎԱՌ 20.37):

Հիսուսն իր աշակերտներին ուսուցանել է. «Իմ ետևից եկեք և ես ձեզ մարդկանց որսորդ կշինեմ» (Մատթեոս 4.19):

Միսիոներները, ովքեր հետևում են Փրկչին, ապրելով Քրիստոսանման կյանքով, և ովքեր հնազանդորեն ծառայում են իրենց ողջ սրտով, մտքով և զորությամբ, դառնում են գործիք Տիրոջ ձեռքերում:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Միսիոներները ձգտում են Քրիստոսանման հատկանիշներ զարգացնել:
- Միսիոներներին պատվիրվում է ծառայել Աստծուն ողջ իրենց «սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՌ 4.2):
- Հնազանդությունը կենսական հատկանիշ է միսիոներական աշխատանքի մեջ:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Միսիոներները ձգտում են Քրիստոսանման հատկանիշներ զարգացնել:

Սկսեք, կարդալով Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.

«Մաքուր, պարզ, պայծառ աչքերով միսիոներները, աշխատելով զույգերով, ամենուրեք դարձել են Եկեղեցու կենդանի խորհրդանիշը: Նրանք ավետարանի առաջին ուղերձն են, որ իրենց հետաքրքրվողները տեսնում են, և ինչպիսի ուղերձ է դա: Բոլորը գիտեն, թե ով են իրենք» (in Conference Report, ապրիլ 2004, 30; կամ *Ensign,* May 2004, 30):

Ուսանողներին խնդրեք նշել և քննարկել արդյունավետ միսիոների հատկանիշները, որը կարող է գրավել հետաքրքրվողներին և ցանկություն առաջացնել լսելու վերականգնված ավետարանի ուղերձը: Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին:

Մի ուսանողի խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 4.5–6: Դասարանին հարցրեք այդ տողերում գտնել լրացուցիչ հատկանիշներ և ավելացնել դրանք գրատախտակի ցանկին:

Ուսանողներին խնդրեք քննարկել այն, ինչն օգնել է իրենց զարգացնել այդ հատկանիշները:

Դասարանը բաժանեք երկու փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարեք կարդալ և քննարկել մեկ հատկանիշ Վարդապետություն և Ուխտեր 4.6-ից (հավատք, առաքինություն, գիտություն, ժուժկալություն, համբերություն, եղբայրասիրություն, աստվածայնություն, գթություն, խոնարհություն և ջանասիրություն): Նրանք կարող են անդրադառնալ ուսանողի ձեռնարկին (121–126 էջեր), *Հավատքին հավատարիմ. ավետարանական վկայակոչում* (2004) գրքույկին, Սուրբ գրությունների ուղեցույցին և այլն:

Ուսումնասիրության և քննարկման համար ժամանակ տրամադրելուց հետո, յուրաքանչյուր խմբի տվեք ստորև բերված ցուցումների և հարցերի մեկական օրինակ՝ ըստ իրենց ուսումնասիրած հատկանիշների: Փոքր խմբերին խնդրեք օգտագործել իրենց հատկանիշների հարցերը և միջոցառումները՝ ամբողջ դասարանում քննարկում ծավալելու համար: Դրանք պետք է լրացնեն ցուցումները և հարցերն այն տեղեկությամբ, որն իրենք ձեռք են բերել խմբերում իրենց ուսումնասիրությունից: Նրանք պետք է ավարտեն, խրախուսելով ուսանողների դիտողություններն այն մասին, թե ինչ կարող են ուսունաղներն անել՝ անձնապես այդ հատկանիշներն ավելի լիարժեք զարգացնելու համար, և թե ինչպես դա կարող է օգնել նրանց դառնալ ավելի լավ միսիոներներ:

Հավատք. Ուսանողներին խնդրեք գտնել առնվազն մեկ սուրբ գրության հատված Նոր Կտակարանում և Մորմոնի Գրքում, որը սահմանում է հավատքը:

Երեք ուսանողների խնդրեք մտքում կարդալ ուսանողների ձեռնարկում տրված հայտարարություններից մեկը հավատքի մասին (էջ 121) և իրենց բառերով նկարագրել դասարանին, թե ինչ է այն նշանակում: Եթե հղումներ չեն կատարվել Եթեր 12, Մորոնի 7 կամ Եբրայեցիս 11 գլուխներից, ապա հետևեք, որպեսզի հրավիրեք ուշադրությունը հավատքի մասին այս հիմնարար սուրբ գրություններին:

Առաքինություն: Ուսանողների հետ կրկնեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի խոսքերը՝ ուղղված քահանայության եղբայրներին (ուսանողի ձեռնարկ, 121–122) այն մասին, որ առաքինի պահվածքը ենթադրում է, որ [քահանայություն կրողը] ունի մաքուր մտքեր և անարատ գործեր» (in Conference Report, հոկ. 1986, 60; կամ *Ensign,* Nov. 1986, 46):

- Ինչպե՞ս մենք կարող ենք մեր մտքերը մաքուր պահել:
- Երբ վատ միտք ենք ունենում, ի՞նչ մենք պետք է անենք:
- Ինչ եք կարծում, ի՞նչ է նշանակում անարատ գործեր արտահայտությունը:
- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներն իր մտքերն առաքինի պահի:

Գիտություն. Խնդրեք մի ուսանողի կարդալ բարձրաձայն Նախագահ Սթենսեր Վ. Քիմբալի խոսքերը գիտելիքի մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 122):

- Ինչպե՞ս ենք մենք որոշում, թե գիտելիքի որ բնագավառներն են էական մեզ համար:
- Ինչո՞ւ է հոգևոր գիտելիքի ձեռքբերումը համառություն և նվիրվածություն պահանջում:
- Ձեր կարծիքով, ի՞նչն է կազմում մարդու կյանքի համառությունն ու նվիրվածությունը:
- Ինչո՞ւ է գիտելիքը կարևոր միսիոների համար:

Ժուժկալություն: Ուսանողներին տվեք հետևյալ հարցերը ժուժկալության հատկանիշի մասին.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ժուժկալությունը զգացմունքների և բանավոր արտահայտման մեջ (տես ուսանողի ձեռնարկ, էջ 122):
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում անել ամեն ինչ չափի մեջ (տես ուսանողի ձեռնարկ, էջ 122):
- Ի՞նչ իրավիճակներում կարող է զսպվածությունն օգտագործվել միսիայում:

Համբերություն. Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինի խոսքերը համբերության մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 122), փնտրելով խորը ներշնչված միտք դասարանի հետ կիսվելու համար: Խրախուսեք մյուս ուսանողներին դիտողություններ անել այդ մտքերի շուրջ:

- Միսիոներական աշխատանքի ո՞ր ողողություններում է կարևոր համբերությունը:
- Ինչպե՞ս են կապված համբերությունը և հավատքը:

Եղբայրասիրություն: Ուսանողների հետ քննարկեք հետևյալ հարցերը: Խրախուսեք ավելի քան մեկ ուսանողի պատասխանել:

- Ի՞նչ է ծագում մտքում, երբ մտածում եք բարի մարդու մասին: Ի՞նչն է այդ մարդու մեջ ստիպում նրա մասին մտածել որպես բարի անձնավորության:
- Ինչպե՞ս մենք կարող ենք պարզել, թե որքան բարի ենք մենք:
- Ի՞նչ մենք կարող ենք անել այդ հատկանիշը զարգացնելու համար:

Աստվածայնություն: Աստվածայնության հետևյալ սահմանումը գրեք գրատախտակին. բացարձակ հնազանդություն Աստծո կամքին:

- Ինչպե՞ս է միսիոները դրսևորում բացարձակ հնազանդություն Աստծո կամքին:
- Մի ուսանողի խնդրեք կարդալ Մորոնի 10.31–32:
- Ինչպե՞ս ենք մենք *հրաժարվում ամեն անաստվածությունից* (Մորոնի 10.32, շեղագիրն ավելացված է):
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «սիրել Աստծուն ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով» (Մորոնի 10.32):
- Համաձայն այս հատվածի, ի՞նչն է մեզ թույլ տալիս զարգացնել աստվածայնության հատկանիշը: (Աստծո շնորհը):

Գթություն: Գրեք *գթություն* բառը գրատախտակին: Մի ուսանողի խնդրեք կարդալ գթության սահմանումը Սուրբ գրությունների ուղեցույցում (էջ 44) և գթության հատկանիշների նկարագրությունը Մորոնի 7.45–48 հատվածներում: Դասարանին խնդրեք ընդգծել առավել կարևոր արտահայտությունները: Խնդրեք նրանց կիսվել իրենց ընդգծած հատվածներով:

- Ինչպե՞ս էր Հիսուսը գթություն դրսևորում Իր մահկանացու կյանքի ընթացքում:
- Ինչպե՞ս է վերականգնված ավետարանի անկեղծ քարոզումն իսկական գթության դրսևորում հանդիսանում:
- Համաձայն Մորոնի 7.48, ինչպե՞ս մարդ կարող է գթություն ձեռք բերել;

Ուսանողներին խնդրեք կարդալ Դալլին Հ. Օուքսի խոսքերն ուսանողների ձեռնարկում (էջ 124) դարձի գալու ընթացքի մասին:

- Ըստ Երեց Օուքսի, ինչո՞ւ գթությունը երբեք չի խափանվում:
- Ո՞ւմ հանդեպ դուք պետք է գթություն ունենաք ձեր միսիայի ժամանակ:
- Ինչո՞ւ է կարևոր գթասիրտ լինել ձեր միսիոներ զուգընկերոջ հանդեպ:

Խոնարհություն: Ուսանողներին խնդրեք մտածել որևէ մեկի մասին, ում իրենք խոնարհ անձնավորություն են համարում: Նրանց խնդրեք կիսվել նրանով, թե ինչն է այդ անձի մեջ խոնարհահություն մարմնավորում:

Ուսանողներին խնդրեք գտնել *համեստություն* բառը *հավատքին հավատարիմ* գրքույկում (էջ 89): Մի ուսանողի խնդրեք կարդալ առաջին պարբերությունը, ապա ժամանակ տվեք այդ տեղեկության վերաբերյալ ուսանողների դիտողությունների համար: այնուհետև կարդացեք համեստության վերաբերյալ մնացած տեղեկությունը և խնդրեք ուսանողներին արտահայտվել:

- Ինչո՞ւ է խոնարհությունն ուժի, և ոչ թե թուլության նշան:
- Ի՞նչ է նշանակում համեստ լինել:
- Ինչպե՞ս մենք կարող ենք ճանաչել հպարտությունը:

Ջանասիրություն: Գտեք *ջանասիրություն* բառը Սուրբ գրությունների ուղեցույցում:

- Ի՞նչ է նշանակում *ջանասիրություն:*

Ջանասիրություն բառի անգլերեն հիմքում կա «հարգանք», «սեր» իմաստը:

- Ինչո՞ւ է մարդ հետևողական, անվեհեր ջանքեր թափում ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի համար, որ շատ է սիրում:
- Ջանասիրության ի՞նչ օրինակներ կարող եք հիշել Փրկչի կյանքից:
- Ինչպե՞ս կարող է ջանասիրության հատկանիշը կիրառվել միսիոներական աշխատանքում:

Ուսանողներին խնդրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 107.99 և առաջարկել ուղիներ, որոնցով այս հատվածը կարող է կիրառվել լիաժամկետ միսիոների կյանքում:

Միսիոներներին պատվիրվում է ծառայել Աստծուն ողջ իրենց «սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՈՒ 4.2):

Ուսանողներին խնդրեք ասել, թե քանի ժամ օրական պետք է միսիոները սովորի և աշխատի ամեն օր:

Մի քանի առաջարկություններից հետո ուսանողների ցույց տվեք հետևյալ օրակարգի օրինակը, որը վերցված է «Քարոզիր իմ ավետարանը» (2004; viii) գրքույկից:

6:30	Վեր կենալ, աղոթել, մարզվել 30 րոպե և պատրաստվել օրվա համար
7:30	Նախաճաշ
8:00	Անձնական ուսումնասիրություն
9:00	Ուսումնասիրություն զուգընկերոջ հետ
10:00	Աշխատանքի սկիզբ
Ճաշ	Ինչպես պատշաճ է օրվա գրաֆիկով (մեկ ժամ)
21:00	Վերադարձ բնակավայր (եթե դաս է ուսուցանվում, ապա վերադարձը 21:30-ին) և հաջորդ օրվա աշխատանքների ծրագրավորում (30 րոպե)
12:30	Քուն

(Տարածքի Նախագահության հետ խորհրդակցելով միսիայի նախագահները կարող են փոփոխել գրաֆիկն ըստ տեղական պայմանների):

Ուսանողներին խնդրեք կրկնել Վարդապետություն և Ուխտեր 4.2, 4:

- Տիպային միսիոներական ծառայության մասին մտածելիս, ինչ եք կարծում, ի՞նչ է նշանակում ծառայել Տիրոջը «ձեր ողջ սրտով, մտքով և զորությամբ»:

23 Ուսանողների հետ կարդացեք Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի բացատրությունն այն մասին, թե ինչպես են միսիոներական աշխատանքի դժվարությունները կապված Քավության հետ (տես ուսանողի ձեռնարկ, էջ 127), կամ կարող եք ցուցադրել ԹՏՍ 23 (2:14) շարժանկարը:

- Ի՞նչ ներըմբռնում ենք ստանում Երեց Հոլլանդի խոսքերից:

Մի ուսանողի խնդրեք դասարանի համար կարդալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի մեջբերումն աշխատանքի մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 00 [93]):

- Ո՞րն է միսիոներական աշխատանքի մեծագույն գաղտնիքներից մեկը:
- Ի՞նչ է պատահում, երբ միսիոներն ուսուցանում է Սուրբ Հոգով:

Հնազանդությունը կենսական հատկանիշ է միսիոներական աշխատանքի մեջ:

Մի ուսանողի խնդրեք կարդալ հրատարակչի հետ Նախագահ Հինքլիի միսիոներական փորձի հանդիպման մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 00 [120]):

- Ի՞նչ է այդ փորձառությունն ասում միսիայի նախագահի խորհրդին հետևելու առավելության մասին:

Ուսանողներին խնդրեք անդրադառնալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի խոսքերին ուսանողի ձեռնարկում, որոնք մեջբերված են Երեց Դոնալդ Լ. Ստահելիի կողմից (տես ուսանողի ձեռնարկ, էջ 127):

- Ինչպե՞ս է հնազանդին Աստծո կողմից վարձատրելու մասին Նախագահ Բենսոնի հայտարարությունը վառ արտահայտված Նախագահ Հինքլիի փորձառության մեջ:

Դասարանը բաժանեք երեք հոգուց բաղկացած խմբերի և խնդրեք նրանց սուրբ գրություններում գտնել այն մարդկանց օրինակները, ովքեր հնազանդ են եղել: Խնդրեք նրանց կիսվել իրենց բացահայտումներով և բացատրել, թե ինչպես դրանք կարելի է կիրառել լիաժամկետ միսիոներներին հանդիպող հնարավոր իրավիճակներին:

Ուսանողներին տեղեկացրեք, որ կան միսիայի կանոններ, որոնք վերաբերում են բոլոր միսիոներներին ողջ աշխարհում, և կան նաև լրացուցիչ միսիայի կանոններ, որոնք սահմանում է միսիայի նախագահը տվյալ միսիայի համար:

- Ինչո՞ւ է հնարավոր, որ տարբեր միսիաների կանոնները տարբերվեն իրարից:

Որոշ միսիայի կանոններ կարող են կապված լինել մշակութային ակնկալիքների հետ, որոնք, եթե խախտվեն, կարող են վիրավորել մարդկանց և անհարմար դրության մեջ դնել Եկեղեցին: Արտասահմանյան շատ միսիաներ տարբեր կանոններ ունեն, որոնք հատուկ են տվյալ երկրին: Ամեն դեպքում, միսիայի կանոնները գոյություն ունեն կարևոր նպատակներով:

- Երբ գործ եք ունենում միսիայի կանոնների հետ, ինչո՞ւ է ճիշտ հնազանդվել, ոչ թե հարցի տակ դնել դրանք:
- Ինչո՞ւ է միսիայի կանոններին հնազանդվելը օգնում միսիոներին ծառայել Աստծուն, ինչպես նկարագրված է Վարդապետություն և Ուխտեր 4.2-ում:

Երեց Դենիս Բ. Նյուենշվոնդերը՝ Յոթանասունից, հատուկ նշել է միսիայի կանոնների մասին (տես ուսանողի ձեռնարկ, էջ 127): Ուսանողներին խնդրեք միասին կարդալ նրա խոսքերը.

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ՝ Բոյդ Քֆ. Փաքերի ուսմունքով.

«Հետևելով կանոններին դուք երբեք լուրջ սխալ չեք կատարի: Դուք երբեք չեք կարող լուրջ սխալ կատարել միսիայում լինելիս կամ դրանից հետո, առանց նախազգուշացում ստանալու: Դուք երբեք սխալ ուղով չեք ընթանա, դուք երբեք սխալ շրջադարձ չեք կատարի կամ սխալ որոշում չեք ընդունի, *առանց նախազգուշացում ստանալու:* Դա Վերջին Օրերի Սրբի ուղին է: Դուք հաստատվել եք որպես Եկեղեցու անդամ և դուք ստացել եք Սուրբ Հոգու պարգևը՝ որպես ձեր ուղեկից և առաջնորդող, և որպես ձեր մխիթարիչ: Սուրբ Հոգին մխիթարիչ է» (“Some Things Every Missionary Should Know” [նոր միսիայի նախագահի սեմինար, հունիս 26, 2002], 12):

- Ի՞նչ առավելություններ է տալիս հնազանդությունը:
- Ինչո՞ւ միսիոները պետք է հնազանդ լինի, որպեսզի զգա Սուրբ Հոգու ազդեցությունը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Խորհեք Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելու ձեր առաջընթացի մասին: Ընտրեք մեկ-երկու հատկանիշ՝ բարելավելու համար և մշակեք բարելավման հատուկ ծրագիր:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02369 12201 8
36912 201